

**ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ
ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ 2012-2016 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ**

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետությունն անկախությանը հաջորդած առաջին իսկ տարիներից ձեռնամուխ եղավ իրավական և դատական բարեփոխումների իրականացմանը՝ ձգտելով իրավունքի գերակայության և մարդու իրավունքների ու ազատությունների երաշխավորման վրա հիմնված պետականության կայացմանը, որի կարևորագույն գրավականը և նախապայմանն է անկախ և կենսունակ իրավական և դատական համակարգերի առկայությունը:

Չնայած այդ նպատակին հասնելու ճանապարհին առաջացած բազմաթիվ մարտահրավերներին և ծառայած դժվարություններին՝ անցած երկու տասնամյակների ընթացքում Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում, դատական իշխանության և դատախազության ոլորտներում կատարվեցին շոշափելի բարեփոխումներ, որոնց արդյունքում գրանցվեց որոշակի առաջընթաց Հայաստանի Հանրապետության արդարադատության ոլորտը ժամանակակից իրավական պետության պահանջներին համահունչ դարձնելու ճանապարհին:

2005թ. նոյեմբերի 27-ին Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեջ կատարված փոփոխությունները սկիզբ հանդիսացան Հայաստանի Հանրապետությունում դատաիրավական բարեփոխումների երկրորդ փուլի իրականացման համար: Պահպանելով 1995թ. Սահմանադրությամբ նախատեսված դատական իշխանության հայեցակարգը՝ սահմանադրական բարեփոխումներն ուղղվեցին արդեն ստեղծված համակարգի կատարելագործմանը:

Սահմանադրական բարեփոխումներից հետո իշխանությունների բաժանման և դատական իշխանության անկախության հիմնարար սկզբունքներին համապատասխան անհրաժեշտ էր արդիականացնել դատարանների գործունեությունը և դատավորների կարգավիճակի հիմնարար հարցերը կանոնակարգող օրենսդրությունը, ապահովել Արդարադատության խորհրդի անկախությունը գործադիր իշխանությունից այն հաշվով, որպեսզի վերջինս ի զորու լինի երաշխավորել դատական իշխանության ինքնուրույնությունը:

Իրավական և դատական բարեփոխումների առաջնահերթ խնդիրն արդար և արդյունավետ դատական իշխանության կայացումն էր: 2006թ. հունիսի 1-ին ընդուն-

վեց «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության նոր օրենքը, որով իրավական երաշխիքներ ստեղծվեցին անձանց սահմանադրական արդարադատության իրավունքի իրացման, անհատական սահմանադրական գանձատի ինստիտուտի ներդրման, սահմանադրական դատավարության ընթացակարգերի էական կատարելագործման համար:

2007թ. փետրվարի 21-ին ընդունվեց Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրքը: Այս կողիֆիկացված ակտի ընդունմամբ լուծվեցին մի շարք առանցքային հարցեր: Մասնավորապես, առաջին անգամ համակարգային ձևով կարգավորվեցին դատական իշխանության կազմակերպման և գործունեության հետ կապված հարաբերությունները, որոնք նախկինում կարգավորվում էին առանձին օրենքներով («Արդարադատության խորհրդի մասին», «Դատարանակազմության մասին», «Դատավորի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներ), ամրագրվեցին դատավորների անկախության լրացուցիչ երաշխիքներ, էապես փոխվեց վճռաբեկ դատարանի դերն ու նշանակությունը, ըստ որի՝ վճռաբեկ դատարանի հիմնական գործառույթներից մեկը դարձավ օրենքի միատեսակ կիրառման ապահովումը, ստեղծվեց գործադիր իշխանության նկատմամբ արդյունավետ վերահսկողություն իրականացնելու կոչված մասնագիտացված դատարան՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանը, կազմավորվեց վարչական վերաքննիչ դատարանը, ձևավորվեցին դատական իշխանության ինքնակառավարման մարմիններ՝ Հայաստանի Հանրապետության դատավորների ընդհանուր ժողովը և Դատարանների նախագահների խորհուրդը, ստեղծվեց դատավորների թեկնածուների պատրաստման դպրոց (Դատական դպրոց), որի նպատակը դատավորների շրջանակը որակյալ մասնագետներով համալրելն է:

Լուրջ քայլեր ձեռնարկվեցին դատավորների նյութական և սոցիալական անկախության ամրապնդման ուղղությամբ: Չնայած տնտեսական համընդգրկուն ճգնաժամին՝ իրականացվեց Հայաստանի Հանրապետության դատավորների աշխատավարձի նշանակալի բարձրացում:

Դատաիրավական բարեփոխումների շարունակականությունն ապահովելու նպատակով 2009թ. ապրիլի 21-ին ստորագրվեց «Դատաիրավական բարեփոխումների 2009-2011թթ. ռազմավարական գործողությունների ծրագիրը և ծրագրից բխող միջոցառումների ցանկը հաստատելու, ինչպես նաև աշխատանքային խումբ ստեղծելու մասին» Հայաստանի Հանրապետության Նախագահի կարգադրությունը, որի առաջնային նպատակներ սահմանվեցին՝ անկախ, հանրության առջև հաշվետու, թափանցիկ և մատչելի արդարադատության ապահովումը, կոռուպցիոն ռիսկերի նվազեցումը, դատաիրավական համակարգի օրենսդրության և ռազմավարության բարելավումը:

Չանտեսելով կատարված բարեփոխումների արդյունքում գրանցված առաջընթացը և արդյունքները՝ դրանք չեն կարող բավարար և ամբողջական համարվել, քանի որ դեռևս լուծում չեն ստացել բազմաթիվ խնդիրներ:

Այսպես, թեև սահմանադրական փոփոխություններից հետո ընդունվեցին մի շարք նոր օրենսդրական ակտեր, այդուհանդերձ, դատաիրավական բարեփոխումներն ընդհանրապես և Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրքը՝ մասնավորապես, ամբողջությամբ չլուծեցին առկա խնդիրներից ամենակարևորը՝ արդար և արդյունավետ դատական իշխանության ապահովումը: Այդ խնդրի որոշ դրսևորումներ դեռևս առկա են ինչպես օրենսդրական, այնպես էլ գործնական մակարդակներում: Ընդ որում, անկախության սահմանափակումները թե՛ արտաքին, թե՛ ներքին ներգործության հետևանք են, իսկ դրանց պատճառներն ունեն, թե՛ գործառույթային, թե՛ կառուցակարգային բնույթ:

Բացի այդ, դատաիրավական բարեփոխումների 2009-2011թթ. ռազմավարական գործողությունների ծրագրով նախատեսված որոշ միջոցառումներ չեն կենսագործվել, որի հիմնական պատճառը համապատասխան ֆինանսական միջոցների անբավարարությունն էր: Մասնավորապես, դրանք են՝ դատական և դատախազական արխիվների վարման արդիականացմանը, դատախազությունում վարվող վիճակագրության և փորձաքննությունների որակի բարելավմանը, հանրային պաշտպանի գրասենյակի գործունեության համար շենքային պայմանների ապահովմանը:

Ֆինանսական հատկացումներից է մեծապես կախված նաև պատժի կատարման պայմանների բարելավման, քրեակատարողական հիմնարկների շենքերի կապիտալ վերանորոգման և քրեակատարողական նոր հիմնարկների կառուցման միջոցառումների իրականացումը:

Հայաստանի Հանրապետության քրեակատարողական ծառայության ենթակառուցվածքային բարեփոխումների հայեցակարգը հավանության է արժանացել 2009թ. դեկտեմբերի 10-ի Հայաստանի Հանրապետության կառավարության նիստում: 2010թ. ընթացքում ավարտվել են «Գորիս» նոր քրեակատարողական հիմնարկի նախագծանախահաշվային աշխատանքները և անհրաժեշտ հողատարածքի ձեռք բերմանն ուղղված միջոցառումները: Բացի այդ, 2008թ. սկսվել, սակայն ֆինանսների բացակայության պատճառով 2009թ. դադարեցվել է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի վերակառուցման աշխատանքները: 2011թ. Հայաստանի Հանրապետության կառավարության հանձնարարությամբ մշակվել է «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի կառուցման և մի շարք քրեակատարողական հիմնարկների գազաֆիկացման և ջեռուցման միջոցառումների նոր ծրագիրը:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ու միջազգային պայմանագրերով ամրագրված մարդու իրավունքների ու ազատությունների արդյունավետ պաշտպանությունն ապահովող դատական համակարգի ու օրենսդրության առկայությունը և դրանցով պայմանավորված՝ իրավական ու դատական բարեփոխումները շարունակում են մնալ Հայաստանի Հանրապետության գլխավոր առաջնահերթություններից մեկը:

Արդար և արդյունավետ դատական իշխանությունն իրավունքի գերակայության, արդար դատաքննության և արդյունավետ արդարադատության կարևորագույն նախադրյալներից է, որին ձգտում է մարդու իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեք հռչակած ամեն մի պետություն:

2008թ. մարտի 1-ին և 2-ին Երևան քաղաքում տեղի ունեցած հետընտրական իրադարձությունների հետ առնչվող և Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի կողմից 2008թ. ապրիլից մինչև 2009թ. հուլիսն ընկած ժամանակաշրջանում դիտարկված դատավարությունների վերաբերյալ վերջնական զեկույցը, ինչպես նաև դատական անկախության վերաբերյալ մի շարք միջազգային կազմակերպությունների փաստաթղթերի ուսումնասիրությունը թույլ տվեցին բացահայտել Հայաստանի Հանրապետության դատական իշխանության և քրեական արդարադատության ոլորտի մի շարք առանցքային խնդիրներ, որոնք ժողովրդավարական և իրավական պետությունների լավագույն ավանդույթներին համապատասխան պահանջում են համակարգային, արագ և արդյունավետ լուծումներ: Հետևաբար՝ անհրաժեշտ է ընդլայնել և խորացնել իրավական և դատական համակարգերի բարեփոխումները՝ հաշվի առնելով միջազգային կազմակերպությունների, այդ թվում նաև ԵԱՀԿ համապատասխան փաստաթղթերը:

Սակայն մեկ ուղղությամբ կատարված բարեփոխումները կարող են իմաստազուրկ կամ նվազ արդյունավետ լինել, եթե դրանցով պայմանավորված բարեփոխումներ չկատարվեն փոխկապակցված այլ ուղղություններով: Ուստի, ծրագրվող բարեփոխումներն անհրաժեշտ է կատարել համակարգային մոտեցմամբ, զուգահեռաբար բոլոր ուղղություններով՝

1) նյութական և դատավարական մի շարք օրենքների ընդունում կամ կատարելագործում՝ հիմնվելով Հայաստանի Հանրապետության փոփոխված Սահմանադրության և միջազգային լավագույն փորձի վրա.

2) դատական իշխանության, դատավորների ինքնակառավարման մարմինների, դատախազության՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխան գործառնական բարեփոխում.

3) դատական իշխանության և դատախազության կադրերի պատրաստման ու վերապատրաստման որակապես նոր ու ամբողջական համակարգի ներդրում և

իրավական պետության արդի պահանջներին համապատասխանող մտածողության ու գործելակերպի արմատավորում.

4) դատական իշխանության մատչելիության և ողջամիտ ժամկետներում գործի արդարացի դատական քննության իրավունքի համար անհրաժեշտ պայմանների ապահովում.

5) վեճերի լուծման այլընտրանքային կառուցակարգերի խթանում և հանրային ռեզիստրների վարման արդյունավետության բարձրացում.

6) բարձր մասնագիտական որակավորում ունեցող մասնագետների պատրաստմանն ուղղված իրավաբանական կրթության բարեփոխումների իրականացում:

Նշված ուղղություններով Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումներն անհրաժեշտ է կատարել նախապես հստակ սահմանված ծրագրին և ժամանակացույցին համապատասխան: Իրավական համակարգի և դատական բարեփոխումների հաջորդայնությունը և արդիականությունն ապահովելու նպատակով իրավական և դատական բարեփոխումների 2012-2016թթ. սույն ռազմավարական ծրագիրը և 2-րդ հավելվածով նախատեսված ծրագրից բխող միջոցառումների ցանկը 2014-2016թթ. ժամանակահատվածի համար կարող են համալրվել լրացուցիչ միջոցառումներով:

2. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

Ծրագրի հիմնական նպատակը Հայաստանի Հանրապետությունում ժամանակակից իրավական պետության չափանիշներին համապատասխանող իրավական համակարգի և դատական իշխանության ապահովումն է, որը ենթադրում է մասնավորապես՝

1) արդար, արդյունավետ և հանրության առջև հաշվետու դատական իշխանության ապահովում,

2) քրեական արդարադատության և քրեական պատիժների համակարգի արդյունավետության բարձրացում,

3) վարչական արդարադատության և վարչական վարույթի արդյունավետության բարձրացում,

4) քաղաքացիական արդարադատության արդյունավետության բարձրացում և քաղաքացիական օրենսդրության կատարելագործում,

5) դատավարական գործառույթների իրականացման արդյունավետության բարձրացում,

6) փաստաբանական համակարգի բարեփոխումների ապահովում,

7) դատախազության գործունեության արդյունավետության բարձրացում,

8) արբիտրաժային, նոտարական և հանրային ռեգիստրների վարման համակարգերի արդյունավետության բարձրացում,

9) իրավական համաուսուցման և իրավական դաստիարակության համակարգի վերակառուցում:

3. ԱՐԴԱՐ, ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԵՎ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԱՌՋԵՎ ՀԱՇՎԵՏՈՒ ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

Արդար, արդյունավետ և հանրության առջև հաշվետու դատական իշխանության ապահովման նպատակով անհրաժեշտ է՝

3.1. Կատարելագործել դատավորների թեկնածությունների ցուցակում ընդգրկվելու համար որակավորման ստուգման կարգը.

3.1.1. Մշակել դատավորի թեկնածուի ոչ միայն մասնագիտական գիտելիքների, այլև որպես դատավոր գործելու ունակության և արդյունավետության, տրամաբանական հմտությունների գնահատման հնարավորություն տվող կառուցակարգեր՝ հիմնված միջազգային չափանիշների, թափանցիկության ու անաչառության սկզբունքների վրա.

3.1.2. Կատարելագործել դատավորների թեկնածուների գիտելիքների և հմտությունների ստուգման արդյունքների վիճարկման կարգը.

3.1.3. Մշակել դատավորների թեկնածությունների ցուցակում ընդգրկվելու համար թեկնածուների առաջադրման թափանցիկ և օբյեկտիվ ընթացակարգեր, այդ թվում՝ վերանայել Արդարադատության խորհրդում հարցազրույցի կարգը՝ հստակեցնելով այդ փուլի խնդիրներն ու թեման:

Դատական իշխանության անկախության համատեքստում առանձնակի կարևորվում է դատական իշխանությունը պատշաճ կադրերով համալրելու խնդիրը: Եվրոպայի խորհրդի տարբեր մարմինների կողմից ընդունված մի շարք փաստաթղթերում ընդգծվում է, որ դատավորների ընտրության և առաջխաղացման վերաբերյալ որոշումները պետք է հիմնված լինեն օբյեկտիվ չափանիշների վրա, որոնք նախապես սահմանված են օրենքով կամ իրավասու մարմինների կողմից և հրապարակային են:

Դատավորի պաշտոնի առանձնահատկությունը պայմանավորում է այն հանգամանքը, որ ապագա դատավորի ընտրության չափանիշների հարցում հատուկ նշանակություն ունեն ոչ միայն նրա նեղ մասնագիտական-իրավաբանական պատրաստվածության բարձր մակարդակը, այլև որոշակի ոչ մասնագիտական որակների, այսպես կոչված «արժանիքների, բարոյահոգեբանական, անձնական հատկանիշների» կարևորությունը: Վերջիններս, բացի մասնագիտական իրավաբանական գիտելիքներից, ներառում են նաև բնավորությունը, դատողությունը, հաղորդակցման հմտությունները, ինքնատիրապետման, հեղինակության (ազդեցության) չափավոր

կիրառման հմտությունները, դատական ակտեր կայացնելու արդյունավետությունը և այլն:

Անհրաժեշտ է վերափոխել Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքով նախատեսված՝ դատավորների թեկնածուների գիտելիքների ստուգման գործընթացն այնպես, որ հնարավոր լինի գնահատել թեկնածուի ոչ միայն մասնագիտական իրավաբանական գիտելիքների մակարդակը, այլև որպես դատավոր գործելու նրա ունակությունն ու պաշտոնավարման ակնկալվող արդյունավետությունը:

Դատավորների ընտրության օբյեկտիվ չափանիշները և հստակ ընթացակարգերը անհրաժեշտ են նաև «Ֆավորիտիզմի, պահպանողականության կամ կլոնավորման» վտանգներից (Եվրոպայի դատավորների խորհրդատվական խորհրդի (CCJE) թիվ 1 կարծիք) խուսափելու համար, որը կարող է առաջանալ դատավորների ընտրության հարցում դատական իշխանությանը բացարձակ, չկանոնակարգված և սուբյեկտիվիզմի հնարավորություն տվող լիազորություններ վերապահելու արդյունքում:

Այդ իսկ պատճառով դատավորների թեկնածուների ընտրության գործընթացի օբյեկտիվության պահանջներից է ուղղակիորեն բխում Արդարադատության խորհրդում նրանց հետ հարցազրույցի խնդիրների, թեմայի և ընթացակարգերի հստակեցումը:

Ավելին, հաշվի առնելով դատավորների ընտրության ընթացակարգերի թափանցիկության ապահովման վերաբերյալ միջազգային փաստաթղթերի պահանջները՝ Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքով անհրաժեշտ է կատարելագործել դատավորների թեկնածուների որակավորման ստուգման արդյունքների հիմնավորվածության ապահովման և որակավորման գրավոր ստուգման արդյունքների վիճարկման ընթացակարգերը:

3.2. Ներդնել դատավորների գործունեության գնահատման և առաջխաղացման օբյեկտիվ չափանիշներ և ընթացակարգեր.

3.2.1. Մշակել դատավորների գործունեության գնահատման օբյեկտիվ չափանիշներ.

3.2.2. Իրականացնել դատավորների գործունեության գնահատման համակարգի ծրագրային և տեխնիկական ապահովում.

3.2.3. Առանձին դատարաններում փորձարկել դատավորների գործունեության գնահատման համակարգն ու վերացնել ծրագրային թերությունները.

3.2.1. Նախատեսել դատավորների գործունեության գնահատման արդյունքների ամփոփման, դրանք դատավորների ինքնակառավարման մարմիններում քննարկելու և դրանցից բխող ինչպես կոնկրետ դատավորների, այնպես

էլ դատարանների գործունեության արդյունավետության բարձրացման միջոցառումների մշակման կառուցակարգեր.

3.2.2. Դատավորների գործունեության գնահատման համակարգը կիրառել բոլոր դատարաններում.

3.2.3. Օրենքով հստակեցնել դատավորների առաջխաղացման չափանիշները՝ դրանց հիմքում դնելով նաև գործունեության գնահատման արդյունքները.

3.2.4. Ամրապնդել դատական դեպարտամենտի տեխնիկական և սպասարկող անձնակազմի կարողությունները:

Դատավորների գործունեության գնահատման համակարգի ներդրման անհրաժեշտությունը սահմանված է բազմաթիվ միջազգային փաստաթղթերով՝ ընդգծելով դրա կարևորությունն արդարադատության իրականացման արդյունավետությանը և դրա որակի շարունակական բարելավմանը նպաստելու հարցում: Դատավորների գործունեության գնահատումը կարևոր է դատավորների ինքնավերլուծությունը խթանելու, դատավորների աշխատանքի արդյունավետությունը բարելավելու ուղիները մատնանշելու և առաջխաղացման համար լավագույն թեկնածուների ընտրությանն աջակցելու համար: Ավելին, այն կարևոր խթան է ժողովրդավարական հասարակություններում դատական իշխանության նկատմամբ վստահության բարձրացման համար:

Դատավորների գործունեության գնահատումը պետք է իրականացվի օբյեկտիվ չափանիշների հիման վրա՝ նրանց արտաքին և ներքին անկախության լիակատար պահպանմամբ:

Դատավորների գործունեության գնահատման չափանիշները պետք է հիմնականում առնչվեն նրանց աշխատանքի արդյունավետությանը (քննված գործերի քանակ ու որակ), ինչպես նաև վարչական աշխատանքների կատարման, մասնագիտական վարքագծի կանոնների պահպանման և այլ հանգամանքներին:

Դատավորների գործունեության գնահատման չափանիշների վերաբերյալ միջազգային փորձի ուսումնասիրության հիման վրա անհրաժեշտ է մշակել դատավորների գործունեության գնահատման համակարգ, որը կարևորվում է ոչ միայն Արդարադատության խորհրդի կողմից դատավորների առաջխաղացման ցուցակները կազմելու և դատավորներին առաջխաղացման ներկայացնելու, նրանց որպես դատարանի նախագահ նշանակելու գործընթացների, այլև՝ դատավորի աշխատանքի արդյունավետությունը, գործերի ողջամիտ ժամկետում քննությունն ապահովելու տեսանկյունից:

Միևնույն ժամանակ դատավորների գործունեության գնահատումը չպետք է հիմնվի դատավորի կողմից կայացվող ակտերի բեկանման ցուցանիշների վրա, իսկ բեկանումներն ինքնին չպետք է հանգեցնեն դատավորի մասնագիտական որակների վերաբերյալ եզրահանգման, բացառությամբ այն դեպքերի, երբ գնահատումից

ակնհայտ է, որ դատավորը օրենքի սխալ կիրառման է հանգել իր քննած գործերի մեծ մասում:

Դատավորների գործունեության գնահատման համակարգի արդյունավետ գործառնությունն ապահովելու համար անհրաժեշտ է միջոցառումներ ձեռնարկել Դատական դեպարտամենտի համապատասխան տեխնիկական և սպասարկող անձնակազմի կարողությունների բարելավման ուղղությամբ: Դատավորների առաջխաղացման գործընթացի օբյեկտիվության տեսանկյունից անհրաժեշտ է նաև օրենքով հստակեցնել դատավորների առաջխաղացման չափանիշները:

3.3. Ներդնել դատավորների ինքնակառավարման առավել արդյունավետ մոդել.

3.3.1. Վերանայել դատավորների ինքնակառավարման մարմինների կառուցվածքը, փոխհարաբերությունները, կազմը և գործառույթները՝ ապահովելով դատավորների ներքին անկախությունը և նպաստելով դատական իշխանության ինքնակառավարման երաշխիքների զարգացմանը.

3.3.2. Ապահովել դատավորների առավելագույն մասնակցություն սեփական ինքնակառավարմանը և նախատեսել նույն դատավորի կողմից, բացի ընդհանուր ժողովից, միաժամանակ ինքնակառավարման մի քանի այլ մարմիններում ընդգրկված լինելու ողջամիտ սահմանափակումներ.

3.3.3. Ուսումնասիրել առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների նախագահների պաշտոնավարման ժամկետի սահմանափակում ներդնելու նպատակահարմարությունը՝ դատարանների նախագահների լիազորությունների սահմանափակման համատեքստում:

Ներկայումս դատական իշխանության ինքնակառավարման մարմիններն են Հայաստանի Հանրապետության դատավորների ընդհանուր ժողովը, որը կազմված է Հայաստանի Հանրապետության բոլոր դատավորներից, և Դատարանների նախագահների խորհուրդը, որի անդամներն են առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների նախագահները, վճռաբեկ դատարանի և նրա պալատների նախագահները:

Դատական իշխանության ինքնակառավարման և դատավորի ներքին անկախության ապահովման տեսանկյունից անհրաժեշտ է ինքնակառավարման մարմինների այնպիսի համակարգի ապահովումը, ինչպես նաև զսպումների և հակակշիռների համատեքստում նրանց գործառույթների այնպիսի տարանջատումը, որը հնարավորություն կտա բոլոր դատավորներին մասնակցելու դատական իշխանությանը վերաբերող էական հարցերի լուծմանը: Դատավորի անկախության սկզբունքի առանցքային տարր է ոչ միայն նրա անկախությունն արտաքին միջամտությունից, այլև ներքին անկախությունը, հատկապես՝ դատարանի նախագահից և վերադաս դատարանի դատավորներից:

Դատական օրենսգրքով նախատեսված դատական իշխանության ինքնակառավարման մշտապես գործող մարմինը բացառապես դատարանների նախագահներ-

րից կազմված դատարանների նախագահների խորհուրդն է, որին վերապահված է դատական ինքնակառավարման բնագավառում առանցքային գործառույթների զգալի մասը: Այս մարմնի կազմից են ձևավորվում նաև էթիկայի և ուսումնական հարցերով հանձնաժողովները: Արդյունքում դատական իշխանության ինքնակառավարման գործառույթները կենտրոնացված են մեկ մարմնում, ավելին՝ իրականացվում են միջնորդավորված՝ դատարանների նախագահների կողմից: Ինքնակառավարման նման կենտրոնացումը համահունչ չէ դատավորի անկախության և դատական իշխանության ինքնակառավարման սկզբունքի հետ: Անհրաժեշտ է վերանայել դատական իշխանության ինքնակառավարման մարմինների համակարգն այն հաշվով, որ հնարավոր լինի ապահովել դատավորների ներքին անկախությունը դատարանների նախագահներից:

Դատավորների առավելագույն մասնակցությունը դատական իշխանությանը վերաբերող էական հարցերի լուծումն ապահովելու նպատակով անհրաժեշտ է հնարավորինս սահմանափակել նույն դատավորի կողմից ընդհանուր ժողովից բացի միաժամանակ մի քանի այլ ինքնակառավարման մարմիններում ընդգրկված լինելու հնարավորությունը:

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների նախագահները նշանակվում են մշտական հիմունքներով՝ մինչև պաշտոնավարման տարիքը լրանալը: Նման մոտեցումը կարող է հանգեցնել դատարանի նախագահի պաշտոնի և դատարանում նրա ազդեցության անհարկի ուճացման՝ գործնականում խաթարելով դատավորների անկախության և հավասարության սահմանադրական պահանջի էությունը: Անհրաժեշտ է ուսումնասիրել Հայաստանի Հանրապետությունում դատարանների նախագահների պաշտոնավարման սահմանափակ ժամկետ ներդնելու անհրաժեշտությունը՝ միջազգային զարգացումների և մոտեցումների համատեքստում:

3.4. Բարեփոխել դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու ընթացակարգերը և հիմքերը՝ կարգապահական վարույթի օբյեկտիվության, արդարության, արդյունավետության և հրապարակայնության երաշխավորմամբ.

3.4.1. Տարանջատել դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցող և կարգապահական տույժի վերաբերյալ որոշում կայացնելու իրավասություն ունեցող սուբյեկտներին՝ որպես կարգապահական վարույթ հարուցող սուբյեկտներ նախատեսելով արդարադատության նախարարին ու դատավորների էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովին, վճռաբեկ դատարանի պալատի դատավորի և պալատի նախագահի նկատմամբ՝ վճռաբեկ դատարանի նախագահին, իսկ էթիկայի կանոնների խախտման հիմքով՝ նաև դատավորների էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովին.

3.4.2. Ուսումնասիրել հարուցված կարգապահական վարույթի շրջանակներում դատավորի անկախության և պաշտպանվածության օրենսդրական երաշխիքների ամրապնդման հարցը.

3.4.1. Ուսումնասիրել Արդարադատության խորհրդի նիստերի դռնբացության խնդիրը՝ ըստ անհրաժեշտության նախատեսելով օրենսդրական փոփոխություններ.

3.4.2. Հստակեցնել դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերը՝ հնարավորինս բացահայտելով նյութական և դատավարական օրենքների ակնհայտ և կոպիտ խախտումների բովանդակությունը.

3.4.3. Ուսումնասիրել նյութական կամ դատավարական օրենքի նորմի ակնհայտ և կոպիտ խախտման համար դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին Արդարադատության խորհրդի որոշումը՝ որպես նոր երևան եկած հանգամանք նախատեսելու հարցում միջազգային փորձը և սահմանել անհրաժեշտ կարգավորումներ:

Կարգապահական վարույթում արդարության երաշխիքների ապահովման նպատակով անհրաժեշտ է, որպեսզի Արդարադատության խորհուրդը միաժամանակ օժտված չլինի հետևյալ երկու լիազորություններով՝ կարգապահական վարույթի հարուցում և կարգապահական տույժի վերաբերյալ որոշման կայացում: Մեկ մարմնի ձեռքում կարգապահական վարույթի հարուցման և դրա արդյունքում դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու լիազորությունների կենտրոնացումն էականորեն նվազեցնում է այդ վարույթի օբյեկտիվությունը և արդարությունը: Հետևաբար՝ այդ լիազորությունների արդյունավետ իրականացման համար դրանցով պետք է օժտված լինեն տարբեր մարմիններ, ինչը ներկայիս կարգավորման համեմատ կապահովի առավել արդար կարգապահական ընթացակարգ:

Որպես կարգապահական վարույթ հարուցող սուբյեկտներ անհրաժեշտ է նախատեսել արդարադատության նախարարին ու դատավորների էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովին, իսկ Արդարադատության խորհուրդը հարուցված վարույթի արդյունքում պետք է որոշում կայացնի դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու կամ հարուցված կարգապահական վարույթի հիման վրա դատավորին պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ դիմումը մերժելու մասին: Վճռաբեկ դատարանի պալատի դատավորի և պալատի նախագահի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու իրավունքը պետք է շարունակի պահպանել միայն վճռաբեկ դատարանի նախագահը, իսկ էթիկայի կանոնների խախտման հիմքով՝ նաև դատավորների էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովը: Այդուհանդերձ, պետք է բացառել վճռաբեկ դատարանի դատավորի նկատմամբ նյութական իրավունքի խախտման հիմքով կարգապահական վարույթ հարուցելու հնարավորությունը:

Միաժամանակ անհրաժեշտ է բացառել վճռաբեկ դատարանի գերակա դերը դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու գործընթացում: Վերադաս դատարանի որոշումը չպետք է հանդիսանա դատավորի կարգապահական վարույթը կանխորոշող հանգամանք: Օրենքի ակնհայտ և կոպիտ խախտման հանգամանքը պետք է բացահայտվի միայն կարգապահական վարույթի ընթացքում, այլ ոչ թե հաստատված լինի վերադաս դատարանի որոշմամբ, ինչը կանխորոշում է կարգապահական վարույթի ընթացքը և դրա արդյունքում Արդարադատության խորհրդի որոշումը՝ հանգեցնելով վերջինիս սահմանադրական լիազորությունների խաթարմանը: Վճռաբեկ դատարանը չպետք է օժտված լինի կարգապահական վարույթի ընթացքի վրա ներգործելու որևէ լիազորությամբ, քանի որ դա անհամատեղելի է վճռաբեկ դատարանի սահմանադրական կարգավիճակի հետ:

Անհրաժեշտ է ուսումնասիրել միջազգային փորձը դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելիս Արդարադատության խորհրդի նիստերը դռնբաց անցկացնելու վերաբերյալ՝ ըստ դրա արդյունքների կատարելով անհրաժեշտ օրենսդրական փոփոխություններ:

Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքով դատավորի նկատմամբ կարգապահական վարույթի հարուցման հիմք է արդարադատություն իրականացնելիս նյութական կամ դատավարական օրենքի, այդ թվում՝ Սահմանադրության նորմի ակնհայտ և կոպիտ խախտումը: Այդուհանդերձ, Դատական օրենսգրքում չի բացահայտվում «ակնհայտ և կոպիտ» խախտման բովանդակությունը, ինչը դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը լուծելիս հանգեցնում է տարատեսակ մեկնաբանությունների: Դատավորներին օրենքների ակնհայտ և կոպիտ խախտման հիմքով կարգապահական պատասխանատվության ենթարկելու պրակտիկայի միասնականությունն ապահովելու համար անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում հնարավորինս հստակեցնել Հայաստանի Հանրապետության ակնհայտ և կոպիտ խախտումը գնահատելու չափանիշները:

Օրենքի մեկնաբանությունը, փաստերի գնահատումը և ապացույցների գնահատումը չի կարող առաջ բերել կարգապահական պատասխանատվություն, բացառությամբ այն դեպքերի, երբ դատավորը թույլ է տվել դիտավորություն կամ կոպիտ անփութություն: Դատավորները պետք է ենթարկվեն կարգապահական պատասխանատվության, եթե իրենց պարտականությունները չեն կատարում պատշաճ կերպով և վտանգում են դատական իշխանության հեղինակությունը: Դատավորի նկատմամբ կիրառված պատասխանատվության միջոցը պետք է լինի համաչափ թույլ տրված խախտմանը:

Միևնույն ժամանակ, միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքներով անհրաժեշտ է կարգավորել նյութական օրենքի խախտման հիմքով դատավորի

կարգապահական պատասխանատվության հարցերն այն դեպքերում, երբ դատական ակտը չի բողոքարկվել վերադաս դատարան կամ այդ հիմքով չի բեկանվել վերադաս դատարանի կողմից:

Անհրաժեշտ է ուսումնասիրել նյութական կամ դատավարական օրենքի նորմի ակնհայտ և կոպիտ խախտման համար դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին Արդարադատության խորհրդի որոշման հիման վրա համապատասխան դատական ակտը վերանայելու վերաբերյալ միջազգային փորձը և նախատեսել համապատասխան կարգավորումներ:

3.5. Ապահովել էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի գործունեության արդյունավետությունն ու թափանցիկությունը.

3.5.1. Մշակել էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի գործունեության ընթացակարգային կանոնները.

3.5.1. Ապահովել էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի որոշումների մատչելիությունը դատավորների համար.

3.5.2. Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի իրավասության շրջանակներում նախատեսել խորհրդատվական գործունեության միջոցով դատավորների վարքագծի կանոնների խախտումը կանխարգելող լիազորություններ.

3.5.3. Վերապատրաստել էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի անդամներին դատավորի վարքագծի կանոնների պահպանումն ապահովելու և խախտումները գնահատելու կարողությունները զարգացնելու նպատակով:

Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովն առանցքային դերակատարում պետք է ունենա դատավորի վարքագծի կանոնների պահպանման մշակույթի տարածման և պահպանումն ապահովելու հարցերում: Հանձնաժողովի գործունեության թափանցիկությունը և կանխատեսելիությունն ապահովելու տեսանկյունից անհրաժեշտ է մշակել էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի գործունեության ընթացակարգային կանոններ, ձեռնարկել այլ դատավորների համար էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի որոշումների մատչելիությունն ապահովող միջոցառումներ, նախատեսել այնպիսի մեխանիզմներ, որոնց միջոցով էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովն ունակ կլինի դատավորների վարքագծի կանոնների վերաբերյալ խորհրդատվություն տրամադրել դատավորներին:

3.6. Բնակչության թվին և դատավորների ծանրաբեռնվածությանը համապատասխան հավասարակշռել դատավորների թվաքանակը.

3.6.1. Համեմատական վիճակագրության և դատավորների ծանրաբեռնվածության գիտական հիմնավորման հիման վրա իրականացնել ուսումնասիրություն՝ բնակիչների թվի և ընդհանուր դատական գործերի հաշվով դատա-

վորների քանակի և դատավորների ծանրաբեռնվածության հաշվառմամբ նրանց թվի ավելացման կամ հավասարակշռման առաջարկությունների ներկայացման համար.

3.6.2. Իրականացնել դատավորների թվաքանակի հավասարակշռման կամ ավելացման համար անհրաժեշտ օրենսդրական փոփոխություններ (ըստ ուսումնասիրության արդյունքներով հաստատված անհրաժեշտության):

Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքով նախատեսված դատավորների թվակազմը՝ ըստ դատարանների, գործնականում խնդրահարույց է առանձին դատարանների գերծանրաբեռնվածության, իսկ մյուսներում՝ գործերի համեմատաբար նվազ քանակի պատճառով: Անհրաժեշտ է կատարել համեմատելի դատարանակազմություն ունեցող երկրների փորձի, բնակչության թվին համարժեք՝ մեկ դատավորին բաժին ընկնող դատական գործերի հաշվով դատավորների քանակի և դատավորների ծանրաբեռնվածության ուսումնասիրություն: Դրա արդյունքում, ըստ անհրաժեշտության, անհրաժեշտ է վերանայել և հավասարակշռել կամ ավելացնել դատավորների թվակազմը:

3.7. Կատարելագործել դատավորների և դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման, դատավորների, դատախազների, դատական ծառայողների, դատախազության աշխատակազմում պետական ծառայողների վերապատրաստման ընթացակարգերը.

3.7.1. Դատական իշխանության և դատախազության կադրերի պատրաստման և վերապատրաստման համար հիմնադրել Արդարադատության ակադեմիա և դրա գործունեությունը կարգավորել համապատասխան օրենքով.

3.7.2. Դատավորների և դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման շրջանակներում ընդլայնել փորձաշրջանի տևողությունը և կանոնակարգել փորձաշրջանի բովանդակությանը ներկայացվող պահանջները.

3.7.3. Դատավորների և դատախազների վերապատրաստման ծրագրերի շրջանակներում ներառել որպես դատավոր և դատախազ գործելու մասնագիտական հմտությունների զարգացմանը, ինչպես նաև օրենսդրական և դատավարական զարգացումների, դատական պրակտիկային վերաբերող թեմաներով դասընթացներ.

3.7.4. Սերտացնել դատախազների, դատավորների և փաստաբանների միջև համագործակցությունը՝ համատեղ վերապատրաստման դասընթացների և այլ համատեղ միջոցառումների կազմակերպման և իրականացման միջոցով:

Դատական իշխանության և դատախազության հեղինակությունը, գործունեության արդյունավետությունը մեծապես պայմանավորված են դրանցում ներգրավված կադրերի հատուկ մասնագիտական պատրաստվածությամբ և շարունակական

վերապատրաստմամբ: Պրոֆեսիոնալ կադրերի առկայությունը պահանջում է պետության կողմից համապատասխան պայմանների ապահովում՝ դատական իշխանության և դատախազության կադրերի կրթումը և վերապատրաստումը իրատեսական դարձնելու համար: Դատական իշխանության և դատախազության համար կադրերի պատրաստման և վերապատրաստման հարցում մեկ միասնական կառույցի գործառնության գաղափարը համահունչ է ժամանակակից միջազգային զարգացումներին և դրա արդյունավետությունը ընդգծվում է մի շարք միջազգային փաստաթղթերում: Համատեղ ուսուցման կազմակերպումը ունի մի շարք առավելություններ ռեսուրսների օպտիմալ կառավարման և տնտեսման, դատավորի և դատախազի թեկնածուների, ինչպես նաև գործող դատավորների և դատախազների մասնագիտական մերձեցման, կադրերի պատրաստման բնագավառում միասնական գաղափարախոսության զարգացման և կրթական մեթոդոլոգիայի կատարելագործման առումներով:

Դատական իշխանության և դատախազության համար կադրերի մասնագիտական պատրաստման և գործող դատավորների, դատախազների վերապատրաստման ողջ գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ է Արդարադատության ակադեմիայի հիմնադրում և դրա գործունեության հետ կապված հասարակական հարաբերությունների համալիր, համակարգված կարգավորում համապատասխան օրենքով:

Արդարադատության ակադեմիան կիրականացնի նաև դատական ծառայողների, դատախազության աշխատակազմում պետական ծառայողների և դատական կարգադրիչների վերապատրաստումը:

Դատավորների և դատախազների թեկնածուների մասնագիտական պատրաստման գործընթացի առանցքային մասը պետք է կազմի դատարաններում և դատախազությունում փորձաշրջանի անցկացումը: Այս առումով անհրաժեշտ է օրենքով սահմանել դատավորների և դատախազների թեկնածուների մասնագիտական պատրաստման մաս կազմող փորձաշրջանի նվազագույն տևողությունը և փորձաշրջանի բովանդակությանը ներկայացվող նվազագույն պահանջները: Դատավորների և դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստում իրականացնող հաստատության կողմից պետք է հստակ սահմանվեն փորձաշրջանի անցկացման կարգը, փորձաշրջանի բովանդակության ուղենիշները, փորձաշրջանի գնահատման չափանիշները:

Ինչպես դատավորների և դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական կրթությունը, այնպես էլ դատավորների և դատախազների վերապատրաստումը պետք է ուղղված լինի ոչ միայն նեղ մասնագիտական-իրավաբանական գիտելիքներ հաղորդելուն, այլև որպես դատավոր կամ դատախազ արդյունավետ գործելու, դատարանում հանդես գալու, գործերը կառա-

վարելու, մարդկանց հետ հաղորդակցվելու համար անհրաժեշտ այլ գիտելիքների, հմտությունների ուսուցմանը: Դատական իշխանությունը և դատախազությունը մասնագիտական բարձր պատրաստվածություն ունեցող կադրերով ապահովելու տեսանկյունից առանձնակի կարևորություն ունի դատավորների, դատախազների, դատական ծառայողների, դատախազության աշխատակազմում պետական ծառայողների շարունակական վերապատրաստման արդյունավետ տարեկան ծրագրերի իրականացումը: Մասնավորապես, դատավորների և դատախազների վերապատրաստման ծրագրերի շրջանակներում անհրաժեշտ է ընդգրկել օրենսդրական և դատավարական զարգացումներին, դատական պրակտիկային վերաբերող թեմաներ:

Միևնույն ժամանակ, վերապատրաստման ծրագրերի շրջանակում անհրաժեշտ է սերտացնել դատավորների, դատախազների և փաստաբանների միջև համագործակցությունը և շփումը՝ համատեղ վերապատրաստման դասընթացների, գիտաժողովների և այլ միջոցառումների կազմակերպման և իրականացման միջոցով: Անհրաժեշտ է մշակել դատախազների, դատավորների և փաստաբանների համատեղ վերապատրաստման դասընթացներ, ձեռնարկել դատախազների, դատավորների և փաստաբանների համատեղ մասնակցությամբ կլոր սեղան-քննարկումներ, սեմինարներ, նրանց միջև համագործակցությունը և շփումը խթանող այլ միջոցառումներ:

3.8. Կատարելագործել դատավորների միջև գործերի օբյեկտիվ (պատահական) բաշխման համակարգը.

3.8.1. Օրենքով սահմանել դատավորների միջև գործերի բաշխման ընդհանուր օբյեկտիվ չափանիշները.

3.8.2. Չարգացնել գործերի օբյեկտիվ (պատահական) բաշխման ծրագրային և տեխնիկական ապահովումը, վերացնել ծրագրային թերությունները.

3.8.3. Գործերի օբյեկտիվ (պատահական) բաշխման ծրագիրն ամբողջությամբ կիրառել բոլոր դատարաններում:

Դատավորների միջև գործերի պատահական բաշխման համակարգի ներդրումը դատավորների անկախության ապահովման կարևոր բաղադրիչներից է: Նման համակարգի առկայությունը հնարավորություն է տալիս գործերի բաշխումն իրականացնել նախօրոք սահմանված օբյեկտիվ չափանիշների հիման վրա՝ խուսափելով այդ հարցում սուբյեկտիվ մոտեցումներից: Դրանով հնարավոր է դառնում խուսափել դատարանների նախագահների կողմից սեփական հայեցողությամբ դատավորների միջև գործեր բաշխելու հնարավորությունից: Սա պայմանավորված է օրինական դատավորի սահմանադրական սկզբունքով, որն ածանցվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 1-ին և 19-րդ հոդվածներից:

Ըստ այդմ՝ դատավորների միջև գործերի բաշխումը պետք է իրականացվի օրենքով կանխորոշված օբյեկտիվ չափորոշիչների հիման վրա: Ներկայումս Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 72-րդ հոդվածի 3-րդ մասի 19-րդ

կետի համաձայն՝ դատարանների նախագահների խորհրդի կողմից են մշակվում և հաստատվում «առաջին ատյանի դատարաններում գործերի բաշխման, վերաքննիչ դատարաններում դատական կազմերի և դրանցում նախագահող դատավորների նշանակման, դատավորների ինքնաբացարկի, դատավորների գործուղման, արձակուրդի կամ հիվանդության դեպքում դատարանի նախագահի և դատավորների փոխարինման կարգերը»: Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի նշված դրույթի հիման վրա դատարանների նախագահների խորհուրդը հաստատել է դատարաններում գործերի բաշխման պատահական ընտրության վերաբերյալ կարգ: Այդուհանդերձ, օրինական դատավորի սահմանադրական սկզբունքը երաշխավորելու տեսանկյունից անհրաժեշտ է գործերի բաշխման առանցքային, ընդհանուր կանոնները սահմանել օրենքի մակարդակով, որի հիման վրա դրանց հետագա մանրամասնումը կարող է նախատեսվել այլ ակտերով: Ի լրումն օրենսդրական փոփոխությունների, անհրաժեշտ է իրականացնել նաև համապատասխան ծրագրային և տեխնիկական ապահովում, և գործերի բաշխումն իրականացնել հատուկ համակարգչային ծրագրի միջոցով:

3.9. Միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքներով ներդնել դատական իշխանության կողմից իր գործունեության վերաբերյալ հաշվետվությունների հրապարակման համակարգ:

Արդարադատության համակարգի արդյունավետության, հանրության առջև հաշվետվողականության ապահովման նպատակով անհրաժեշտ է ներդնել դատական իշխանության կողմից պարբերաբար հաշվետվություններ հրապարակելու համակարգ: Նման հաշվետվությունները դատական իշխանության նկատմամբ հանրային մոնիթորինգի կարևոր մեխանիզմ են: Դատարանների գործունեության արդյունքները և աշխատանքի որակը հանրությանը ներկայացնելու համար տարբեր երկրներում կիրառվում են մոնիթորինգի տարբեր համակարգեր: Նշված տարբերությունները կապված են հաշվետվությունների ներկայացման հաճախականության (օրինակ՝ եռամսյակային, կիսամսյակային, տարեկան և այլն), պատասխանատու մարմինների, ինչպես նաև մոնիթորինգի ենթակա տեղեկատվության տեսակի հետ: Միջազգային պրակտիկայում առավել հաճախ կիրառվող ցուցանիշներն են՝ ստացվող դատական գործերի քանակը, վարույթի տևողությունը (առաջին, վերաքննիչ և (կամ) բոլոր ատյանների դատարաններում), հետաձգված դատական գործերի քանակը, ընթացիկ դատական գործերի քանակը, գործն ըստ էության լուծող որոշումների քանակը, դատավորների և դատարանների ծանրաբեռնվածության մակարդակը, դատարանի բյուջետային միջոցներն ու ծախսերը:

Դատարանների և դատավորների կողմից հաշվետվությունների պարտադիր ներկայացման սկզբունքի ներդրումը կնպաստի հանրության առջև դատական իշխանության թափանցիկության, հաշվետվողականության և արդյունավետության

բարձրացմանը, դատավորի գործունեության առավել օբյեկտիվ գնահատմանը և արդյունավետ գործունեության խրախուսմանը:

3.10. Կատարելագործել դատավարական իրավունքների չարաշահման և դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի դեմ ուղղված նորմերը.

3.10.1. Ուսումնասիրել դատավարական իրավունքների չարաշահման և դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի հարցում միջազգային փորձը.

3.10.2. Նախատեսել համապատասխան կարգավորումներ դատավարական իրավունքների չարաշահման և դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի դեմ (ըստ անհրաժեշտության):

Արդյունավետ արդարադատության և դատական իշխանության հեղինակության ապահովման տեսանկյունից կարևոր խնդիր է շարունակում մնալ դատական սանկցիաների գործուն համակարգի նախատեսումը: Չնայած Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում և դատավարական օրենսգրքերում տեղ գտած համապատասխան նորմերին, դատարան ներկայանալուց չարամտորեն խուսափելու, դատավարական իրավունքներից անբարեխղճորեն օգտվելու կամ դատավարական պարտականություններն անհարգելի չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, նիստի կարգը խախտող գործողություն կատարելու միջոցով դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելու համար նախատեսված սանկցիաների համակարգը թույլ չի տալիս գործնականում համարժեք լուծումներ տալ ստեղծվող իրավիճակներին: Խնդրահարույց են մնում պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ համապատասխանաբար Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին կամ Փաստաբանական պալատ դատարանի կողմից դիմելու արդյունքները:

Դատավորի անկախությունը բացառում է նրա որոշումների վրա ցանկացած արտաքին միջամտությունը: Այդ առումով խնդրահարույց է մնում դատարանում քննվող գործի կամ դատարանի որոշման վերաբերյալ պաշտոնատար անձանց կողմից կոշտ հրապարակային կարծիք արտահայտելու միջոցով դատարանի նկատմամբ անթույլատրելի ներգործության կարգավորումն այն հաշվով, որպեսզի մի կողմից չվտանգվի խոսքի ազատությունը, իսկ մյուս կողմից՝ դատավորները պաշտպանված լինեն հնարավոր ճնշումներից:

3.11. Բարելավել դատարաններում տեղեկատվական և հաղորդակցային տեխնոլոգիաների կիրառումը՝ ապահովելով գործերի արագ շրջանառությունը մեկ ատյանի դատարանից մեկ այլ ատյանի դատարան.

3.11.1. Մշակել դատարանների կողմից քննվող գործերում առկա փաստաթղթերի թվայնացման սկզբունքներն ու մեխանիզմները.

3.11.2. Իրականացնել փաստաթղթերի թվայնացման համար անհրաժեշտ ծրագրային և տեխնիկական ապահովում.

3.11.3. Առանձին դատարաններում փորձարկել փաստաթղթերի թվայնացման համակարգն ու վերացնել ծրագրային թերությունները.

3.11.4. Փաստաթղթերի թվայնացման համակարգն ամբողջությամբ կիրառել բոլոր դատարաններում.

3.11.5. Իրականացնել դատավորների և դատական ծառայողների վերապատրաստում՝ փաստաթղթերի թվայնացման համակարգի կիրառման թեմայով:

Տեխնոլոգիական առաջընթացը և էլեկտրոնային ստորագրության ինստիտուտի զարգացումը հնարավորություն է ընձեռում ապահովել գործերի առցանց ներկայացումը դատարան և փաստաթղթաշրջանառությունը էլեկտրոնային միջոցների օգնությամբ: Դա հնարավորություն կտա խնայել ժամանակ և միջոցներ ինչպես հայցերի ներկայացման, այնպես էլ գործերը դատարանից դատարան փոխանցելու ընթացքում: Անհրաժեշտ է սահմանել դատարանների կողմից քննվող գործերում առկա փաստաթղթերի թվայնացման սկզբունքներն ու մեխանիզմները, ինչպես նաև իրականացնել դատավորների և դատական ծառայողների վերապատրաստում՝ փաստաթղթերի թվայնացման համակարգի կիրառման թեմայով:

3.12. Մշակել և ներդնել Հայաստանի Հանրապետության դատական իշխանության ֆինանսավորման առավել արդյունավետ մոդել՝ եվրոպական չափանիշներին և լավագույն փորձին համապատասխան.

3.12.1. Կատարել դատական իշխանության ֆինանսավորման մոդելների հարցում եվրոպական չափանիշների և լավագույն փորձի ուսումնասիրություն.

3.12.2. Ներդնել դատական իշխանության ֆինանսավորման առավել արդյունավետ մոդել:

Դատական իշխանության ֆինանսական անկախությունն ամրապնդելու նպատակով անհրաժեշտ է մշակել և ներդնել դատական իշխանության ֆինանսավորման առավել արդյունավետ մեխանիզմ, որը թույլ կտա համակողմանիորեն գնահատել դատական իշխանության կարիքները, կանխատեսել դրանց ֆինանսավորման հնարավորությունները, ընդլայնել դատական իշխանության ֆինանսավորման աղբյուրները՝ խթանելով դատական իշխանության գործունեության արդյունավետությունը:

4. ՔՐԵԱԿԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԻԺՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ

Քրեական արդարադատության և քրեական պատիժների համակարգի արդյունավետության բարձրացման նպատակով անհրաժեշտ է.

4.1. Մշակել Հայաստանի Հանրապետության նոր քրեական օրենսգիրք.

4.1.1. Ընդունել «Հայաստանի Հանրապետության նոր քրեական օրենսգրքի հայեցակարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում.

4.1.2. Մշակել Հայաստանի Հանրապետության նոր քրեական օրենսգրքի նախագիծ:

2003թ. օգոստոսի 1-ին գործողության մեջ դրված քրեական օրենսգիրքը Հայաստանի Հանրապետությունում իրականացված դատաիրավական բարեփոխումների արդյունքում ընդունված կարևոր իրավական ակտերից է: Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի ընդունումից հետո դրանում կատարվեցին մոտ 100 օրենսդրական փոփոխություններ և լրացումներ, որոնց զգալի մասն ամբողջական չէին և կրում էին դրվագային բնույթ՝ առանց հաշվի առնելու օրենսգրքի ընդհանուր տրամաբանությունը և կառուցվածքը: Արդյունքում գործող քրեական օրենսգրքում առկա են բազմաթիվ օրենսդրական բացեր և թերի կարգավորումներ: Մասնավորապես, հստակ կարգավորումներ նախատեսված չեն իրավաբանական և փաստական սխալների որակման, քրեաիրավական նորմերի մրցակցության և քրեական իրավունքի մի շարք այլ հնստիտուտների վերաբերյալ:

Որպես որոշ հանցակազմերի հատկանիշ նախատեսված են գնահատման ենթակա հասկացություններ (ծանր հանգամանքներ, էական վնաս և այլն), որոնց բովանդակությունը օրենսդրորեն հստակեցված չէ և նախատեսված չեն դրանք կանխորոշող չափանիշներ: Բազմաթիվ հանցակազմերի մեջ առկա են մեղքի ձևի կամ հանցակազմերի օբյեկտիվ կողմի բնորոշումների և նկարագրությունների սխալներ:

Պատիժը պայմանականորեն չկիրառելու (Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 70-րդ հոդված) համար սահմանված են շատ ավելի մեղմ չափանիշներ, քան օրենքով նախատեսված պատժից ավելի մեղմ պատիժ նշանակելու համար (Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 64-րդ հոդված): Դա գործնականում հանգեցնում է պատիժը պայմանականորեն չկիրառելու ավելի լայն կիրառմանը՝ օրենքով նախատեսված պատժից ավելի մեղմ պատիժ նշանակելու համեմատ:

Գործող քրեական օրենսգրքի էական թերություններից է նաև պատիժների համակարգը և հատուկ մասի հոդվածների սանկցիաների անհամաչափությունը:

Առանձին դեպքերում գոյություն ունեցող կարգավորումներն արդյունավետ չեն և գործնականում հանգեցնում են մի իրավիճակի, երբ դատարանը պատիժ նշանակելու ժամանակ չի ունենում իրական այլընտրանք ազատագրկմանը, ինչը խաթարում է պատժի նպատակների արդյունավետ իրականացումը, հանգեցնում է ազատագրկման առավել հաճախակի կիրառմանը, իսկ դրա արդյունքում նաև քրեակատարողական հիմնարկների գերծանրաբեռնվածության:

Հայաստանի Հանրապետությունում նոր քրեական օրենսգրքի մշակումն էապես պայմանավորված է նաև նոր քրեական դատավարության օրենսգրքի և վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքերի մշակմանն ու ընդունմանն

ուղղված աշխատանքներով: Նշված երկու օրենսդրական ակտերը համալիր կերպով փոխկապակցված են քրեական օրենսգրքի հետ, և դրանց ընդունման դեպքում Հայաստանի Հանրապետության ներկայիս քրեական օրենսգիրքն այլևս պիտանի չի լինի իր առջև դրված խնդիրների լուծման համար:

Վերը նշված խնդիրների և թերությունների ոչ սպառիչ ցանկն օբյեկտիվորեն հանգեցնում է Հայաստանի Հանրապետության նոր քրեական օրենսգրքի ընդունման ուղղությամբ անհրաժեշտ քայլերի ձեռնարկմանը:

Հայաստանի Հանրապետության ապագա քրեական օրենսգրքում անհրաժեշտ է արմատապես վերանայել պատիժների համակարգը՝ ապահովելով քրեական պատժի համաչափության հետևողական կենսագործումը, սահմանելով ազատագրկմանն այլընտրանք հանդիսացող գործուն պատժատեսակներ և հիմնական պատիժների կոմբինացված տեսքով նշանակման հնարավորություն, ինչպես նաև նախատեսելով քրեաիրավական հարկադրանքը տնտեսելուն ուղղված այլ լուծումներ:

Հայաստանի Հանրապետության ապագա քրեական օրենսգրքում անհրաժեշտ է նաև ընդլայնել հանրային աշխատանքների՝ որպես պատժի նշանակման հնարավորությունը: Այդ նպատակով անհրաժեշտ է հանրային աշխատանքները որպես պատժատեսակ նախատեսել քրեական օրենսգրքի հատուկ մասի հոդվածների սանկցիաներում, ինչպես նաև ընդլայնել պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելիս հանրային աշխատանքների նշանակման հնարավորությունը՝ այդ ինստիտուտի կիրառումը հնարավոր դարձնելով նաև ծանր հանցագործությունների կատարման համար դատապարտված անձանց համար:

Ապագա քրեական օրենսգիրքը մշակելիս անհրաժեշտ է ուսումնասիրել նաև քրեական պատասխանատվությանն այլընտրանք հանդիսացող միջոցների, մասնավորապես, մեդիացիայի նախատեսման հնարավորությունը:

Քրեաիրավական հարկադրանքի տնտեսումը պետք է իրականացվի նաև ապագա օրենսգրքի հատուկ մասի հոդվածների սանկցիաներից ազատագրկումը հնարավորինս բացառելու կամ դրա առավել կարճ ժամկետներ նախատեսելու միջոցով (դեպենալիզացիա): Ապագա քրեական օրենսգրքում անհրաժեշտ է իրականացնել նաև որոշ հանցագործությունների ապաքրեականացում՝ մի մասի համար ընդհանրապես բացառելով քրեական պատասխանատվությունը, իսկ մյուս մասը տեղափոխելով վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգիրք (օրինակ՝ սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված առանձին հանցագործությունների պարագայում):

4.2. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով ներկայացնել Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծը:

2005թ. նոյեմբերի 27-ին տեղի ունեցած հանրաքվեով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեջ կատարվեցին հիմնարար փոփոխություններ, որոնք կանխորոշեցին նաև քրեական արդարադատության ոլորտի զարգացման հիմնական ուղղությունները: Հասարակական և քաղաքական կյանքում ընթացող մի շարք փոփոխություններ անխուսափելիորեն առաջ բերեցին այդ զարգացումերին և Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորություններին համահունչ քրեական գործերի քննության և լուծման ընթացակարգերի սահմանման, հանրային և մասնավոր շահերի հավասարակշռված պաշտպանության ապահովման հրամայականը: Այս հանգամանքները հաշվի են առնվել Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգում, որը հաստատվել է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ, և դրա հիման վրա մշակված Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծում:

4.3. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կառուցվածքում ստեղծել քրեակատարողական ծառայությունից անկախ և առանձին պրոբացիայի ծառայություն.

4.3.1. Մշակել պրոբացիայի ծառայության գործունեությունը կարգավորող իրավական ակտի նախագիծ.

4.3.2. Մշակել պրոբացիայի ծառայության աշխատակիցների շարունակական մասնագիտական ուսուցման համակարգ:

Պրոբացիայի ծառայությունը միջազգային պրակտիկայում ստեղծվել է հանցագործություն կատարած անձանց ռեսոցիալիզացիային օժանդակելու համար՝ նրանց սոցիալական, հոգեբանական և իրավական օգնություն ցույց տալու միջոցով: Առաջին անգամ այն ներդրվել է Անգլիայում և սկզբնական շրջանում տարածում ստացել միայն անգլոսաքսոնական իրավունքի երկրներում: Սակայն ժամանակի ընթացքում պրոբացիայի ծառայություններ են ստեղծվել այլ, այդ թվում նաև ռոմանագերմանական իրավունքի երկրներում: Վերջին տասնամյակի ընթացքում պրոբացիայի պետական ծառայություն է ստեղծվել նաև նախկին ԽՍՀՄ անդամ պետություններում՝ Լատվիայում, Էստոնիայում, Մոլդովայում, Վրաստանում: Պրոբացիայի ծառայության ստեղծման ուղղությամբ աշխատանքներ են տարվում նաև Ռուսաստանում, Ուկրաինայում, Ղազախստանում:

Տարբեր երկրներում պրոբացիայի ծառայության հիմնադրման և զարգացման հետ միասին պրոբացիայի ծառայություններն ընդլայնում էին իրենց լիազորությունները՝ ընդգրկելով նոր գործառույթներ՝ սկսած այլընտրանքային պատիժների կատարումից և մեդիացիայից մինչև քրեական գործերով մինչդատական վարույթի ընթացքում կալանքին այլընտրանք հանդիսացող խափանման միջոցների կիրառման ապահովումը (հսկողության հանձնելը (տնային կալանք):

Հայաստանի Հանրապետությունում ներկայումս գոյություն չունի պրոբացիայի առանձին ծառայություն: Վերջինիս բնորոշ մի շարք լիազորություններ իրականացնում են Հայաստանի Հանրապետությունում քրեակատարողական ծառայության այլ-ընտրանքային պատիժների կատարման բաժինը և սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներ իրականացնող ստորաբաժանումները:

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության ապագա քրեական օրենսգրքում պրոբացիայի՝ որպես հանցագործի ուղղման և վերաինտեգրման մեխանիզմի նախատեսումը, կրկնահանցագործությունների բարձր աստիճանի դեմ պայքարի արդյունավետ միջոցներ կիրառելու անհրաժեշտությունը՝ ներկայումս Հայաստանի Հանրապետությունում արդիական է այնպիսի կառույցի ստեղծումը, որն արդյունավետ կերպով կիրականացնի այդ գործառույթները:

Պրոբացիայի ծառայության ստեղծման անհրաժեշտությունը պայմանավորվում է նաև մասնագիտական գիտելիքների հիման վրա այնպիսի գործառույթի կատարումն ապահովելու նպատակով, ինչպիսին է դատարանների կողմից պատժի նշանակման փուլում և անկախ հանձնաժողովների կողմից անձին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցը լուծելիս այդ անձի սոցիալ-հոգեբանական բնութագրի վերաբերյալ եզրակացություն ներկայացնելը, ինչը կնպաստի առավել արդարացի պատժաչափի նշանակման կամ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ առավել ճիշտ որոշման կայացման: Հիշյալ գործառույթները կատարելու նպատակով արդարադատության նախարարության կազմում պետք է ստեղծվի կառույց, որը լիովին կապահովի վերը նշված խնդիրների իրականացումը և կգործի Հայաստանի Հանրապետության քրեակատարողական ծառայությունից անկախ և առանձին:

Պրոբացիայի ծառայության գործունեությանն անհրաժեշտ է ներգրավել նաև հասարակական կազմակերպություններ և կամավորներ՝ նրանց օժտելով պրոբացիայի ծառայության լիազորություններով: Նման կարգավորման հնարավորություն նախատեսվում է Միավորված ազգերի կազմակերպության կողմից 1990թ. ընդունված «Ազատագրկման հետ չկապված միջոցների վերաբերյալ նվազագույն ստանդարտ կանոնների» 16-րդ և 19-րդ կետերով:

Պրոբացիայի ծառայության ստեղծումը կհանգեցնի նաև այդ ծառայության կազմակերպման և գործունեության հիմունքները համալիր կերպով կարգավորող իրավական ակտերի մշակման և ընդունման, որոնցով կսահմանվեն պրոբացիայի հասկացությունը, դրա տեսակները, իրականացման կարգը, պրոբացիոն ծառայության աշխատակցի իրավունքները և պարտականությունները:

Պրորբացիայի ծառայության ստեղծմանը զուգահեռ անհրաժեշտ է ապահովել պրորբացիայի ծառայության աշխատակիցների առաջնային և շարունակական մասնագիտական ուսուցումը:

4.4. Բարեփոխել պատժից պայմանական վաղաժամկետ ազատման, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու ընթացակարգը.

4.4.1. Ուսումնասիրել պատժից պայմանական վաղաժամկետ ազատման վերաբերյալ որոշում կայացնող մարմինների համակարգը պարզեցնելու և յուրաքանչյուր մարմնի գործառույթները հստակեցնելու հնարավորությունները.

4.4.2. Սահմանել այն օբյեկտիվ չափանիշները, որոնց հիման վրա համապատասխան մարմինները պետք է որոշեն դատապարտյալին պայմանական վաղաժամկետ ազատելու հարցը.

4.4.3. Սահմանել պատժից պայմանական վաղաժամկետ ազատման, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ դատական գործերի քննության արդյունավետ կարգ:

Միջազգային փորձի ուսումնասիրությունից բխում է, որ պատժից պայմանական վաղաժամկետ ազատման, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխելու հարցում տարբերակվում են 3 տիպի կառուցակարգեր.

1. Դատական, այսինքն՝ պատժից պայմանական վաղաժամկետ ազատման, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցը լուծում է դատարանը: Նման կարգավորում մինչև 2006թ. Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում կատարված փոփոխությունները սահմանված էր նաև Հայաստանի Հանրապետությունում:

2. Խառը, այսինքն՝ քրեակատարողական հիմնարկի վարչակազմի և դատարանի միջև գոյություն ունի որոշակի միջանկյալ օղակ, որը եզրակացություն է տալիս դատապարտյալի ուղղված լինելու վերաբերյալ:

3. Արտադատական, այսինքն՝ պատժից պայմանական վաղաժամկետ ազատման, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցը լուծում են համապատասխան անկախ հանձնաժողովները, որոնք օրենքով նախատեսված անկախ մարմիններ են և չեն մտնում որևէ պետական մարմնի կառուցվածքի մեջ:

2006թ. օրենսդրական փոփոխությունների արդյունքում Հայաստանի Հանրապետությունում պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատման, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու դատական ձևից անցում կատարվեց դեպի խառը ձևը: Վերջինս կարելի է դիտարկել որպես դատապարտյալների ուղղման և նրանց պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատման կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերին հասարակության մասնակցության աստիճանի բարձրացմանն ուղղված քայլ: Սա-

կայն այդ հանձնաժողովների գործունեությունը և պատժից պայմանական վաղաժամկետ ազատման, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու կառուցակարգերի արդյունավետությունը գործնականում շարունակում է խնդրահարույց լինել: Անհրաժեշտ է օրենսդրական փոփոխությունների միջոցով կատարելագործել հանձնաժողովների գործունեության սկզբունքները, որոշումների կայացման չափանիշները, պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատման, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ գործերի քննության համար օրենսդրորեն սահմանել ամբողջական կանոններ:

Նման փոփոխությունների իրագործումը մի կողմից կբարձրացնի անկախ հանձնաժողովների գործունեության արդյունավետությունը և կշտկի Հայաստանի Հանրապետությունում պատժից պայմանական վաղաժամկետ ազատման, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու կառուցակարգերում առկա թերությունները, մյուս կողմից կապահովի հասարակության, նրա ներկայացուցիչների մասնակցությունն այդ խնդիրների լուծմանը:

4.5. Բարեփոխել ազատագրկման ձևով պատիժը կրող դատապարտյալին ծանր հիվանդության հիմքով պատժից ազատելու կարգը.

4.5.1. Վերանայել ներկայումս բժշկական փորձաքննություն իրականացնող մարմնի լիազորությունները և սահմանել վերջինիս գործունեության իրավական ընթացակարգերը.

4.5.2. Սահմանել ազատագրկման ձևով պատիժը կրող դատապարտյալին ծանր հիվանդության հիմքով պատժից ազատման վերաբերյալ դատական գործերի քննության արդյունավետ կարգ:

Օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի վերլուծությունը ցույց է տալիս, որ քրեակատարողական հիմնարկի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 26-ի «Կալանավորված անձանց և դատապարտյալների բուժսանիտարական և բուժկանխարգելիչ օգնությունը կազմակերպելու, առողջապահական մարմինների բուժական հիմնարկներից օգտվելու և այդ նպատակով դրանց բժշկական անձնակազմին ներգրավելու կարգը հաստատելու մասին» թիվ 825-Ն որոշմամբ ստեղծված բժշկական աշխատանքային հանձնաժողովի հարաբերություններն առավել հստակ կարգավորման կարիք ունեն: Պարզ չէ, թե ինչպես, ում կողմից և ինչ ժամկետներում է հիվանդ դատապարտյալի գործը համապատասխան քրեակատարողական հիմնարկից ներկայացվում բժշկական հանրապետական հանձնաժողով: Դատապարտյալին բժշկական հանրապետական հանձնաժողով ներկայացնելու կամ ներկայացնելը մերժելու առնչությամբ քրեակատարողական հիմնարկի բժիշկը կամ ղեկավարը ինչ ընթացակարգով ու չափանիշների հիման վրա է որոշում կայացնում: Կարգավորման նման անհստակությունը կարող է հանգեցնել քրեակատարողական հիմնարկի կողմից հարցերի քննարկման անհարկի ձգձգումների և իր մեջ ներառում է կոռուպցիոն ռիսկեր: Երկրորդ, քրեակատարո-

ղական հիմնարկի կազմավորման և գործունեության կարգը սահմանող՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 26-ի թիվ 825-Ն որոշմամբ ամրագրված է բժշկական հանրապետական հանձնաժողովի գործառույթը՝ հիվանդ դատապարտյալին ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության 2003թ. դեկտեմբերի 4-ի «Միջգերատեսչական բժշկական հանձնաժողովներ ստեղծելու կարգը հաստատելու մասին» թիվ 1636-Ն որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովին, սակայն կարգավորված չէ այդ գործառույթի իրականացման ընթացակարգը: Մասնավորապես, սահմանված չէ, թե ինչ ժամկետներում է բժշկական հանրապետական հանձնաժողովը որոշում կայացնում: Կարգավորված չեն նաև այն հարցերը, որոնց վերաբերյալ բժշկական աշխատանքային հանձնաժողովը կարող է որոշումներ կայացնել: Միայն սահմանված է, որ բժշկական հանրապետական հանձնաժողովը որոշումները կայացնում է իր իրավասությանը վերաբերող հարցերի կապակցությամբ: Ենթադրվում է, որ եթե բժշկական հանրապետական հանձնաժողովը կայացրել է դրական որոշում, ապա հիվանդ դատապարտյալի ախտորոշումը համապատասխանում է թիվ 825-Ն որոշմամբ սահմանված հիվանդությունների ցանկին, իսկ բացասական որոշման դեպքում՝ չի համապատասխանում: Երրորդ, հստակ չէ, թե ում և ինչին կարող են ուղղված լինել բժշկական հանրապետական հանձնաժողովի որոշումները: Այսինքն, անհրաժեշտ է հստակեցնել բժշկական հանրապետական հանձնաժողովի որոշումների առարկան և հասցեատերերի շրջանակը: Թիվ 825-Ն որոշման համաձայն բժշկական հանրապետական հանձնաժողովի որոշումները ենթակա են պարտադիր կատարման: Պարզ չէ, թե ում համար են պարտադիր այդ որոշումները և ով պետք է դրանք կատարի: Եթե դրանք պարտադիր են միջգերատեսչական հանձնաժողովի համար, ապա միջգերատեսչական հանձնաժողովը չի կարող դրանց հակասող որոշում ընդունել: Այս դեպքում հասկանալի չէ, թե բժշկական հանրապետական հանձնաժողովի պարտադիր որոշման պարագայում ինչ գործառույթ կարող է իրականացնել միջգերատեսչական հանձնաժողովը: Նման պարագայում միջգերատեսչական հանձնաժողովի գործունեությունը դառնում է անիմաստ: Չորրորդ, բացակայում է բժշկական հանրապետական հանձնաժողովի բացասական որոշումները հիմնավորելու իրավական պահանջը: Հինգերորդ, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքը տարբերակում է ծանր հիվանդության հիմքով դատապարտյալի նկատմամբ կայացված որոշման կատարման հետաձգումը (431-րդ հոդված)՝ ծանր հիվանդության հետևանքով պատժից ազատվելուց բացի (432-րդ հոդված): Թիվ 825 որոշման 1-ին հավելվածի 17-րդ կետի համաձայն՝ բժշկական հանրապետական հանձնաժողովն իրականացնում է դատական որոշման կատարման հետաձգման ներկայացման ենթակա հիվանդ դատապարտյալներին թիվ 1636-Ն որոշմամբ հաստատված կարգով ստեղծված համապատասխան բժշկական հանրա-

պետական հանձնաժողով ներկայացնելու գործընթաց: Այսինքն, նշված 17-րդ կետի համաձայն՝ բժշկական հանրապետական հանձնաժողովը գործառույթների մեջ չի մտնում պատժից ազատման ենթակա հիվանդ դատապարտյալին միջգերատեսչական հանձնաժողովին ներկայացնելը, այլ այն անձանց ներկայացնելը, որոնց նկատմամբ կայացված դատական ակտը ենթակա է հետաձգման: Սակայն իրականում բժշկական հանրապետական հանձնաժողովին ներկայացվում են նաև հիվանդ դատապարտյալներ, որոնք իրենց հիվանդության պատճառով կարող են ազատվել պատժից, և այդ նպատակով նրանց գործը բժշկական հանրապետական հանձնաժողովի որոշմամբ ներկայացվում է բժշկական փորձաքննություն իրականացնող միջգերատեսչական հանձնաժողովին: Ստացվում է, որ բժշկական հանրապետական հանձնաժողովը հիվանդ դատապարտյալին պատժից ազատելու նպատակով բժշկական եզրակացությամբ միջգերատեսչական հանձնաժողովին ներկայացնելու լիազորություն չունի, սակայն իրականացնում է նման գործունեություն:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2003թ. դեկտեմբերի 4-ի թիվ 1636-Ն որոշմամբ ստեղծվել է համապատասխան միջգերատեսչական հանձնաժողով, սակայն նրա աշխատանքի կանոնակարգումն ամրագրված չէ նշված որոշման մեջ կամ այլ իրավական ակտում: Մասնավորապես, առավել խնդրահարույց են միջգերատեսչական հանձնաժողովում որոշումների կայացման կարգը, չափանիշները, ժամկետները, որոշումները հիմնավորելու, դրանք պարտադիր կերպով գրավոր կազմելու և դրանց մասին դատապարտյալին տեղեկացնելու պահանջների բացակայությունը: Հստակ չէ, թե ինչպիսի գիտելիքների կիրառմամբ կատարված փորձաքննությունների արդյունքում է միջգերատեսչական հանձնաժողովը բացասական որոշում կայացնում բժշկական հանրապետական հանձնաժողովի դրական որոշման պարագայում:

Ծանր հիվանդության հետևանքով պատժից ազատելու կարգի բարեփոխման նպատակով անհրաժեշտ է հստակեցնել իրավասու մարմինների շրջանակը, լիազորությունները, դրանց առջև դրված խնդիրների շրջանակը, որի արդյունքում կապահովվի դատապարտյալի հիվանդության արագ և արդյունավետ ախտորոշման ու փորձաքննության իրականացումը և գործը սեղմ ժամկետներում դատարան ներկայացնելը:

Անհրաժեշտ է վերանայել վերոնշյալ հանձնաժողովների կազմերը և կազմավորման սկզբունքը, ինչպես նաև նրա լիազորություններն ու գործունեության ընթացակարգերի իրավական կարգավորումը:

Անհրաժեշտ է կատարելագործել Հայաստանի Հանրապետության քրեական և քրեական դատավարության օրենսգրքերի համապատասխան դրույթներն այն առումով, որ ծանր հիվանդության հետևանքով պատժից ազատելիս դատարանի հայեցողության շրջանակները հստակեցվեն, վերջինս ղեկավարվի հստակ չափանիշներով,

մասնավորապես, հաշվի առնի դատապարտյալի հիվանդության բնույթը, անազատության պայմաններում ցույց տրվող բժշկական օգնության և սպասարկման բնույթը, ինչպես նաև տվյալ դատապարտյալի կողմից նոր հանցագործություն կատարելու հավանականությունը: Միաժամանակ անհրաժեշտ է հստակ սահմանել դատական քննության սեղմ ժամկետներ, դատապարտյալի և նրա ներկայացուցչի մասնակցության պայմանները դատական քննությանը, դատական նիստի անցկացման, դատական ակտի հրապարակման պայմանները: Դատարանի որոշման մեջ պետք է նշված լինեն որոշման կայացման բոլոր իրավական և փաստական հիմքերը, ինչպես նաև այն պետք է ենթակա լինի բողոքարկման:

5. ՎԱՐՉԱԿԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄԸ

Վարչական արդարադատության և վարչական վարույթի արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումներն են՝

5.1. Նվազեցնել վարչական դատարանների ծանրաբեռնվածությունը.

5.1.1. Ուսումնասիրել վարչական դատարանի հավելյալ ծանրաբեռնվածության պատճառները և առաջարկել լուծումներ.

5.1.2. Ուսումնասիրել վարչական դատարանի դատավորների թվաքանակն ավելացնելու խնդիրը և առաջարկել լուծումներ:

Ներկայումս վարչական դատարանի կողմից քննվող գործերի քանակը բավականին մեծ է, որի հետևանքով վարչական դատարանի դատավորները գերծանրաբեռնված են: Հավելյալ ծանրաբեռնվածությունը նվազեցնելու նպատակով անհրաժեշտ է մշակել համապատասխան լուծումներ վարչական դատարանի դատավորների թվաքանակն ավելացնելու վերաբերյալ:

5.2. Վարչական վարույթի շրջանակներում «վարչական մարմին» հասկացության մեջ ներառել այն մասնավոր սուբյեկտներին, որոնց պետությունը վերապահել է հանրային գործառույթներ՝ ապահովելով նաև այդ սուբյեկտների որոշումներից, գործողություններից և անգործությունից մասնավոր անձանց դատական պաշտպանությունը.

5.2.1. Փոփոխություններ կատարել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում և (ըստ անհրաժեշտության) Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում:

«Վարչական մարմին» հասկացությունը չի կարող ներառել միայն պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, քանի որ կան այնպիսի սուբյեկտներ, որոնք, չհանդիսանալով պետական մարմիններ, իրականացնում են պետության կողմից վերապահված հանրային գործառույթներ: Անհրաժեշտ է վարչական մարմնի

Ֆունկցիոնալ հասկացության մեջ ներառել նաև այդ սուբյեկտներին: Դրանով անձանց հնարավորություն կտրվի բողոքարկել նաև այդ սուբյեկտների որոշումներն ու գործողությունները:

5.3. Ապահովել զուգորդվող վարչական ակտի հասցեատիրոջ կողմից այդ ակտի միջամտող դրույթները վիճարկելու հնարավորությունը.

5.3.1. Փոփոխություններ կատարել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում և Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում:

Վարչական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածի համաձայն՝ հայցվորը կարող է պահանջել ամբողջությամբ կամ մասամբ վերացնել կամ փոփոխել միջամտող վարչական ակտը: Իսկ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 52-րդ հոդվածի համաձայն վարչական ակտերը լինում են բարենպաստ, միջամտող կամ զուգորդվող: Վերջինն իր մեջ պարունակում է անձի համար ինչպես բարենպաստ, այնպես էլ միջամտող դրույթներ: Ուստի անհրաժեշտ է հստակեցնել, որ հայցվորը կարող է վիճարկել ոչ միայն միջամտող վարչական ակտը, այլ նաև զուգորդվող վարչական ակտի միջամտող դրույթները:

5.4. Գործնականում ապահովել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի ուժով ընդունված վարչական ակտերով տրամադրվող իրավունքների իրացումը.

5.4.1. Կատարել ուսումնասիրություն՝ կարգավորելու համար նշված ինստիտուտն այնպես, որ, մի կողմից, չխաթարվի 48-րդ հոդվածում ամրագրված այս կարևոր ինստիտուտի բուն էությունը, մյուս կողմից՝ պաշտպանվի հասարակական շահը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի համաձայն՝ դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթի արդյունքում օրենքով սահմանված ժամկետում վարչական ակտ ընդունելու իրավասություն ունեցող վարչական մարմնի կողմից այդ ակտը չընդունվելու դեպքում վարչական ակտը համարվում է ընդունված, և դիմողը կարող է ձեռնամուխ լինել համապատասխան իրավունքի իրականացմանը:

Նշված նորմի հիմնական նպատակն է վարչական վարույթի շրջանակներում բարձրացնել վարչական մարմինների պատասխանատվությունը: Այս դրույթի կիրառումը կարող է կանխել կամ նվազեցնել այն դեպքերը, երբ մասնավոր անձինք դիմում են իրավասու վարչական մարմնին՝ բարենպաստ վարչական ակտ ստանալու ակնկալիքով, իսկ վարչական մարմինը սահմանված ժամկետում որևէ կերպ չի արձագանքում դիմումին:

Սակայն գործնականում առկա է ընդունված համարվող վարչական ակտերով մասնավոր անձին տրամադրված իրավունքի իրացման խնդիր: Մասնավոր անձը

գործնականում ոչ միշտ է օգտվում այդ իրավունքից: Դատական մի շարք ակտերի ուսումնասիրությունը վկայում է, որ դատական պրակտիկայում նման վարչական ակտերին երբեմն ներկայացվում են պահանջներ, որոնք սահմանված չեն օրենքով, օրինակ, մինչև վարչական ակտով ստացված իրավունքից օգտվելը այդ ակտի իրավաչափության հաստատումը: Օրենքով սահմանված չէ այնպիսի ընթացակարգ, որով անհրաժեշտ է հաստատել 48-րդ հոդվածով ստացված վարչական ակտի իրավաչափությունը:

Ուստի պետք է կատարվի համապատասխան ուսումնասիրություն՝ նշված ինստիտուտն այնպես կարգավորելու համար, որ մի կողմից չխաթարվի 48-րդ հոդվածում ամրագրված այս կարևոր ինստիտուտի բուն էությունը, մյուս կողմից պաշտպանվի հասարակական շահը:

5.5. Նախատեսել վարչական դատավարությունում դատարանի կողմից ոչ պատշաճ երրորդ անձի կարգավիճակի դադարեցման հնարավորություն:

Երրորդ անձինք այն ֆիզիկական կամ իրավաբանական անձինք են, որոնց իրավունքները շոշափվում են կամ կարող են շոշափվել գործի քննության արդյունքում ընդունվելիք դատական ակտով: Վարչական դատավարության օրենսգիրքը հնարավորություն է տալիս երրորդ անձանց ներգրավվել դատավարության մեջ իրենց դիմումի հիման վրա: Միևնույն ժամանակ նախատեսված է դատարանի պարտականությունը անձին ներգրավել որպես երրորդ անձ այն դեպքերում, եթե դատական ակտը անխուսափելիորեն և ուղղակիորեն տարածվելու է նաև նրա վրա: Վարչական դատավարության օրենսգիրքը նաև նախատեսում է այն գործերի տեսակները, որոնցով որոշակի անձի ներգրավումը որպես երրորդ անձ պարտադիր է: Այդուհանդերձ, գործնականում խնդիրներ է առաջացնում այն իրավիճակը, երբ դատարանը հայցադիմումում որպես երրորդ անձ նշված անձին մեխանիկորեն մասնակից է դարձնում դատավարությանը, այնինչ տվյալ անձն ակնհայտորեն առնչություն չունի գործի հետ: Դա առաջացնում է անհարկի դատավարական ծախսեր, իսկ երրորդ անձի կողմից ծանուցված լինելու փաստը չհավաստվելու դեպքում՝ գործի քննության ձգձգումների պատճառ դառնում: Այս առումով անհրաժեշտ է վարչական դատավարությունում դատարանին վերապահել դատավարության պատշաճ մասնակիցների շրջանակի որոշման լիազորություն՝ նախատեսելով հայցադիմումում նշված ոչ պատշաճ երրորդ անձի ներգրավման դեպքերում այդ անձին վարույթից հանելու դատարանի հնարավորությունը:

5.6. Մշակել վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության նոր օրենսգիրք.

5.6.1. Ընդունել «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության նոր օրենսգրքի հայեցակարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում.

5.6.2. Մշակել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության նոր օրենսգրքի նախագիծ:

Հայաստանի Հանրապետությունում ներկայումս գործում է դեռևս ՀԽՍՀ Գերագույն խորհրդի կողմից 1985թ. դեկտեմբերի 6-ին ընդունված և 1986թ. հունիսի 6-ին կիրառության մեջ դրված վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրքը: Այդ օրենսգիրքն իր հիմքում դրված հայեցակարգային տրամաբանությամբ և փիլիսոփայությամբ, համակարգային կառուցվածքով և տասնյակ այլ օրենքների հետ ունեցած անլուծելի հակասություններով, տասնամյակների ընթացքում կատարված բազում հաջողված և անհաջող փոփոխություններով, հնացած կամ գործնական կիրառում չունեցող բազմաթիվ դրույթներով, թերի և ոչ լիարժեք վարչական պատասխանատվության միջոցներով ունակ չէ լուծել իր առջև դրված խնդիրները և չի համապատասխանում իրավական պետության պահանջներին:

Հաշվի առնելով այն, որ հիշյալ խնդիրները բավականաչափ ծավալուն են և համակարգային, անհրաժեշտ է ընդունել վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգիրք, որը հարիր կլինի իրավական պետության արդի պահանջներին:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքով պետք է լուծում ստանան առնվազն հետևյալ սկզբունքային հարցերը՝

1. Ապագա օրենսգիրքը պետք է համապարփակ կերպով ընդգրկի բոլոր վարչական իրավախախտումները, իսկ այլ օրենքներում վարչական իրավախախտման դեպքեր այլևս չպետք է նախատեսված լինեն: Այսինքն, չպետք է լինի վարչական պատասխանատվություն, եթե դա նախատեսված չէ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով:

2. Նոր օրենսգիրքը, վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարչական վարույթի հետ կապված հարցերը կարգավորելիս, ընդհանուր առմամբ պետք է հիմնվի «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված վարչական վարույթի ընդհանուր սկզբունքների վրա՝ միաժամանակ հաշվի առնելով հատուկ վարույթների առանձնահատկությունները:

3. Նոր օրենսգրքով պետք է էականորեն բարեփոխվի վարչական պատասխանատվության միջոցների շրջանակը: Անհրաժեշտ է կատարելագործել ներկա օրենսգրքում արդեն իսկ սահմանված վարչական տույժերը, ինչպես նաև նախատեսել նոր վարչական տույժի տեսակներ, քննարկել հանրօգուտ աշխատանքների նախատեսման հնարավորությունը:

4. Վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգիրքը մշակելիս անհրաժեշտ է, հաշվի առնելով արարքի և դրա համար նախատեսված պատասխանատվության համաչափության սկզբունքը, իրականացնել որոշ արարքների ապա-

քրեականացում և դրանք նախատեսել վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքում՝ որպես զանցանք: Դրա հետ միաժամանակ անհրաժեշտ է ուսումնասիրել նաև որոշ արարքների համար ներկայումս նախատեսված վարչական պատասխանատվությունը հանելու հարցը:

6. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄԸ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄԸ

Քաղաքացիական արդարադատության արդյունավետության բարձրացման և քաղաքացիական օրենսդրության կատարելագործման նպատակով անհրաժեշտ է.

6.1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը համապատասխանեցնել մասնավոր իրավահարաբերությունների կարգավորման ժամանակակից մոտեցումներին:

Հայաստանի Հանրապետության ներկայիս քաղաքացիական օրենսգիրքն ընդունվել է 1998թ. մայիսի 5-ին Անկախ պետությունների համագործակցության (ԱՊՀ) մոդելային օրենսգրքի հիման վրա: Այն կարևոր քայլ էր Հայաստանի Հանրապետությունում ազատ տնտեսական շուկայի անցման, շուկայական տնտեսական հարաբերությունների ծավալման, սեփականության բոլոր ձևերի պաշտպանությունն ապահովելու ճանապարհին: Հանդիսանալով շուկայական հարաբերությունների կարգավորման հիմքը՝ քաղաքացիական օրենսգիրքը ապահովում է նաև քաղաքացիաիրավական հարաբերությունների բնագավառում ընթացիկ օրենսդրության զարգացումը: Սակայն օրենսգրքի ընդունումից հետո Հայաստանի Հանրապետության տնտեսական, սոցիալական և իրավական կյանքում տեղի ունեցան կարևոր փոփոխություններ: Կազմավորվեց բանկային համակարգը, ստեղծվեց արժեթղթերի շուկան, ներդրվեց պարտադիր ապահովագրության ինստիտուտը, ընդունվեցին Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի՝ տարբեր ինստիտուտների կարգավորմանը նվիրված առանձին օրենքներ, կատարվեցին փոփոխություններ նոտարիատի, իրավաբանական անձանց պետական գրանցման և անշարժ գույքի պետական գրանցման բնագավառներում: Քաղաքացիաիրավական հարաբերությունների զարգացումը և դրա արդյունքում օրենսգրքում առաջացած կարգավորման բացերը, ինչպես նաև առանձին անկատար իրավական ինստիտուտները, տերմինաբանական անճշտությունները Քաղաքացիական օրենսգրքի արդիականացման պահանջներ են առաջադրում:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի վերլուծությունը և դրա համեմատությունը այլ երկրների օրենսգրքերի հետ ցույց են տալիս, որ, մասնավորապես, խնդրահարույց են քաղաքացիական իրավունքի սուբյեկտների շրջանակը սահմանող, պետության ու համայնքների քաղաքացիական շրջանա-

ռությանը մասնակցելու, իրային իրավունքների, պարտավորական և ժառանգական իրավունքի, ապահովագրական իրավունքի նորմերը, բացակայում են պատճառված վնասի ճիշտ հաշվարկման չափանիշները, ժամանակակից զարգացումներից հետ են մնում կորպորատիվ իրավունքի, պայմանագրային իրավունքի, մասնավորապես, ձեռնարկատիրական գործունեության ոլորտին առնչվող պայմանագրային հարաբերությունների, մտավոր սեփականության իրավունքի, միջազգային մասնավոր իրավունքի կարգավորումները: Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում անհրաժեշտ է լուծել նաև անշարժ գույքի գործարքների կնքման և գրանցման ու դրանց ուժի մեջ մտնելու հետ կապված վիճահարույց խնդիրները, ապագայում կառուցվելիք գույքի նկատմամբ սեփականության իրավունքի կապակցությամբ առաջացող հարցերը, կառուցապատման իրավունքի հետ կապված խնդիրները:

Օրենսգրքում առկա են նաև հակասություններ, որոնք առաջանում են սխալ տերմինաբանություն կիրառելու կամ վրիպակների հետևանքով: Ավելին, նման սխալները մեխանիկորեն տեղ են գտել նաև այլ իրավական ակտերում, ինչի արդյունքում նորմերը գործնականում առաջացնում են կիրառման բարդություններ, նորմի իմաստի աղավաղումներ:

Վերոշարադրյալ խնդիրները հանգեցնում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում համալիր փոփոխությունների կատարման օբյեկտիվ անհրաժեշտության:

6.2. Հստակեցնել քաղաքացիական դատավարությունում ապացուցման գործընթացը կարգավորող կանոնները՝ սահմանելով նաև ապացույցների վերաբերելիության կամ թույլատրելիության հարցերի լուծումը, այդ թվում՝ ապացույցների կազմից ապացույցը հանելը գործն ըստ էության լուծող դատական ակտում հիմնավորելու պահանջ:

Մրցակցային դատավարության մասնակիցների իրավունքների պաշտպանության առանցքային տարր է ապացուցման գործընթացի հստակ կարգավորումը: Անհրաժեշտ է բարելավել քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ ապացուցման գործընթացը կարգավորող նորմերը, մանրամասնել և հստակեցնել ապացույցների տեսակները, դատարանում ապացույցների հետազոտման կարգը և ապացույցների գնահատման կանոնները, ապացույցները ոչ վերաբերելի և անթույլատրելի ճանաչելու դատավարական սկզբունքները, կարգը, նախատեսել, մասնավորապես, գործն ըստ էության լուծող դատական ակտում ապացույցն անթույլատրելի ճանաչելու որոշումը հիմնավորելու պահանջ:

6.3. Սահմանել քաղաքացիական դատավարությունում վերադաս դատարանի կողմից դատական ակտը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու

դեպքում ստորադաս դատարանում գործերի քննության կարգի առանձնահատկությունները:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության ներկայիս օրենսգիրքը չի կարգավորում վերադաս դատարանի կողմից դատական ակտը բեկանելիս և գործը նոր քննության ուղարկելիս առաջին ատյանի դատարանում այդ գործի քննության առանձնահատկությունները՝ դրա վրա տարածելով գործի քննության ընդհանուր կանոնները:

Դատավարական տնտեսման, արագ և արդյունավետ դատական պաշտպանության նկատառումներից ելնելով՝ անհրաժեշտ է գործի նոր քննության ժամանակ ապացույցներ ներկայացնելու, հայցի հիմքը կամ առարկան փոխելու, գործը վարույթ ընդունելու և մի շարք այլ կանոններ ենթարկել առանձին կարգավորման:

6.4. Մշակել նախնական դատական նիստի առավել ամբողջական կանոններ:

Դատական քննության ծանրաբեռնվածությունը հնարավորինս նվազեցնելու նպատակով անհրաժեշտ է մանրակրկիտ կարգավորել քաղաքացիական դատավարությունում նախնական դատական նիստի անցկացման ընթացքը՝ հստակեցնելով նախնական դատական նիստի ժամանակ դատարանի և դատավարության մասնակիցների գործողությունների շրջանակը:

6.5. Ուսումնասիրել քրեական գործով ձեռք բերված ապացույցների՝ քաղաքացիական դատավարության ընթացքում օգտագործման թույլատրելիության հարցը:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածով նախատեսված է դատարանի համար քրեական գործերով օրինական ուժի մեջ մտած դատավճիռների պարտադիրություն միայն այն փաստերով, որոնցով հաստատված են որոշակի գործողություններ և դրանք կատարած անձինք: Անհրաժեշտ է ուսումնասիրել քաղաքացիական դատավարության շրջանակներում քրեական գործով ձեռք բերված ապացույցների օգտագործման կարգի և թույլատրելիության հարցում միջազգային փորձը և ըստ անհրաժեշտության մշակել համապատասխան կարգավորումներ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում:

7. ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄԸ

Դատավարական գործառույթների իրականացման արդյունավետության բարձրացման նպատակով անհրաժեշտ է.

7.1. Իրականացնել վճռաբեկ դատարանի կողմից օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու գործառույթի արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումներ.

7.1.1. Ուսումնասիրել վճռաբեկ դատարանի կողմից վճռաբեկ բողոքի ընդունելիության օրենսդրական չափանիշների, բողոքի ընդունումը մերժելու վերաբերյալ որոշման բովանդակությանը ներկայացվող պահանջների հարցում միջազգային լավագույն փորձը և ըստ անհրաժեշտության նախապատրաստել վճռաբեկ դատարանի սահմանադրական կարգավիճակին համահունչ՝ վճռաբեկ բողոքարկման իրավունքի իրականացման ընթացակարգերի կատարելագործմանն ուղղված օրենսդրական փոփոխություններ.

7.1.2. Տարանջատել և հստակեցնել վճռաբեկ բողոքին ներկայացվող ձևական (ֆորմալ) ու բովանդակային պահանջները, ինչպես նաև դրանք չափանելու հետևանքները.

7.1.3. Մշակել դատական ակտերի կառուցվածքին ներկայացվող այնպիսի պահանջներ, որոնք հնարավորություն կտան այլ դատական ակտերին հղում կատարելիս ապահովել տարբեր գործերի փաստական հանգամանքների համարելիությունը:

Օրենքի միատեսակ կիրառության և մեկնաբանության ապահովման հարցում վճռաբեկ դատարանի սահմանադրական գործառույթների ապահովման և վճռաբեկ դատարանի գործունեության արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ է ուսումնասիրել լավագույն միջազգային փորձը՝ ըստ անհրաժեշտության իրականացնելով վճռաբեկ բողոքարկման ինստիտուտի կատարելագործմանն ուղղված օրենսդրական փոփոխություններ:

Գործող դատավարական օրենսգրքերում անհրաժեշտ է հստակեցնել վճռաբեկ բողոքին ներկայացվող չափանիշները՝ պարզելով, թե արդյոք դրանք ձևական (ֆորմալ) բնույթ ունեն, թե դրանց պետք է ներկայացվեն նաև բովանդակային պահանջներ:

Վերոհիշյալ խնդիրների լուծմանը կարող են օժանդակել առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների դատական ակտերի կառուցվածքին և բովանդակությանը ներկայացվող պահանջները, հատկապես նույնական փաստական հանգամանքներով այլ դատական ակտեր կայացնելիս, ինչպես նաև վճռաբեկ բողոքին ներկայացվող պահանջների հստակեցումը, վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշումների հրապարակումը:

7.2. Մշակել դատական նիստերի չարդարացված հետաձգումների կանխարգելման ընթացակարգեր.

7.2.1. Իրականացնել դատական նիստերի նշանակման առաջնահերթությունների սահմանման բնագավառում միջազգային փորձի ուսումնասիրություն.

7.2.2. Դատավարական օրենսգրքերով հնարավորինս սպառիչ սահմանել նիստի հետաձգման հիմքերը՝ բացառելով նիստի հետաձգումը դրա համար չնախատեսված որևէ հիմքով.

7.2.3. Գործի քննության ողջամիտ ժամկետների խախտումների դեպքում նախատեսել արդյունավետ իրավական պաշտպանության միջոցներ.

7.2.4. Նախատեսել գործերի քննության տևողության մոնիտորինգի արդյունավետ մեխանիզմներ:

Դատական նիստերի չարդարացված հետաձգումները կարող են հանգեցնել ողջամիտ ժամկետում արդար դատաքննության իրավունքի խախտմանը: Անհրաժեշտ է օրենքով սահմանել դատական նիստերի հետաձգման հիմքերը՝ բացառելով անհարկի հետաձգումների պրակտիկան:

Միևնույն ժամանակ անհրաժեշտ է նաև ապահովել դատական նիստերի նշանակումների միասնականությունն ու կանխատեսելիությունը: Դատական նիստերի չհիմնավորված հետաձգումներից խուսափելու նպատակով անհրաժեշտ է ուսումնասիրել գոյություն ունեցող միջազգային փորձը դատական նիստերի նշանակման առաջնահերթությունների որոշակի չափանիշներ սահմանելու հարցում և քննարկել նման առաջնահերթությունների ներդրման նպատակահարմարությունը նաև Հայաստանի Հանրապետությունում: Մասնավորապես, քրեական դատավարությունում առաջնահերթություն կարող են ունենալ այն քրեական գործերը, որոնցով մեղադրյալի նկատմամբ կալանքը կիրառվել է որպես խափանման միջոց՝ ի տարբերություն այն գործերի, որոնցով կալանքը որպես խափանման միջոց չի կիրառվել: Քաղաքացիական գործերով առաջնահերթություն կարող են ունենալ, մասնավորապես, այն քաղաքացիական գործերը, որոնցով կիրառվել է հայցի ապահովում: Որպես դատական նիստերի նշանակման առաջնահերթությունների որոշման չափանիշ կարող են ընտրվել նաև կոնկրետ գործերի տեսակները (օրինակ, ալիմենտի բռնագանձման կամ կերակրողին մահ պատճառելու գործերը կամ այն քրեական գործերը, որոնցում որպես մեղադրյալ կամ տուժող հանդես է գալիս անչափահասը):

Անհրաժեշտ է նաև մշակել դատական նիստերի չարդարացված հետաձգումների կանխարգելման, գործերի քննության տևողության մոնիտորինգի արդյունավետ մեխանիզմներ, ինչպես նաև գործի քննության ողջամիտ ժամկետների խախտումների դեպքում նախատեսել արդյունավետ իրավական պաշտպանության միջոցներ:

7.3. Ուսումնասիրել սահմանադրական դատարանի որոշումների հիման վրա դատական ակտերի վերանայման ընթացակարգերի բարելավման, ինչպես նաև սահմանադրական դատարանների կողմից դատական հանձնարարականներ տալու վերաբերյալ միջազգային փորձը:

Ներկայումս դատարանը նոր հանգամանք ի հայտ գալու դեպքում դատական ակտը վերանայում է միայն համապատասխան անձանց ներկայացրած բողոքների

հիման վրա: Մարդու իրավունքների պաշտպանությունն ապահովելու պետության պոզիտիվ պարտականության շրջանակներում, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի 2011թ. հուլիսի 15-ի ՍԴՈ-984 որոշումը, անհրաժեշտ է ուսումնասիրել միջազգային փորձը՝ դատական ակտերի վերանայման ընթացակարգերի բարելավման, դատական ակտի վերանայման վարույթ հարուցելու հարցով մոտեցումները բացահայտելու և ըստ անհրաժեշտության դրանք օրենքով ամրագրելու ուղղությամբ:

«Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ և 73-րդ հոդվածներով նախատեսված է դատական հանձնարարականի ինստիտուտը, որն անհրաժեշտ է նույն օրենքի 19-րդ, 73-րդ և 74-րդ հոդվածներով նախատեսված ընթացակարգերն ապահովելու և ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 3-րդ և 3.1-ին կետերով նախատեսված լիազորությունների կատարումը երաշխավորելու համար: Սակայն գործնականում այդ ինստիտուտը չի գործում, մասնավորապես, դատավարական օրենսգրքերում համապատասխան ընթացակարգերի բացակայության պատճառով: Այդ նպատակով անհրաժեշտ է ուսումնասիրել սահմանադրական դատարանների կողմից դատական հանձնարարականներ տալու միջազգային փորձը:

7.4. Կատարելագործել դատական փորձաքննության նշանակման և անցկացման գործընթացը.

7.4.1. Տարածել մասնավոր փորձագետների կողմից դատական փորձաքննությունների իրականացմանը մասնակցելու իրավունքի վերաբերյալ տեղեկատվություն.

7.4.2. Դատավարական օրենսգրքերում հստակեցնել փորձագետին հարցաքննելու և փորձագետի մասնագիտական որակների ու եզրակացության արժանահավատությունը պարզելու դատավարական կանոնները:

Որպես քաղաքացիական դատավարությունում մրցակցության միջոց անհրաժեշտ է հնարավորինս ընդլայնել դատավարության կողմերի իրավունքները փորձաքննություն նշանակելու և անցկացնելու գործընթացում: Հայաստանի Հանրապետությունում փորձագիտական ծառայությունների կայացմանը նպաստելու տեսանկյունից կարևոր է, որ ընդլայնվի համապատասխան բնագավառում մասնագիտական գիտելիքներ և հմտություններ ունեցող ցանկացած անձի՝ որպես փորձագետ նշանակվելու պրակտիկան՝ անկախ այն հանգամանքից, թե արդյոք նա աշխատում է փորձաքննություն անցկացնող պետական հաստատությունում, թե ոչ:

Միևնույն ժամանակ պետք է հստակեցվեն փորձագետի եզրակացությունը վիճարկելու կառուցակարգերը, որոնք թույլ կտան կողմերին վերահսկելու փորձաքննությունների որակը: Այս առումով անհրաժեշտ է մանրամասնել իրականացված փորձաքննության վերաբերյալ փորձագետին հարցաքննելու և փորձագետի մասնա-

գիտական որակների ու եզրակացության արժանահավաստությունը պարզելու դատավարական կանոնները:

7.5. Սահմանել արտագնա դատական նիստերի անցկացման սահմանափակ և հստակ հիմքեր, դրանց անցկացման դեպքում արդար դատաքննության իրավունքի երաշխավորման մեխանիզմներ.

7.5.1. Օրենքով սահմանել արտագնա դատական նիստերի անցկացման բացառիկ դեպքերը և կանոնակարգել դրանց ընթացակարգը.

7.5.2. Սահմանափակել փակ և կիսափակ տիպի քրեակատարողական հիմնարկներում արտագնա դատական նիստերի անցկացման հնարավորությունը՝ նախատեսելով արդար դատաքննության իրավունքի ապահովմանն ուղղված լրացուցիչ երաշխիքներ:

Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 41-րդ հոդվածը թույլատրում է դատարանին, արդարադատության շահերից ելնելով, անցկացնել արտագնա դատական նիստ: Գործնականում դատական նիստի անցկացումն առաջացնում է մի շարք խնդիրներ, ինչպիսիք են արտագնա դատական նիստի հրապարակայնության, դռնբացության ապահովման խնդիրը, հանրության իրազեկվածությունը դատական նիստի անցկացման, ինչպես նաև՝ նշանակված հաջորդ դատական նիստի տեղի և ժամի վերաբերյալ, դատական նիստի ծայնագրառման ապահովման խնդիրը, օրենքով սահմանված խորհրդանիշերի առկայության ապահովումը և այլն: Այդ պատճառով անհրաժեշտ է օրենքով սպառիչ սահմանել այն դեպքերը (օրինակ՝ մեղադրյալի ծանր հիվանդությունը), երբ արտագնա դատական նիստի անցկացումը կարող է արդարացվել: Յուրաքանչյուր դեպքում դատարանը պետք է կայացնի պատճառաբանված որոշում՝ մատնանշելով, թե որ հիմքով է դատական նիստն անցկացնում արտագնա: Արտագնա դատական նիստերի անցկացումը չպետք է նվազեցնի արդար դատաքննության իրավունքը: Այս տեսանկյունից հույժ կարևոր է փակ և կիսափակ տիպի հաստատություններում արտագնա դատական նիստերի անցկացման դեպքում արդար դատաքննության սկզբունքների ապահովմանն ուղղված լրացուցիչ երաշխիքների նախատեսումը: Անհրաժեշտ է հստակ կանոնակարգել փակ և կիսափակ տիպի հաստատություններում իրականացվող դատական նիստերի վերաբերյալ հասարակության ներկայացուցիչների իրազեկվածությունը, հասարակության ներկայացուցիչների անարգել մուտքի ապահովումը դռնբաց դատական նիստին, կողմերի այլ դատավարական իրավունքների ապահովումը, դատական նիստերի պարտադիր արձանագրումը, պետական խորհրդանիշերի օգտագործումը:

7.6. Ներդնել դատական ծախսերի բաշխման արդար, թափանցիկ և հստակ համակարգ:

Հայաստանի Հանրապետության ներկայիս դատական օրենսգրքը և քրեական, քաղաքացիական և վարչական դատավարության օրենսգրքերը չեն սահմա-

նում դատարանի կողմից դատավճիռ կամ վճիռ կայացնելիս դատավարության մասնակիցների միջև դատական ծախսերի բաշխման հարցի արդար և թափանցիկ լուծման համար բավարար երաշխիքներ: Բացի այդ, համապատասխան օրենսգրքերով նախատեսված չէ նաև դատավարության մասնակիցների մասնակցության հնարավորությունը դատարանի կողմից դատական ծախսերի բաշխման հարցի լուծմանը: Ուստի անհրաժեշտ է փոփոխություններ կատարել Հայաստանի Հանրապետության դատավարական օրենսգրքերում:

7.7. Ներդնել դատական վարույթների մասին ծանուցման առավել արդյունավետ մեթոդներ.

7.7.1. Անցկացնել ուսումնասիրություն՝ պարզելու դատարանների կողմից ծանուցումներ տալու առավել արդյունավետ մեթոդները.

7.7.2. Հիմնվելով ուսումնասիրության արդյունքների վրա՝ կատարել անհրաժեշտ օրենսդրական փոփոխություններ դատական ծանուցումների առավել արդյունավետ մեթոդներ ներդնելու նպատակով:

Ծանուցման ինստիտուտը դատավարական կարևոր ինստիտուտներից է և դատավարության մասնակիցների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության կարևորագույն միջոց: Դատական ծանուցումների ներկայիս համակարգը հաճախ հանգեցնում է դատական գործերով ողջամիտ ժամկետի խախտման, դատավարության մասնակիցների չծանուցված լինելու պայմաններում նրանց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ վճռի կայացման: Այդ ինստիտուտը կատարելագործելու համար անհրաժեշտ է անցկացնել ուսումնասիրություն՝ պարզելու դատական ծանուցումներ հանձնելու առավել արդյունավետ մեթոդները և դրա արդյունքների հիման վրա ձեռնարկել համապատասխան օրենսդրական և այլ միջոցառումներ:

7.8. Կատարելագործել դատական քննության պարզեցված ընթացակարգերը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դատական քննության՝ ողջամիտ ժամկետում իրականացումը կնպաստի դատարանների նկատմամբ վստահության բարձրացմանը, ինչպես նաև կրեթի դատական ծախսերի նվազեցմանը և միջոցների խնայողությանը՝ անհրաժեշտ է կատարելագործել քաղաքացիական դատավարությունում արագացված դատական քննության ինստիտուտը: Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում անհրաժեշտ է կատարել համապատասխան փոփոխություններ՝ որպես արագացված դատաքննության կիրառման հիմք սահմանելով, մասնավորապես, դատավարության մասնակիցների միջև գործի փաստական հանգամանքների վերաբերյալ վեճի բացակայությունը:

Վարչական արդարադատության բնագավառում ևս առանձին գործերի քննության համար պարզեցված ընթացակարգերի նախատեսումը կարող է զգալիորեն

նպաստել արդարադատության իրականացման արդյունավետության բարձրացմանը:

7.9. Վերանայել հայցն առանց քննության թողնելու և գործի վարույթի կարճման հիմքերը:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում կատարված փոփոխություններով հանվեց հայցն առանց քննության թողնելու հնարավորությունն այն դեպքերում, երբ նիստի ժամանակի և վայրի մասին պատշաճ ձևով տեղեկացված հայցվորը չի ներկայացել դատական նիստին և չի խնդրել գործն իր բացակայությամբ քննելու մասին, քանի որ գործնականում այն իրավամբ կարող էր ծառայել պատասխանողին դատական գործընթացներում անընդհատ ներգրավված պահելուն: Միևնույն ժամանակ նախատեսված է, որ դատական նիստի ժամանակի և վայրի մասին պատշաճ ձևով տեղեկացված պատասխանողի կամ հայցվորի չներկայանալն արգելք չէ գործի քննության համար: Նման կարգավորումները գործնականում առաջացնում են իրավիճակներ, երբ հայցվորն ու պատասխանողը չեն ներկայանում դատական նիստին, օրինակ՝ հաշտված լինելու հետևանքով, սակայն դատարանը պարտավոր է քննել գործը և կայացնել գործն ըստ էության լուծող դատական ակտ: Անհրաժեշտ է համապատասխան փոփոխություններ կատարել դատավարական օրենսգրքերում նման իրավիճակների կարգավորման նպատակով:

Դատավարական օրենսգրքերում անհրաժեշտ է լուծումներ նախատեսել նաև այն իրավիճակների դեպքում, երբ վեճն ըստ էության սպառվել է, օրինակ՝ պատասխանողի կողմից գույքային պահանջը կատարվել է:

7.10. Հստակեցնել միմյանց հետ կապված պահանջների ընդդատության կանոնները:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով լուծումներ չեն նախատեսված միմյանց հետ կապված մի քանի պահանջների ընդդատության հարցում, երբ, օրինակ, նույն գործի շրջանակներում առկա են վարչական և ընդհանուր իրավասության դատարաններին ընդդատյա պահանջներ: Ներկայումս հարցը կարգավորված է Դատարանների նախագահների խորհրդի որոշմամբ, սակայն անհրաժեշտ է նախատեսել հստակ լուծումներ դատավարական օրենսգրքերի մակարդակով:

7.11. Ուսումնասիրել քրեակատարողական հիմնարկի պետի որոշումների դեմ դատարան բերվող բողոքների ընդդատության հարցը:

Միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքներով անհրաժեշտ է որոշակիացնել քրեակատարողական հիմնարկի պետի որոշումների բողոքարկման ինստիտուտը՝ պարզելով այն հարցը, թե այդ բողոքները պետք է ընդդատյա լինեն վարչական, թե ընդհանուր իրավասության դատարանին:

7.12. Կատարելագործել դատական ակտերի որոնման համակարգը.

7.12.1. Դատական ակտերի որոնման համակարգը հարստացնել հանգուցային բառերով և ինդեքսներով դատական որոշումները որոնելու հնարավորությամբ.

7.12.2. Միջոցառումներ ձեռնարկել դատական ակտերի որոնման համակարգում դատավարության մասնակիցների անձնական տվյալների պաշտպանության ուղղությամբ:

Անհրաժեշտ է զարգացնել դատական ակտերի որոնման համակարգը, ապահովել դրա շարունակական թարմացումն ու համալրումը, կատարելագործումը դատական ակտերը հանգուցային բառերով և ինդեքսներով որոնելու հնարավորությամբ: Կատարելագործված համակարգը պետք է հնարավորություն տա հայտնաբերել ոչ միայն առանձին որոշումներ, այլև փնտրվող հանգուցային բառերի և ինդեքսների վերաբերյալ այլ վիճակագրական տեղեկատվություն (օրինակ՝ տվյալ հանգուցային բառի կրկնման հաճախականությունը): Դատական ակտերի որոնման համակարգում անհրաժեշտ է ներառել նաև Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշումները:

Միևնույն ժամանակ անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել դատավարության մասնակիցների անձնական տվյալների պաշտպանության ուղղությամբ այն հաշվով, որ անձնական տվյալները մատչելի չլինեն հանրությանը:

7.13. Դատարանների վարչական շենքերի բաց գոտիներում դատախազների և փաստաբանների համար նախատեսել առանձին սենյակ:

Իրենց դատավարական գործառույթները դատարանում արդյունավետ իրականացնելու, դատական նիստերին պատրաստվելու համար ինչպես դատախազները, այնպես էլ փաստաբանները, հնարավորության դեպքում, պետք է դատարանում ապահովված լինեն աշխատանքի բարվոք պայմաններով: Այս առումով կարևոր է դատախազների և փաստաբանների համար դատարանների վարչական շենքերի բաց գոտիներում նախատեսել առանձին սենյակ:

8. ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵՓՈՒՆՈՒՄՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

Փաստաբանական համակարգի բարեփոխման նպատակով անհրաժեշտ է.

8.1. Հստակեցնել անվճար իրավաբանական օգնության շրջանակը և բարելավել դրա որակը.

8.1.1. Անվճար իրավաբանական օգնության տրամադրման համար մշակել չափանիշներ, որոնց հիման վրա հնարավոր կլինի գնահատել անձի գույքային դրությունը.

8.1.2. Իրականացնել կարիքների գնահատում՝ պարզելու անվճար իրավաբանական օգնության ծավալները և հանրային պաշտպանների անհրաժեշտ թվաքանակը.

8.1.3. Ուսումնասիրել հանրային պաշտպանի գրասենյակի ֆիզիկական մատչելիության ապահովման խնդիրները, մասնավորապես՝ Երևանում և մարզերում հանրային պաշտպանի գրասենյակներին ծառայեցնելու նպատակով համապատասխան պետական շինություններ հատկացնելու հնարավորությունը

8.1.4. Ապահովել հանրային պաշտպանի գրասենյակի ինստիտուցիոնալ բարեփոխումը, հանրային պաշտպանների թվակազմի օպտիմալացումը, հանրային պաշտպան դառնալու ընթացակարգի թափանցիկությունն ու մրցակցությունը, հանրային պաշտպանների մասնագիտացումը.

8.1.5. Մշակել անվճար իրավաբանական օգնության տրամադրման այլընտրանքային մեխանիզմներ:

Ներկայումս անվճար իրավաբանական օգնությունը տրամադրվում է՝ հաշվի առնելով անձի գույքային դրությունը, սակայն սահմանված չեն այն չափանիշները, որոնք հնարավորություն կտան որոշելու անձի գույքային դրությունը: Արդյունքում այս հարցում հնարավոր է ոչ միատեսակ մոտեցման ցուցաբերում: Անհրաժեշտ է մշակել և հաստատել համապատասխան չափանիշներ և իրավաբանական օգնության տրամադրումը իրականացնել դրանց հիման վրա: Բացի այդ, անհրաժեշտ է կանոնակարգել անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու վերաբերյալ որոշում կայացնելու իրավասություն ունեցող մարմինների շրջանակը, լիազորությունները, օգնության դիմելու և տրամադրելու ընթացակարգը, մերժման որոշումների բողոքարկումը, օգնություն տրամադրող փաստաբանների ընտրության և նշանակման, ծառայությունների որակի նկատմամբ վերահսկողության և պատասխանատվության հարցերը:

Անվճար իրավաբանական օգնության համակարգը բարեփոխելու համար անհրաժեշտ է կատարել ուսումնասիրություն՝ պարզելու անվճար իրավաբանական օգնության ծավալները և հանրային պաշտպանների անհրաժեշտ թվաքանակը:

Ներկայումս շատ դեպքերում հանրային պաշտպանների գրասենյակները չունեն համապատասխան ենթակառուցվածքներ (տարածքներ), ուստի անհրաժեշտ է ուսումնասիրել հանրային պաշտպանի գրասենյակների համար անհրաժեշտ տարածքներ հատկացնելու և դրանց վերանորոգման վերաբերյալ խնդիրները՝ գրասենյակների բնականոն գործունեությունն ապահովելու համար:

Հանրային պաշտպանների գործունեության արդյունավետության բարձրացման առումով անհրաժեշտ է ուսումնասիրել հանրային պաշտպանի գրասենյակում աստիճանաբար որոշակի մասնագիտացում ներդնելու նպատակահարմարությունը (օրինակ՝ անչափահասների գործերով, զինվորական հանցագործություններով):

Միաժամանակ անհրաժեշտ է ուսումնասիրել անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու այլընտրանքային ձևերին վերաբերող միջազգային փորձը, օրինակ, փաստաբանի կողմից մեկ տարվա ընթացքում որոշակի քանակի գործերով անվճար իրավաբանական օգնություն ցուցաբերելու պարտականություն ամրագրելու կամ որոշակի քանակի գործերով ըստ հաստատված գնացուցակի իրավաբանական օգնություն ցուցաբերելու հարցը՝ պետության կողմից հատուցման նախապայմանով:

8.2. Ապահովել փաստաբանների լիարժեք պատրաստումը և վերապատրաստումը.

8.2.1. Մշակել փաստաբանների առաջնային ուսուցման ուսումնական ծրագիր՝ առանձնակի ուշադրություն դարձնելով դատական նիստերի դահլիճում կիրառվող պրակտիկ հմտություններին.

8.2.3. Մշակել փաստաբանների վարքագծի կանոնների, փաստաբանական հմտությունների, դատական պրակտիկայի և գործերի նախապատրաստման թեմաներով փաստաբանների մասնագիտական շարունակական վերապատրաստման ուսումնական ծրագրեր:

Պրոֆեսիոնալ փաստաբանական համակարգի առկայությունը պահանջում է ինչպես ապագա փաստաբանների պատրաստում հստակ մշակված ծրագրով, այնպես էլ փաստաբանների շարունակական վերապատրաստում: Փաստաբանների մասնագիտական գիտելիքների և հմտությունների զարգացմանն ուղղված մասնագիտական պատրաստման և վերապատրաստման ծրագրերի շրջանակում առանձնակի շեշտադրում պետք է կատարվի, մասնավորապես, դատական նիստերի դահլիճում կիրառվող պրակտիկ հմտությունների զարգացմանը, փաստաբանների վարքագծի կանոնների, փաստաբանական հմտությունների, դատական պրակտիկայի և գործերի նախապատրաստման թեմաներին:

9. ԴԱՏԱԽԱՂՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ

Դատախազության գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով անհրաժեշտ է.

9.1. Ապահովել դատախազության լիարժեք անկախությունն ու հաշվետվողականությունը, դատախազության գործունեությանը չմիջամտելու սկզբունքի իրացումը.

9.1.1. Որպես դատախազների անկախության ապահովման երաշխիք վերանայել դատախազների նշանակման կարգը՝ նախատեսելով դատախազների թեկնածուների ցուցակից թեկնածուներին հանելու հստակ չափանիշներ, ինչպես նաև վերանայել դատախազների ծառայողական առաջխաղացման կարգն ու պայմանները՝ նախատեսելով առաջխաղացման հստակ չափանիշներ.

9.1.2. Հստակեցնել դատախազների վերադասության հարաբերությունները կարգավորող նորմերը՝ համապատասխան փոփոխություններ կատարելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում.

9.1.3. Սահմանել միևնույն դատախազության կամ կառուցվածքային ստորաբաժանման դատախազի վարույթից նույն դատախազության կամ կառուցվածքային ստորաբաժանման մեկ այլ դատախազի վարույթ գործերը տեղափոխելու հստակ և կանխատեսելի հիմքեր:

Դատախազության համակարգի բարեփոխմանն ուղղված միջոցառումների շրջանակներում անհրաժեշտ է ուժեղացնել դատախազության ինչպես արտաքին, այնպես էլ ներքին անկախությունը: Դատախազության գործունեությունը պետք է զերծ լինի արտաքին ցանկացած միջամտությունից կամ ճնշումից, իսկ դատախազության համակարգում անհրաժեշտ է ապահովել ներքին անկախություն: Որպես անկախության երաշխիքներ պետք է վերանայել դատախազների նշանակման կարգը՝ նախատեսելով դատախազների թեկնածուների ցուցակից թեկնածուներին հանելու հստակ չափանիշներ, ինչպես նաև վերանայել դատախազների ծառայողական առաջխաղացման կարգն ու պայմանները՝ նախատեսելով առաջխաղացման հստակ չափանիշներ, օբյեկտիվ և թափանցիկ ընթացակարգեր:

Դատախազության համակարգի բարեփոխմանն ուղղված միջոցառումների շրջանակներում անհրաժեշտ է հստակեցնել դատախազների վերադասության հարաբերությունները, մասնավորապես «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կանոնակարգելով դրանք կարգավորող նորմերը, արդյունքում բարձրացնելով վերադաս և ստորադաս դատախազների հարաբերությունների կանոնակարգման արդյունավետությունը և բացառելով իրավակիրառ պրակտիկայում առաջացող բարդությունները:

Հարկավոր է բացառել առանց օբյեկտիվ հիմքերի միևնույն դատախազության կամ կառուցվածքային ստորաբաժանման դատախազի վարույթից նույն դատախազության կամ կառուցվածքային ստորաբաժանման մեկ այլ դատախազի վարույթ գործերը տեղափոխելը՝ որպես դատախազի ներքին անկախությունն ապահովելու երաշխիքներ:

9.2. Ուսումնասիրել քրեաիրավական ոլորտից դուրս պետական շահերի պաշտպանության բնագավառում դատախազության գործառույթները.

9.2.1. Փոփոխություններ կատարել «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում (ըստ ուսումնասիրության արդյունքներով հաստատված անհրաժեշտության):

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 103-րդ հոդվածի համաձայն՝ դատախազությունը պետական շահերի պաշտպանության նպատակով հայց է հարուցում դատարան: Դատախազության դերը և լիազորությունների շրջանակը, այդ թվում՝ ոչ քրեական գործառույթների առկայությունը էապես կախված է ազգի

մշակութային ժառանգությունից, իրավական սովորույթներից և սահմանադրական պատմությունից: Այդուհանդերձ, վերջին ժամանակներում Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արձանագրել է Եվրոպական կոնվենցիայի խախտում, կապված դատախազների՝ ոչ քրեական գործառույթների իրականացման հետ և ընդգծել է պատշաճ և հստակ կանոնակարգված ընթացակարգերի պարտադիրությունը: Այս առումով, քրեաիրավական ոլորտից դուրս դատախազության միջամտությունը պետք է արդարացված լինի հասարակության անունից հանուն հանրային շահի գործելու ընդհանուր պարտականության կատարմամբ և դրա իրականացումը չպետք է խաթարի իշխանությունների տարանջատման սկզբունքը:

Դատախազության սահմանադրական այս գործառույթի կենսագործումն առավել արդյունավետ դարձնելու և այն ժամանակակից իրավական պետության չափանիշներին համապատասխանեցնելու համար անհրաժեշտ է վերանայել քրեաիրավական ոլորտից դուրս դատախազության դերը, որոշակիացնել «պետական շահերի պաշտպանության» շրջանակները և հստակեցնել այդ ոլորտում դատախազության լիազորությունները:

9.3. Բարեփոխել դատախազներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու համակարգը՝ հստակեցնելով կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերը:

Դատախազներին պատասխանատվության ենթարկելու ներկայիս համակարգի պայմաններում երաշխավորված չէ ոչ խտրական մոտեցումը դատախազներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցում: Այդ առումով անհրաժեշտ է հստակեցնել կարգապահական պատասխանատվության ենթարկելու ընթացակարգերը՝ ապահովելով դրանց օբյեկտիվությունը և կայացվող որոշումների մատչելիությունը: Պետք է նախատեսվեն դատախազների վարքագծի կանոնների վերաբերյալ խորհրդատվություն ստանալու համար էթիկայի հանձնաժողովին դիմելու մեխանիզմներ:

9.4. Պարզել դատախազի օգնականի ինստիտուտը ներդնելու նպատակահարմարությունը.

9.4.1. Կատարել ուսումնասիրություն՝ պարզելու համար դատախազի օգնականի ինստիտուտը ներդնելու կարիքն ու դատախազի օգնականի հնարավոր գործառույթները.

9.4.2. Ուսումնասիրության արդյունքների հիման վրա կատարել օրենսդրական փոփոխություններ (ըստ անհրաժեշտության):

Ներկայումս Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի և նրա տեղակալների օգնականները իրականացնում են կազմակերպական և տեխնիկական սպասարկման գործառույթ՝ օժտված չլինելով դատախազի համար Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ նախատեսված լիազորություններով: Ընդ որում, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի օգնականները ոչ

միայն կազմակերպական և տեխնիկական սպասարկման գործառույթ են իրականացնում, այլև նրա առանձին հանձնարարականներ, որոնք ուղղված են դատախազության գործունեության արդյունավետության բարձրացմանը: Անհրաժեշտ է կատարել համապատասխան ուսումնասիրություններ՝ պարզելու դատախազի օգնականի ինստիտուտի ներդրման անհրաժեշտությունը և, ըստ անհրաժեշտության, «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կատարել համապատասխան փոփոխություններ:

9.5. Բարելավել տեղեկատվական և հաղորդակցային տեխնոլոգիաների ոլորտում դատախազության կարողությունները.

9.5.1. Ներդնել դատախազական գործունեության արդյունքների մատչելի հաշվառումն ու վերլուծությունն ապահովող «Դատախազի աշխատանքի մասին» վիճակագրության վարման էլեկտրոնային կառավարման համակարգչային համակարգ.

9.5.2. Ներդնել դատախազությունում արխիվից օգտվելու մատչելիությունն ապահովող արխիվի վարման էլեկտրոնային կառավարման համակարգչային համակարգ.

9.5.3. Իրականացնել տեղեկատվական և հաղորդակցային տեխնոլոգիաների ոլորտում դատախազների կարողությունների բարելավմանն ուղղված շարունակական վերապատրաստումներ:

Դատարաններում տեղեկատվական տեխնոլոգիաների բարեփոխմանը զուգահեռ անհրաժեշտ է նույնանման քայլեր կատարել դատախազության համակարգում՝ հնարավորինս թվայնացնելով դատախազության արխիվները, ներդնել դատախազական գործունեության արդյունքների մատչելի հաշվառումն ու վերլուծությունն ապահովող վիճակագրության վարման էլեկտրոնային կառավարման համակարգչային համակարգ, դատախազությունում արխիվից օգտվելու մատչելիությունն ապահովող արխիվի վարման էլեկտրոնային կառավարման համակարգչային համակարգ: Զուգահեռաբար անհրաժեշտ է միջոցառումներ ձեռնարկել տեղեկատվական և հաղորդակցային տեխնոլոգիաների ոլորտում դատախազների կարողությունների բարելավման ուղղությամբ:

9.6. Ուսումնասիրել պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության դատախազական գործառույթի բնագավառում միջազգային փորձը՝ ըստ անհրաժեշտության նախատեսելով դրա արդյունավետության բարձրացմանն ուղղված միջաջառումներ:

Պատժի և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ դատախազական հսկողությունը դրանք կրող անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության կարևոր երաշխիքն է: Դրանով պայմանավորված՝ անհրաժեշտ է ուսումնասիրել միջազգային փորձը՝ պարզելու այդ բնագավա-

ռում դատախազական հսկողության արդյունավետությունը բարձրացնելու ուղիները, որոնք մի կողմից կապահովեն դատախազության և պատժի կիրառումն ապահովող մարմինների առավել արդյունավետ համագործակցությունը, մյուս կողմից լիարժեք կապահովեն պատիժը կամ հարկադրանքի միջոցները կրող անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը: Այս խնդրի համատեքստում անհրաժեշտ է ուսումնասիրել դատախազության հսկողության շրջանակների հարցը:

9.7. Առանձին իրավական կարգավորման ենթարկել դատախազության աշխատակազմում պետական ծառայությունը.

9.7.1. Մշակել «Դատախազական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ:

«Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ դատախազության աշխատակազմում պետական ծառայության հետ կապված հարաբերությունների վրա տարածվում են «Դատական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներն այնքանով, որքանով դրանք իրենց էությանը կիրառելի են դատախազության աշխատակազմում պետական ծառայության նկատմամբ և չեն հակասում այդ օրենքին: Հարցի նման իրավական կարգավորումը գործնականում առաջացնում է լայնածավալ և տարաբնույթ մեկնաբանությունների անհրաժեշտություն: Իրավական հստակության և կանխատեսելիության տեսանկյունից անհրաժեշտ է դատախազության աշխատակազմում պետական ծառայության հարցերը կարգավորել առանձին օրենքով, որը լիարժեք կերպով հաշվի կառնի պետական ծառայության այս տեսակի առանձնահատկությունները և համալիր կկարգավորի այն:

9.8. Ապահովել դատախազի կողմից իր լիազորությունների շրջանակում տրված օրինական պահանջների պարտադիր կատարումը.

9.8.1. Փոփոխություններ կատարել «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում:

«Դատախազության մասին» գործող օրենքը հստակ չի նախատեսում որևէ դրույթ դատախազի օրինական պահանջների պարտադիր կատարման վերաբերյալ: Նման դրույթի բացակայությունը գործնականում խնդիրներ է առաջացնում դատախազությանն օրենքով վերապահված լիազորությունների պատշաճ իրականացման հարցում, մասնավորապես, տարբեր մարմիններից, ըստ անհրաժեշտության, փաստաթղթեր, նյութեր, բացատրություններ պահանջելու առումով: Դատախազության գործունեության արդյունավետության բարձրացման տեսանկյունից անհրաժեշտ է օրենսդրորեն հստակ ամրագրել դատախազի օրինական պահանջների պարտադիր կատարման պահանջը:

9.9. Ուսումնասիրել հանցավորության դեմ պայքարում իրավապահ մարմինների գործողությունների համակարգման կազմակերպահրավական կառու-

ցակարգերը՝ ըստ անհրաժեշտության համապատասխան փոփոխություններ կատարելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում:

Հանցավորության դեմ պայքարի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է ունենալ այնպիսի իրավական կառուցակարգեր և ծրագրեր, որոնք կնպաստեն իրավապահ մարմինների գործունեության և նրանց միջև համագործակցության արդյունավետության բարձրացմանը, նախապատրաստվող և կատարվող հանցագործությունների առավել արագ խափանմանը և բացահայտմանը: Այս առումով անհրաժեշտ է կատարել միջազգային փորձի ուսումնասիրություն և դրա արդյունքներով զարգացնել հանցավորության դեմ պայքարում դատախազության և այլ իրավապահ մարմինների փոխգործակցությունը, հստակեցնել դատախազության դերակատարումը այս գործընթացում:

10. ԱՐՔԻՏՐԱԺԱՅԻՆ, ՆՈՏԱՐԱԿԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՌԵԳԻՍՏՐՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ

Արբիտրաժային, նոտարական և հանրային ռեգիստրների համակարգերի արդյունավետության բարձրացման նպատակով անհրաժեշտ է՝

10.1. Կատարելագործել և խթանել արբիտրաժի միջոցով վեճերի լուծման այլընտրանքային մեխանիզմները.

10.1.1. Իրականացնել արբիտրների ուսուցմանը, նրանց մասնագիտական որակների զարգացմանն ուղղված միջոցառումներ.

10.1.2. Դատավորների վերապատրաստման ծրագրերում ներառել արբիտրաժի հետ հարաբերություններին վերաբերող թեմատիկ դասընթացներ.

10.1.3. Ուսումնասիրել արբիտրների որակավորման կամավոր հավաստման, արբիտրների կողմից էթիկայի կանոնների պահպանման նկատմամբ վերահսկողության ուժեղացմանն ուղղված կառուցակարգերի ներդրման հնարավորությունները՝ միջազգային փորձին համահունչ.

10.1.4. Մշակել արբիտրների էթիկայի կանոններ և արբիտրաժում վարույթի տիպային կանոններ:

Վեճերի արտադատական եղանակով լուծման խթանմանն ուղղված լուրջ քայլ էր ՄԱԿ-ի ՅՈՒՆՍԻՏՐԱԼ-ի մոդելային օրենքի դրույթների և սկզբունքների վրա հիմնված «Առևտրային արբիտրաժի մասին» 2006 թ. դեկտեմբերի 25-ի Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունումը: Օրենքը միջազգային չափանիշներին համապատասխանող օրենսդրական հենք ձևավորեց Հայաստանում արբիտրաժային գործընթացի իրականացման համար: Այդուհանդերձ, արբիտրաժային մեծ փորձ և մշակույթ չունեցող երկրների համար արբիտրաժը խթանելուն ուղղված շարունա-

կական և համակարգային քայլեր են անհրաժեշտ: Հայաստանի Հանրապետությունում արբիտրաժի ինստիտուտը կայացնելու համար դեռևս առկա է թե՛ որակյալ մասնագետների, թե՛ դատարանների կողմից արբիտրաժային որոշումների հարկադիր կատարման, չեղյալ ճանաչման, արբիտրների նշանակման և դատարան-արբիտրաժ համագործակցության ոլորտներում փորձի պակաս: Այս խնդիրների լուծման համար անհրաժեշտ է իրականացնել մի շարք միջոցառումներ, մասնավորապես՝ արբիտրների ուսուցում, դատավորների վերապատրաստման ծրագրերում արբիտրաժի հետ հարաբերություններին վերաբերող թեմատիկ դասընթացների ներառում, ինչպես նաև խթանել համագործակցությունը միջազգային արբիտրների հետ՝ Հայաստանում տեղական կարողությունները զարգացնելու նպատակով համատեղ ուսուցողական արբիտրաժներ իրականացնելու ուղղությամբ: Արբիտրների հեղինակության և նրանց նկատմամբ վստահության բարձրացմանը կարող են նպաստել արբիտրների հավաստման, որակավորված արբիտրների միասնական ցուցակի վարման, ինչպես նաև արբիտրների կողմից էթիկայի կանոնների պահպանման նկատմամբ վերահսկողության ուժեղացմանն ուղղված համապատասխան կառուցակարգերի ներդրումը:

Արբիտրաժի հեղինակության բարձրացման և գործերի քննության ընթացակարգերի կատարելագործման առումով անհրաժեշտ է մշակել արբիտրների էթիկայի և արբիտրաժում վարույթի տիպային կանոններ:

Ավելին, «Առևտրային արբիտրաժի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի գործողությունը տարածվում է առևտրային արբիտրաժին առնչվող հարաբերությունների վրա: Մինչդեռ արբիտրաժային մշակույթի խթանումը պահանջում է նաև այլ իրավահարաբերություններից բխող վեճերը արբիտրաժային ընթացակարգերով լուծման հանձնելու օրենսդրական կարգավորումների հստակեցում: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է ընտանեկան, աշխատանքային, սպառողական կարիքների համար կնքված քաղաքացիաիրավական հարաբերություններից բխող վեճերին: Արբիտրաժի միջոցով լուծման ենթակա վեճերի շրջանակի ընդլայնմանը զուգահեռ անհրաժեշտ է օրենքով սահմանել սպառողների շահերի պաշտպանության որոշակի մեխանիզմներ՝ ուղղված վեճը պետական դատարանին հանձնելու իրավունքից զրկելուն և արբիտրաժի միջոցով վեճերի լուծումը պարտադրելու կանխարգելմանը: Օրենսդրական երաշխիքները պետք է ուղղված լինեն այնպիսի իրավիճակների կանխմանը, երբ արբիտրաժի միջոցով վեճի լուծման համաձայնությունը ձեռք է բերվել, մասնավորապես, կողմերի փաստացի անհավասար վիճակից օգտվելու կամ սպառողի/աշխատողի կողմից արբիտրաժի էության չընկալման կամ պայմանագրում արբիտրաժային համաձայնությունը չնկատելու արդյունքում:

10.2. Ուսումնասիրել առաջին ատյանի դատարանների կողմից քաղաքացիական գործերը միջնորդ-հաշտարարներին հասցեագրելու ինստիտուտի ներդրման միջազգային փորձը և հեռանկարները.

10.2.1. Կատարել ուսումնասիրություն՝ պարզելու համար առաջին ատյանի դատարանների կողմից քաղաքացիական գործերը միջնորդ-հաշտարարներին հասցեագրելու ինստիտուտի ներդրման նպատակահարմարությունը և մեխանիզմները.

10.2.2. Մշակել միջնորդ-հաշտարարության իրականացման օրենսդրական հիմքերը (ըստ անհրաժեշտության).

10.2.3. Խթանել միջնորդ-հաշտարարների էթիկայի և հաշտարարության իրականացման ընթացակարգային տիպային կանոնների մշակումը.

10.2.4. Խթանել միջնորդ-հաշտարարների մասնագիտական պատրաստման ծրագրերի ներդրումը:

Քաղաքացիական գործերով դատարանների ծանրաբեռնվածությունը նվազեցնելու հարցում միջազգային պրակտիկայում աստիճանաբար լայն կիրառում ստացող ընթացակարգ է առաջին ատյանի դատարանների կողմից քաղաքացիական գործերը միջնորդ-հաշտարարներին հասցեագրելու ինստիտուտը: Վերջինս հնարավորություն է ընձեռում լուծելու վեճը կողմերի հաշտեցման ճանապարհով՝ թույլ տալով խնայել միջոցներ և ժամանակ: Հայաստանի Հանրապետությունում այս ինստիտուտի ներդրման նպատակահարմարության և արդյունավետության գնահատումը պահանջում է միջազգային փորձի ուսումնասիրություն և ինստիտուտի փորձարկում: Տվյալ ինստիտուտի կայացման համար անհրաժեշտ է նաև մշակել միջնորդ-հաշտարարության իրականացման օրենսդրական հիմքեր, խթանել միջնորդ-հաշտարարների էթիկայի և հաշտարարության իրականացման ընթացակարգային (առնվազն տիպային) կանոնների մշակումը, խթանել միջնորդ-հաշտարարների մասնագիտական պատրաստման ծրագրերի ներդրումը:

10.3. Նոտարիատում ներդնել էլեկտրոնային նոտարի համակարգը և մեկ պատուհանի սկզբունքը.

10.3.1. Իրականացնել էլեկտրոնային կառավարման համակարգչային համակարգի ծրագրային և տեխնիկական ապահովումը.

10.3.2. Առանձին նոտարական գրասենյակներում փորձարկել էլեկտրոնային կառավարման համակարգչային համակարգն ու վերացնել ծրագրային թերությունները.

10.3.3. Էլեկտրոնային կառավարման համակարգչային համակարգը կիրառել բոլոր նոտարական գրասենյակներում:

Պետական կառավարման տարբեր համակարգերում և ռեգիստրներում էլեկտրոնային կառավարման համակարգերի ներդրումը հնարավորություն է ընձեռում նոտարական գործառույթներն իրականացնել մեկ պատուհանի սկզբուն-

քով: Նշված եղանակով նոտարական ծառայությունների մատուցումը կնպաստի ինչպես քաղաքացիների սպասարկման որակի բարձրացմանը, այնպես էլ հնարավորություն կտա խուսափել փաստաթղթերի կեղծման հետ կապված խախտումներից, քանի որ նշված համակարգը ներդնելուց հետո նոտարը հնարավորություն կունենա և պարտավոր կլինի բոլոր տեղեկություններն ու փաստաթղթերը ստանալ անմիջականորեն համապատասխան պետական մարմիններից կամ գրանցամատյաններից:

10.4. Չարգացնել քաղաքացիական կացության ակտերի գրանցման էլեկտրոնային համակարգը.

10.4.1. Ապահովել քաղաքացիական կացության ակտերի գրանցման էլեկտրոնային բազայի թվայնացումը.

10.4.2. Ապահովել քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններում գրառվող անհատական տվյալների գաղտնիության պահպանությունը.

10.4.3. Գործարկել քաղաքացիական կացության ակտերի գրանցման էլեկտրոնային համակարգը:

2010թ. քաղաքացիական կացության ակտերի գրանցման համակարգում փորձ է կատարվել ստեղծել կենտրոնացված տվյալների բազա: Նշված տվյալների բազան բավականին արդյունավետ գործում է արդեն այսօր, ինչը հնարավորություն է տալիս զգալիորեն բարելավել մատուցվող ծառայությունների որակը: Միննույն ժամանակ, նշված համակարգը չի պարունակում համապարփակ տեղեկություններ քաղաքացիական կացության գրանցումների վերաբերյալ, իսկ մինչև 2010թ. իրականացված գրանցումները թվայնացված չեն: Դրա արդյունքում զգալիորեն նվազում է տվյալների բազայի (տեղեկատվական համակարգի) արդյունավետությունը: Մեծ կարևորություն ունի նաև քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններում գրառվող անհատական տվյալների գաղտնիության պահպանությունը: Համապատասխան օրենսդրական փոփոխություններից և տեղեկատվական համակարգի տեղակայումից հետո քաղաքացիների համար կնվազի վարչական բեռը, կբարելավվի տվյալների բազայի և տեղեկատվական համակարգի անվտանգությունը, առավել կպահպանվեն քաղաքացիների շահերը:

10.5. Ֆիզիկական և իրավաբանական անձանց մեկ պատուհանի սկզբունքով կենտրոնացված ծառայությունների մատուցում՝ հիմնելով հանրային ռեգիստրների վարման (գրանցման) միասնական սպասարկման կենտրոններ.

10.5.1. Ընդունել «Հանրային ռեգիստրների վարման (գրանցման) միասնական սպասարկման կենտրոնների ներդրման հայեցակարգի մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում.

10.5.2. Իրականացնել համապատասխան ծրագրային ապահովում, որը հնարավորություն կտա միասնական միջերեսի միջոցով միանալ և տեղեկատվություն փոխանակել գործող տվյալների բազաների հետ.

10.5.3. Մարզերում աստիճանաբար շահագործման հանձնել միասնական վերանորոգված սպասարկման կենտրոններ:

Մի շարք ծառայություններ արդեն իսկ հնարավոր է դարձել հանրությանը մատուցել առցանց կամ բարելավված սպասարկման կենտրոնների միջոցով՝ կիրառելով նորագույն տեխնոլոգիաներ, ինչի հաշվին զգալիորեն բարելավվել է ծառայությունների մատուցման որակը, կրճատվել են ծառայությունների մատուցման ժամկետները, նվազեցվել են կոռուպցիոն ռիսկերը: Նշված փոփոխությունները իրականացվել են իրավաբանական անձանց պետական գրանցման, անշարժ և շարժական գույքի, ներառյալ ավտոմոբիլային տրանսպորտի գրանցման և հաշվառման, անձնագրերի և այլ փաստաթղթերի տրամադրման գործընթացում: Թվայնացում դեռևս պետք է իրականացվի քաղաքացիական կացության ակտերի գրանցման ոլորտում, ինչպես նաև որոշակի բարելավումներ պետք է իրականացվեն արդեն իսկ գործարկված համակարգերում՝ դրանք զարգացնելու, դրանց արդյունավետությունն առավել բարձրացնելու, ինչպես նաև ինքնաշխատ կերպով մատուցվող ծառայությունների մասնաբաժինը ավելացնելու նպատակով:

Նշված բարեփոխումների տրամաբանական շարունակությունն է արդարադատության ոլորտի հանրային ռեգիստրներն ընդհանուր սպասարկման կենտրոններից վարելը, ինչը հնարավորություն կտա օպտիմալացնել սպասարկման և ծառայությունների մատուցման կենտրոնների աշխարհագրությունը՝ համապատասխան մասնագետներ ունենալով նաև միջին և առանձին փոքր չափի գրասենյակներում: Նշված միասնական սպասարկման կենտրոնները պետք է միասնականորեն իրականացնեն իրավաբանական անձանց պետական գրանցման, բնակչության ռեգիստրի գրանցումների, անշարժ և շարժական գույքի գրանցման, ինչպես նաև ազգային արխիվի հետ կապված գործառույթներ: Ընդ որում, սպասարկման և գրանցման գործառույթների տարանջատումը հնարավորություն է տալիս սկզբնական շրջանում զգալի արդյունքների հասնել առանց մեծ հավելյալ ներդրումների, քանի որ անհրաժեշտություն է առաջանում միայն միավորել սպասարկման ոլորտը, իսկ բուն գրանցման գործառույթը, բացառությամբ ինքնաշխատ համակարգերով կատարվող գրանցումների, սկզբում կարող է իրականացվել առանձին կազմակերպչական միավորների կողմից (առանց քաղաքացու հետ շփվելու)՝ սպասարկման կենտրոնի աշխատակցի միջոցով համակարգ մուտքագրված փաստաթղթերի հիման վրա:

11. ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱՌՆՈՒՑՄԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄԸ

Իրավական համաուսուցման և իրավական դաստիարակության համակարգի վերակառուցման նպատակով անհրաժեշտ է.

11.1. Ապահովել իրավական համաուսուցման և համադաստիարակության պետականորեն ընդունված և նպատակայնորեն գործող համակարգի առկայությունը.

11.1.1. Ստեղծել միջգերատեսչական հանձնաժողով՝ բոլոր կրթական չափորոշիչները, հանրակրթական և հիմնական մասնագիտական կրթական ծրագրերը՝ նախնական, միջին, բարձրագույն և հետբուհական մակարդակներում վերանայելու համար:

Իրավական և դատական բարեփոխումների իրականացումն առանց հասարակության իրավագիտակցության բարձրացմանն ուղղված միջոցառումների չի կարող լինել ամբողջական և արդյունավետ: Իրավագիտակցության ցածր մակարդակի և իրավական նիհիլիզմի հաղթահարման հիմնական միջոցն իրավական համաուսուցման և համադաստիարակության պետականորեն ընդունված և նպատակայնորեն գործող համակարգի ներդրումն է: Սա ենթադրում է արդարադատության նախարարության, կրթության և գիտության նախարարության և կրթական կազմակերպությունների ներկայացուցիչներից կազմված միջգերատեսչական հանձնաժողովի ստեղծում, որը կվերանայի բոլոր կրթական չափորոշիչները, հանրակրթական և հիմնական մասնագիտական կրթական ծրագրերը՝ նախնական, միջին, բարձրագույն և հետբուհական մակարդակներում:

11.2. Բարձրացնել միջին և բարձրագույն մասնագիտական իրավաբանական կրթության որակը և իրավաբանական կրթությանը ներկայացվող պահանջները.

11.2.1. Նախատեսել արդարադատության ոլորտի միջնակարգ մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկ և դրան համապատասխան մշակել կրթական ծրագրեր և չափորոշիչներ.

11.2.2. Մշակել իրավաբանական կրթության բարեփոխման կառավարական ծրագիր.

11.2.3. Մշակել իրավական համաուսուցման և կրթության հարցերին վերաբերող համապատասխան նորմատիվ իրավական ակտեր:

Արդարադատության ոլորտում միջին մասնագիտական իրավաբանական կրթության նախատեսումն ու զարգացումը կարող են նպաստել հասարակության իրավագիտակցության բարձրացմանը, պետական և դատական համակարգի որոշ կառույցների գործունեության արդյունավետության բարձրացմանը, քանի որ կան աշխատանքներ, որոնց համար կարող է բավարար համարվել միջին մասնագիտական, այլ ոչ թե բարձրագույն իրավաբանական կրթություն ունենալը (օրինակ, դատական նիստի քարտուղարի, քրեակատարողական հիմնարկի աշխատողների, դատական կարգադրիչների և այլն): Այս առումով անհրաժեշտ է կազմել արդարադատության ոլորտի միջնակարգ մասնագիտական կրթության մասնագիտություն-

ների ցանկ և դրան համապատասխան մշակել կրթական ծրագրեր և չափորոշիչներ, կազմակերպել այդ մասնագիտություններով կրթություն:

Իրավական համակարգի զարգացման աստիճանը մեծապես կանխորոշվում է այն մասնագիտորեն կառուցող մարդկանց իրավագիտակցության մակարդակով: Իսկ ժամանակակից քաղաքակիրթ հասարակությունում մասնագիտական իրավագիտակցության ձևավորման առանցքային աղբյուրը բարձրագույն իրավաբանական կրթությունն է: Բարձրագույն իրավաբանական կրթության որակից է նաև ուղղակիորեն կախված պետական կառավարման արդյունավետությունը և զարգացումը: Գիտատեխնիկական առաջընթացը, նոր տեխնոլոգիաների, նորարարական համակարգերի զարգացումը, մասնագետների տեղաշարժի ազատության ընդլայնումը անխուսափելի և հրատապ են դարձնում բարձրագույն իրավաբանական կրթության ոլորտում քաղաքականության նոր սկզբունքների ձևավորումը, իրավաբանների պատրաստման նոր չափանիշների մշակումը և կիրառումը, բարձրագույն իրավաբանական կրթության ձևի և բովանդակության արդիականացումը:

Բարձրագույն իրավաբանական կրթության որակի բարելավումը հրատապ է «Իրավագիտություն» մասնագիտության տարիներով ձևավորված և շարունակվող բարձր պահանջարկով: Սակայն պետությանը և հասարակությանն անհրաժեշտ են իրավաբաններ, ովքեր ունեն նախաձեռնողականության և պատասխանատվության հատկանիշներ, իրավական մտածողություն և տրամաբանություն, իրավական համակարգի, իրավական արժեքների վերաբերյալ ընկալումներ, գրավոր և բանավոր շփման հմտություններ, կոնֆլիկտների լուծման և կոլեկտիվի կառավարման կարողություններ, իրենց առջև դրված խնդիրներին նոր տեխնոլոգիաների, ինովացիոն համակարգի արդյունքների օգտագործմամբ արագ արձագանքելու ունակություններ:

Սակայն զուտ բուհերի ջանքերով իրավաբանական կրթության բոլոր հիմնախնդիրների լուծումն անհնարին է, քանի որ դրանք մասամբ դուրս են բուհական համակարգից կամ բուհերի իրավասությունից: Բարձրագույն իրավաբանական կրթության բարեփոխումները պետք է զուգակցվեն պետական համակարգային կրթական բարեփոխումներով՝ ներառելով իրավական կրթության բոլոր բաղադրատարրերը: Առանց իրավական համաուսուցման և իրավաբանական կրթության զարգացման պետական հայեցակարգի, բուհական և ֆակուլտետային լոկալ բարեփոխումները չեն կարող ցանկալի արդյունք տալ:

Պետական մարմինների հետ ակտիվ համագործակցությամբ և նրանց օժանդակությամբ է, որ պետք է ապահովվի իրավաբանական կրթություն-գիտություն-պրակտիկա եռանկյունու արդյունավետ փոխգործունեությունը:

Անհրաժեշտ է մշակել իրավաբանական կրթության բարեփոխման կառավարական ծրագիր, որը կարտացոլի իրավական համաուսուցման և կրթության նպա-

տակների, խնդիրների, կազմակերպական ձևերի, բովանդակության և կառավարման հիմնահարցերի լուծմանն ուղղված խնդիրներն ու միջոցառումները, նրա մակարդակների և ձևերի ներդաշնակեցումը, կրթության մեթոդաբանության և իրավագետ-մասնագետի պատրաստման մեթոդիկայի կատարելագործումը:

Իրավաբանական կրթության իրավական կարգավորումը պետք է դուրս բերվի ընդհանուր օրենսդրական կարգավորման շրջանակից և առանձնացվի: Այդ կրթությունը հատուկ ակտերի միջոցով պետք է ստանա իր նորմատիվ իրավական ապահովումը:

12. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016թթ. ռազմավարական ծրագրի և ծրագրից բխող միջոցառումների ցանկի լիարժեք, արդյունավետ իրագործումն ապահովելու նպատակով կազմավորվում է աշխատանքային խումբ:

Սույն ծրագրի հետևողական իրականացման համար անհրաժեշտ է, որպեսզի այն ունենա ինչպես կոնկրետ միջոցառումների համար պատասխանատու մարմիններ, այնպես էլ այդ մարմինների միջև փոխգործակցությունն ապահովող՝ Հանրապետության Նախագահին հաշվետու աշխատանքային խումբ, որը պետք է ղեկավարի Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը:

Սույն ծրագրից բխող միջոցառումների ցանկում ամրագրված յուրաքանչյուր միջոցառման իրականացման համար պատասխանատուն այն մարմինն է (մարմիններն են), որը (որոնք) նշված են այդ ցանկում որպես «պատասխանատու մարմին»: Այն դեպքերում, երբ միջոցառումը ենթադրում է իրավական ակտի նախագծի կազմում, նախագիծը տվյալ միջոցառման համար պատասխանատու մարմնի կողմից պետք է նախապես ներկայացվի աշխատանքային խմբի անդամներին՝ կարծիք ստանալու նպատակով:

12.1. Ապահովել իրավական և դատական բարեփոխումների 2012-2016թթ. ռազմավարական ծրագրի իրականացման թափանցիկությունը.

12.1.1. Հանրության շրջանում տարածել տեղեկատվություն իրավական և դատական բարեփոխումների 2012-2016թթ. ռազմավարական ծրագրի վերաբերյալ.

12.1.2. Հրապարակել կիսամյակային հաշվետվություն՝ ծրագրի իրականացման ընթացքի վերաբերյալ.

12.1.3. Պատասխանատու մարմնի կողմից ըստ անհրաժեշտության ստեղծել աշխատանքային խմբեր:

Անհրաժեշտ է ապահովել իրավական և դատական բարեփոխումների 2012-2016թթ. ռազմավարական ծրագրի իրականացման թափանցիկությունը: Հասարակության լայն շրջանակների համար պետք է ապահովել մատչելի տեղեկատվություն հիշյալ ծրագրի վերաբերյալ, ինչպես նաև յուրաքանչյուր կիսամյակ հրապարակել ծրագրի իրականացման հաշվետվություն: Դա կնպաստի բարեփոխումների և դրանց իրականացման համար պատասխանատու մարմինների նկատմամբ հանրության վստահության բարձրացմանը, ինչը կոյուրացնի բարեփոխումները գործնականում կենսագործելու գործընթացը:

Իրավական ակտերի նախագծերի մշակման նպատակով պատասխանատու մարմնի կողմից կարող են ձևավորվել աշխատանքային խմբեր:

ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

Ղ Ե Կ Ա Վ Ա Ր

Վ. ՍԱՐԳՍՅԱՆ

Ց Ա Ն Կ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ 2012-2016 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻՑ ԲԽՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

1. ԱՐԴԱՐ, ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԵՎ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԱՌՋԵՎ ՀԱՇՎԵՏՈՒ ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈՒՂԴՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ				
Նպատակ-խնդիր	Գործողություն	Գործողության կատարման վերջնաժամկետ	Պատասխանատու մարմին	Օբյեկտիվ վերստուգելի չափանիշ
1.1. Կատարելագործել դատավորների թեկնածությունների ցուցակում ընդգրկվելու համար որակավորման ստուգման կարգը	1.1.1. Մշակել դատավորի թեկնածուի ոչ միայն մասնագիտական գիտելիքների, այլև որպես դատավոր գործելու ունակության և արդյունավետության, տրամաբանական հմտությունների գնահատման հնարավորություն տվող կառուցակարգեր՝ հիմնված միջազգային չափանիշների, թափանցիկության ու անաչառության սկզբունքների վրա	2012թ. դեկտեմբեր	ՀՀ արդարադատության նախարարություն	2013թ. դատավորների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով որակավորման ստուգումն անցկացվում է կատարելագործված կառուցակարգերին համապատասխան
	1.1.2. Կատարելագործել դատավորների թեկնածուների գիտելիքների և հմտությունների ստուգման արդյունքների վիճարկման կարգը	2012թ. դեկտեմբեր	ՀՀ արդարադատության նախարարություն	Օրենքի նախագիծը ՀՀ կառավարության կողմից ներկայացվել է ՀՀ ԱԺ-ի քննարկմանը
	1.1.3. Մշակել դատավորների թեկնածությունների ցուցակում ընդգրկվելու համար թեկնածուների առաջադրման թափանցիկ և օբյեկտիվ ընթացակարգեր, այդ թվում՝ վերանայել Արդարադատության խորհրդում հարցազրույցի կարգը՝ հստակեցնելով այդ փուլի խնդիրներն ու թեման	2012թ. դեկտեմբեր	ՀՀ արդարադատության նախարարություն	Օրենքի նախագիծը ՀՀ կառավարության կողմից ներկայացվել է ՀՀ ԱԺ-ի քննարկմանը
1.2. Ներդնել դատավորների գործունեության գնահատման և	1.2.1. Մշակել դատավորների գործունեության գնահատման օբյեկտիվ չա-	2013թ. սեպտեմբեր	ՀՀ արդարադատության	Օրենքի նախագիծը ՀՀ կառավարության կողմից ներկա-

առաջխաղացման օբյեկտիվ չափանիշներ և ընթացակարգեր	փանիշներ		նախարարություն	յացվել է ԱԺ-ի քննարկմանը
	1.2.2. Իրականացնել դատավորների գործունեության գնահատման համակարգի ծրագրային և տեխնիկական ապահովում	2013թ. սեպտեմբեր	ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ դատական դեպարտամենտ	Դատավորների գործունեության գնահատման համակարգի ծրագրային ապահովումն իրականացված է
	1.2.3. Առանձին դատարաններում փորձարկել դատավորների գործունեության գնահատման համակարգն ու վերացնել ծրագրային թերությունները	2014թ. հունվար-դեկտեմբեր	ՀՀ դատական դեպարտամենտ	Դատավորների գործունեության գնահատման համակարգը փորձարկված է, ծրագրային թերությունները վերացված են
	1.2.4. Նախատեսել դատավորների գործունեության գնահատման արդյունքների ամփոփման, դրանք դատավորների ինքնակառավարման մարմիններում քննարկելու և դրանցից բխող ինչպես կոնկրետ դատավորների, այնպես էլ դատարանների գործունեության արդյունավետության բարձրացման միջոցառումների մշակման կառուցակարգեր	2013թ. նոյեմբերից (շարունակական)	ՀՀ դատական դեպարտամենտ, դատավորների ինքնակառավարման մարմիններ (համաձայնությամբ)	Համապատասխան կառուցակարգերը մշակված են և գործում են
	1.2.5. Դատավորների գործունեության գնահատման համակարգը կիրառել բոլոր դատարաններում	2015թ. հունվար	ՀՀ դատական դեպարտամենտ	Դատավորների գործունեության գնահատման համակարգը կիրառվում է բոլոր դատարաններում
	1.2.6. Օրենքով հստակեցնել դատավորների առաջխաղացման չափանիշները՝ դրանց հիմքում դնելով նաև գործունեության գնահատման արդյունքները	2013թ. սեպտեմբեր	ՀՀ արդարադատության նախարարություն	Օրենքի նախագիծը ներկայացված է ԱԺ-ի քննարկմանը
	1.2.7. Մտախոսել դատական դեպարտամենտի տեխնիկական և սպասարկող անձնակազմի կարողությունները	2014թ. հունվար-մայիս	ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ դատական դեպարտամենտ	Դատական դեպարտամենտը ապահովված է անհրաժեշտ տեխնիկական միջոցներով և սպասարկող անձնակազմով
	1.3. Ներդնել դատավորների ինքնակառավարման առավել	1.3.1. Վերանայել դատավորների ինքնակառավարման մարմինների կառուցված-	2013թ. մայիս	ՀՀ արդարադատության

արդյունավետ մոդել	քը, փոխհարաբերությունները, կազմը և գործառույթները ապահովելով դատավորների ներքին անկախությունը և նպատակելով դատական իշխանության ինքնակառավարման երաշխիքների զարգացմանը		նախարարություն	ներկայացվել է ՀՀ ԱԺ-ի քննարկմանը
	1.3.2. Ապահովել դատավորների առավելագույն մասնակցությունը սեփական ինքնակառավարմանը և նախատեսել նույն դատավորի կողմից, բացի ընդհանուր ժողովից, միաժամանակ ինքնակառավարման մի քանի այլ մարմիններում ընդգրկված լինելու ողջամիտ սահմանափակումներ	2013թ. մայիս	ՀՀ արդարադատության նախարարություն	Օրենքի նախագիծը ՀՀ կառավարության կողմից ներկայացվել է ՀՀ ԱԺ-ի քննարկմանը
	1.3.3. Ուսումնասիրել առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների նախագահների պաշտոնավարման ժամկետի սահմանափակում ներդնելու նպատակահարմարությունը՝ դատարանների նախագահների լիազորությունների սահմանափակման համատեքստում	2013թ. մայիս	ՀՀ արդարադատության նախարարություն	Ուսումնասիրությունը կատարված է, ներկայացվել են համապատասխան առաջարկություններ և, ըստ անհրաժեշտության, օրենքի նախագիծը ՀՀ կառավարության կողմից ներկայացվել է ԱԺ-ի քննարկմանը
1.4. Բարեփոխել դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու ընթացակարգերը և հիմքերը՝ կարգապահական վարույթի օբյեկտիվության, արդարության, արդյունավետության և հրապարակայնության երաշխավորմամբ	1.4.1. Տարանջատել դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցող և կարգապահական տույժի վերաբերյալ որոշում կայացնելու իրավասություն ունեցող սուբյեկտներին՝ որպես կարգապահական վարույթ հարուցող սուբյեկտներ նախատեսելով արդարադատության նախարարին ու դատավորների էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովին, իսկ վճռաբեկ դատարանի պալատի դատավորի և պալատի նախագահի նկատմամբ՝ վճռաբեկ դատարանի նախագահին, իսկ էթիկայի կանոնների խախտման հիմքով՝ նաև դատավորների էթիկայի և կարգապահական հարցերի	2013թ. մայիս	ՀՀ արդարադատության նախարարություն	Օրենքի նախագիծը ՀՀ կառավարության կողմից ներկայացվել է ԱԺ-ի քննարկմանը

	հանձնաժողովին			
	1.4.2. Ուսումնասիրել հարուցված կարգապահական վարույթի շրջանակներում դատավորի անկախության և պաշտպանվածության օրենսդրական երաշխիքների ամրապնդման հարցը	2013թ. սեպտեմբեր	ՀՀ արդարադատության նախարարություն	Ուսումնասիրության արդյունքների հիման վրա, ըստ անհրաժեշտության, օրենքի նախագիծը ՀՀ կառավարության կողմից ներկայացվել է ԱԺ-ի քննարկմանը
	1.4.3. Ուսումնասիրել Արդարադատության խորհրդի նիստերի դռնբացության խնդիրը՝ ըստ անհրաժեշտության նախատեսելով օրենսդրական փոփոխություններ	2013թ. սեպտեմբեր	ՀՀ արդարադատության նախարարություն	Ուսումնասիրության արդյունքների հիման վրա, ըստ անհրաժեշտության, օրենքի նախագիծը ՀՀ կառավարության կողմից ներկայացվել է ԱԺ-ի քննարկմանը
	1.4.4. Հստակեցնել դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերը՝ հնարավորինս բացահայտելով նյութական և դատավարական օրենքների ակնհայտ և կոպիտ խախտումների բովանդակությունը	2013թ. հոկտեմբեր	ՀՀ արդարադատության նախարարություն	Օրենքի նախագիծը ՀՀ կառավարության կողմից ներկայացվել է ԱԺ-ի քննարկմանը
	1.4.5. Ուսումնասիրել նյութական կամ դատավարական օրենքի նորմի ակնհայտ և կոպիտ խախտման համար դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին Արդարադատության խորհրդի որոշումը որպես նոր երևան եկած հանգամանք նախատեսելու հարցում միջազգային փորձը և սահմանել անհրաժեշտ կարգավորումներ	2013թ. հոկտեմբեր	ՀՀ արդարադատության նախարարություն	Ուսումնասիրության արդյունքների հիման վրա, ըստ անհրաժեշտության, օրենքի նախագիծը ՀՀ կառավարության կողմից ներկայացվել է ԱԺ-ի քննարկմանը
1.5. Ապահովել էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի գործունեության արդյունավետությունն ու թափանցիկությունը	1.5.1. Մշակել էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի գործունեության ընթացակարգային կանոններ	2013թ. սեպտեմբեր	Դատավորների ինքնակառավարման մարմին (համաձայնությամբ)	Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի ընթացակարգային կանոններն ընդունված են
	1.5.2. Ապահովել էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի որոշումների մատչելիությունը դատավորների համար	2013թ. սեպտեմբեր-2016թ. (շարունակական)	Դատավորների ինքնակառավարման մարմին (համաձայնությամբ)	Էթիկայի հանձնաժողովի որոշումները մատչելի են դատավորների համար
	1.5.3. Էթիկայի և կարգապահական հար-	2013թ.	Դատավորների	Էթիկայի և կարգապահական

	ցերի հանձնաժողովի իրավասության շրջանակներում նախատեսել խորհրդատվական գործունեության միջոցով դատավորների վարքագծի կանոնների խախտումը կանխարգելող լիազորություններ	սեպտեմբեր-2016թ. (շարունակական)	ինքնակառավարման մարմին (համաձայնությամբ)	հարցերի հանձնաժողովը իրականացնում է դատավորների վարքագծի կանոնների վերաբերյալ խորհրդատվական գործառնություն
	1.5.4. Վերապատրաստել էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի անդամներին դատավորի վարքագծի կանոնների պահպանումն ապահովելու և խախտումները գնահատելու կարողությունները զարգացնելու նպատակով	2013-2016թթ. (շարունակական)	Դատավորների ինքնակառավարման մարմին (համաձայնությամբ)	Էթիկայի հանձնաժողովի բոլոր անդամներն առնվազն մեկ անգամ անցել են վերապատրաստում
1.6. Բնակչության թվին և դատավորների ծանրաբեռնվածությանը համապատասխան հավասարակշռել դատավորների թվաքանակը	1.6.1. Համեմատական վիճակագրության և դատավորների ծանրաբեռնվածության գիտական հիմնավորման հիման վրա իրականացնել ուսումնասիրություն՝ բնակիչների թվի և ընդհանուր դատական գործերի հաշվով դատավորների քանակի և դատավորների ծանրաբեռնվածության հաշվառմամբ նրանց թվի ավելացման կամ հավասարակշռման առաջարկությունների ներկայացման համար.	2013թ. նոյեմբեր	ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ դատական դեպարտամենտ	Իրականացվել է համեմատելի դատարանակազմություն ունեցող երկրների փորձի՝ բնակչության թվին համարժեք մեկ դատավորին բաժին ընկնող դատական գործերի հաշվով դատավորների քանակի և դատավորների ծանրաբեռնվածության ուսումնասիրություն, որի արդյունքներով դատավորների թվի փոփոխման վերաբերյալ ներկայացվել է առաջարկություն
	1.6.2. Իրականացնել դատավորների թվաքանակի հավասարակշռման կամ ավելացման համար անհրաժեշտ օրենսդրական փոփոխություններ (ըստ ուսումնասիրության արդյունքներով հաստատված անհրաժեշտության)	2013թ. դեկտեմբեր	ՀՀ արդարադատության նախարարություն	Օրենքի նախագիծը ՀՀ կառավարության կողմից ներկայացվել է ԱԺ-ի քննարկմանը (ըստ անհրաժեշտության)
1.7. Կատարելագործել դատավորների և դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման, դատավորների,	1.7.1. Դատական իշխանության և դատախազության կադրերի պատրաստման և վերապատրաստման համար հիմնադրել Արդարադատության ակադեմիա և դրա գործունեությունը կարգավորել	2012թ. դեկտեմբեր	ՀՀ արդարադատության նախարարություն	«Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարության կողմից ներկայացվել է ԱԺ-ի քննարկմանը

<p>դատախազների, դատական ծառայողների, դատախազության աշխատակազմում պետական ծառայողների վերապատրաստման ընթացակարգերը</p>	<p>համապատասխան օրենքով</p>			
	<p>1.7.2. Դատավորների և դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման շրջանակներում ընդլայնել փորձաշրջանի տևողությունը և կանոնակարգել փորձաշրջանի բովանդակությանը ներկայացվող պահանջները</p>	<p>2012թ. դեկտեմբեր</p>	<p>Դատավորների և դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստում իրականացնող հաստատություն</p>	<p>Դատավորների և դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական տևողության պատրաստման առնվազն 30 տոկոսը կազմում է փորձաշրջանը, հստակեցված են փորձաշրջանի անցկացման կարգը, փորձաշրջանի բովանդակության ուղենիշները, փորձաշրջանի գնահատման չափանիշները</p>
	<p>1.7.3. Դատավորների և դատախազների վերապատրաստման ծրագրերի շրջանակներում ներառել որպես դատավոր և դատախազ գործելու մասնագիտական հմտությունների զարգացմանը, ինչպես նաև օրենսդրական և դատավարական զարգացումների, դատական պրակտիկային վերաբերող թեմաներով դասընթացներ</p>	<p>2013-2016թթ. (շարունակական)</p>	<p>Դատավորների և դատախազների վերապատրաստում իրականացնող հաստատություն</p>	<p>Դատավորները և դատախազները անցնում են պարբերական վերապատրաստում որպես դատավոր և դատախազ գործելու մասնագիտական հմտությունների զարգացմանը, ինչպես նաև օրենսդրական և դատավարական զարգացումների, դատական պրակտիկային վերաբերող թեմաներով</p>
<p>1.7.4. Սերտացնել դատախազների, դատավորների և փաստաբանների միջև համագործակցությունը՝ համատեղ վերապատրաստման դասընթացների և այլ համատեղ միջոցառումների կազմակերպման և իրականացման միջոցով</p>	<p>2013-2016թթ. (շարունակական)</p>	<p>Դատավորների և դատախազների վերապատրաստում իրականացնող հաստատություն, Դատավորների ինքնակառավարման մարմիններ (համաձայնությամբ), ՀՀ գլխավոր դատախազություն</p>	<p>Յուրաքանչյուր տարի կազմակերպվում և անցկացվում է դատախազների, դատավորների և փաստաբանների համագործակցությունը և շփումը խթանող առնվազն մեկ միջոցառում</p>	
<p>1.8. Կատարելագործել դատավորների միջև գործերի օբյեկտիվ (պա-</p>	<p>1.8.1. Օրենքով սահմանել դատավորների միջև գործերի բաշխման ընդհանուր</p>	<p>2013թ. մարտ</p>	<p>ՀՀ արդարադատության</p>	<p>Օրենքի նախագիծը ներկայացված է ԱԺ-ի քննարկմանը</p>

տահական) բաշխման համակարգը	օբյեկտիվ չափանիշները		նախարարություն	
	1.8.2. Զարգացնել գործերի օբյեկտիվ (պատահական) բաշխման ծրագրային և տեխնիկական ապահովումը, վերացնել ծրագրային թերությունները	2013թ. սեպտեմբեր	ՀՀ դատական դեպարտամենտ, ՀՀ արդարադատության նախարարություն	Համապատասխան ծրագրային և տեխնիկական ապահովումն իրագործված է և գործերի օբյեկտիվ (պատահական) բաշխման ծրագիրը անցել է փորձարկում առանձին դատարաններում
	1.8.3. Գործերի օբյեկտիվ (պատահական) բաշխման ծրագիրն ամբողջությամբ կիրառել բոլոր դատարաններում	2014թ. հունվար	ՀՀ դատական դեպարտամենտ	Ծրագրային թերությունները վերացված են և ՀՀ ամբողջ տարածքում ներդրվել և կիրառվում է գործերի օբյեկտիվ (պատահական) բաշխման համակարգը
1.9. Միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքներով ներդնել դատական իշխանության կողմից իր գործունեության վերաբերյալ հաշվետվությունների հրապարակման համակարգ	1.9.1. Մշակել համապատասխան օրենսդրական փոփոխությունների նախագիծ (ըստ անհրաժեշտության)	2013թ. մայիս	ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ դատական դեպարտամենտ	Դատական իշխանության կողմից իր գործունեության վերաբերյալ հաշվետվությունների հրապարակման համակարգը ներդրված է
1.10. Կատարելագործել դատավարական իրավունքների չարաշահման և դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի դեմ ուղղված նորմերը	1.10.1. Ուսումնասիրել դատավարական իրավունքների չարաշահման և դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի հարցում միջազգային փորձը	2014թ. մայիս	ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ դատական դեպարտամենտ	Ուսումնասիրության արդյունքներով ներկայացվել են համապատասխան առաջարկներ
	1.10.2. Նախատեսել համապատասխան կարգավորումներ դատավարական իրավունքների չարաշահման և դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի դեմ (ըստ անհրաժեշտության)	2014թ. սեպտեմբեր	ՀՀ արդարադատության նախարարություն	Ուսումնասիրության արդյունքների հիման վրա, ըստ անհրաժեշտության, օրենքի նախագիծը ներկայացված է ԱԾ-ի քննարկմանը
1.11. Բարելավել դատարաններում տեղեկատվական և հաղորդակցային տեխնոլոգիաների կիրառումը՝ ապահովելով գործերի արագ շրջանառությունը մեկ ատյանի	1.11.1. Մշակել դատարանների կողմից քննվող գործերում առկա փաստաթղթերի թվայնացման սկզբունքներն ու մեխանիզմները	2013թ. դեկտեմբեր	ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ դատական դեպարտամենտ	Դատարանների կողմից քննվող գործերում առկա փաստաթղթերի թվայնացման սկզբունքներն ու մեխանիզմները սահմանող դատավարական

<p>դատարանից մեկ այլ ատյանի դատարան</p>				րական օրենսգրքերում փոփոխությունների նախագծերը ներկայացվել են ՀՀ ԱԺ-ի քննարկմանը
	1.11.2. Իրականացնել փաստաթղթերի թվայնացման համար անհրաժեշտ ծրագրային և տեխնիկական ապահովում	2014թ. մայիս	ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ դատական դեպարտամենտ	Էլեկտրոնային շրջանառությունն ապահովող համակարգը ներդրված է
	1.11.3. Առանձին դատարաններում փորձարկել փաստաթղթերի թվայնացման համակարգն ու վերացնել ծրագրային թերությունները	2014թ. հունիս-հոկտեմբեր	ՀՀ դատական դեպարտամենտ	Փաստաթղթերի թվայնացման համակարգը փորձարկվել է և ծրագրային թերությունները վերացվել են
	1.11.4. Փաստաթղթերի թվայնացման համակարգն ամբողջությամբ կիրառել բոլոր դատարաններում	2014թ. նոյեմբեր	ՀՀ դատական դեպարտամենտ	Թվայնացված փաստաթղթերի շրջանառությունն ապահովող համակարգն ամբողջությամբ կիրառվում է բոլոր դատարաններում
	1.11.5. Իրականացնել դատավորների և դատական ծառայողների վերապատրաստում՝ փաստաթղթերի թվայնացման համակարգի կիրառման թեմայով	2014թ. հունվար-2016թ. (շարունակական)	Դատավորների և դատախազների վերապատրաստում իրականացնող հաստատություն	Դատավորները և դատական ծառայողները վերապատրաստվել են
<p>1.12. Մշակել և ներդնել ՀՀ դատական իշխանության ֆինանսավորման առավել արդյունավետ մոդել՝ եվրոպական չափանիշներին և լավագույն փորձին համապատասխան</p>	1.12.1. Կատարել դատական իշխանության ֆինանսավորման մոդելների հարցում եվրոպական չափանիշների և լավագույն փորձի ուսումնասիրություն	2014թ. դեկտեմբեր	ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ դատական դեպարտամենտ	Ուսումնասիրության արդյունքներով ներկայացվել են համապատասխան առաջարկություններ
	1.12.2. Ներդնել դատական իշխանության ֆինանսավորման առավել արդյունավետ մոդել	2015թ. մայիս	ՀՀ արդարադատության նախարարություն	Դատական իշխանության ֆինանսավորման առավել արդյունավետ մոդելի ներդրմանն ուղղված նորմատիվ իրավական ակտերի նախագծերը ներկայացվել են իրավասու մարմինների քննարկմանը

2. ՔՐԵԱԿԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԻԺՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՐՑՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Նպատակ-խնդիր	Գործողություն	Գործողության կատարման վերջնաժամկետ	Պատասխանատու մարմին	Օբյեկտիվ վերստուգելի չափանիշ
2.1. Մշակել ՀՀ նոր քրեական օրենսգրք	2.1.1. Ընդունել «ՀՀ նոր քրեական օրենսգրքի հայեցակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում	2014թ. մայիս	ՀՀ արդարադատության նախարարություն	Հայեցակարգը հաստատված է ՀՀ կառավարության որոշմամբ
	2.1.2. Մշակել ՀՀ նոր քրեական օրենսգրքի նախագիծ	2015թ. սեպտեմբեր	ՀՀ արդարադատության նախարարություն	Օրենսգրքի նախագիծը ՀՀ կառավարության կողմից ներկայացված է ԱԺ-ի քննարկմանը
2.2. ՀՀ Ազգային ժողով ներկայացնել ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծը		2012թ. դեկտեմբեր	ՀՀ արդարադատության նախարարություն	Օրենսգրքի նախագիծը ՀՀ կառավարության կողմից ներկայացված է ԱԺ-ի քննարկմանը
2.3. ՀՀ արդարադատության նախարարության կառուցվածքում ստեղծել քրեակատարողական ծառայությունից անկախ և առանձին պրոբացիայի ծառայություն	2.3.1. Մշակել պրոբացիայի ծառայության գործունեությունը կարգավորող իրավական ակտի նախագիծ	2013թ. դեկտեմբեր	ՀՀ արդարադատության նախարարություն	Պրոբացիայի ծառայության գործունեությունը կարգավորող իրավական ակտի նախագիծը ներկայացվել է ընդունման
	2.3.2. Մշակել պրոբացիայի ծառայության աշխատակիցների շարունակական մասնագիտական ուսուցման համակարգ	2014թ. մարտ	ՀՀ արդարադատության նախարարություն	Մասնագիտական ուսուցման համակարգը մշակված է
2.4. Բարեփոխել պատժից պայմանական վաղաժամկետ ազատման, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու ընթացակարգը	2.4.1. Ուսումնասիրել պատժից պայմանական վաղաժամկետ ազատման վերաբերյալ որոշում կայացնող մարմինների համակարգը պարզեցնելու և յուրաքանչյուր մարմնի գործառույթները հստակեցնելու հնարավորությունները	2013թ. դեկտեմբեր	ՀՀ արդարադատության նախարարություն	Իրավական ակտերի նախագծերը ներկայացվել են ընդունման
	2.4.2. Սահմանել այն օբյեկտիվ չափանիշները, որոնց հիման վրա համապատասխան մարմինները պետք է որոշեն դատապարտյալին պայմանական վաղաժամկետ ազատելու հարցը	2013թ. դեկտեմբեր	ՀՀ արդարադատության նախարարություն	Իրավական ակտի նախագիծը ներկայացվել է ընդունման

	2.4.3. Սահմանել պատժից պայմանական վաղաժամկետ ազատման, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ դատական գործերի քննության արդյունավետ կարգ	2014թ. դեկտեմբեր	ՀՀ արդարադատության նախարարություն	Օրենքի նախագիծը ՀՀ կառավարության կողմից ներկայացված է ԱԺ-ի քննարկմանը
2.5. Բարեփոխել ազատազրկման ձևով պատիժը կրող դատապարտյալին ծանր հիվանդության հիմքով պատժից ազատելու կարգը	2.5.1. Վերանայել ներկայումս բժշկական փորձաքննություն իրականացնող մարմնի լիազորությունները և սահմանել վերջինիս գործունեության իրավական ընթացակարգերը	2013թ. հոկտեմբեր	ՀՀ արդարադատության նախարարություն	Իրավական ակտի նախագիծը ներկայացվել է այն ընդունող մարմնին
	2.5.2.Սահմանել ազատազրկման ձևով պատիժը կրող դատապարտյալին ծանր հիվանդության հիմքով պատժից ազատման վերաբերյալ դատական գործերի քննության արդյունավետ կարգ	2013թ. նոյեմբեր	ՀՀ արդարադատության նախարարություն	Օրենքի նախագիծը ՀՀ կառավարության կողմից ներկայացված է ԱԺ-ի քննարկմանը

3. ՎԱՐՉԱԿԱՆ ԱՐԴԱՐԱՊԱՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԱՐՅՈՒՆՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ				
Նպատակ-խնդիր	Գործողություն	Գործողության կատարման վերջնաժամկետ	Պատասխանատու մարմին	Օբյեկտիվ վերստուգելի չափանիշ
3.1. Նվազեցնել վարչական դատարանների ծանրաբեռնվածությունը	3.1.1. Ուսումնասիրել վարչական դատարանի հավելյալ ծանրաբեռնվածության պատճառները և առաջարկել լուծումներ	2012թ. հոկտեմբեր	ՀՀ արդարադատության նախարարություն	Իրականացված ուսումնասիրության արդյունքում վեր են հանված վարչական դատարանների ծանրաբեռնվածության պատճառները, դրանց և միջազգային փորձի վերլուծությամբ արված են հավելյալ ծանրաբեռնվածության նվազեցմանն ուղղված առաջարկներ
	3.1.2. Ուսումնասիրել վարչական դատարանի դատավորների թվաքանակն ավելացնելու խնդիրը և առաջարկել լուծումներ	2012թ. դեկտեմբեր	ՀՀ արդարադատության նախարարություն	Օրենքի նախագիծը ՀՀ կառավարության կողմից ներկայացված է ԱԺ-ի քննարկմանը
3.2. Վարչական վարույթի շրջա-	3.2.1. Փոփոխություններ կատարել	2013թ.	ՀՀ	Օրենքների նախագծերը ՀՀ

<p>նակներում «վարչական մարմին» հասկացության մեջ ներառել այն մասնավոր սուբյեկտներին, որոնց պետությունը վերապահել է հանրային գործառույթներ՝ ապահովելով նաև այդ սուբյեկտների որոշումներից, գործողություններից և անգործությունից մասնավոր անձանց դատական պաշտպանությունը</p>	<p>«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքում և (ըստ անհրաժեշտության) ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում</p>	<p>սեպտեմբեր</p>	<p>արդարադատության նախարարություն</p>	<p>կառավարության կողմից ներկայացված են ԱԺ-ի քննարկմանը (ըստ անհրաժեշտության)</p>
<p>3.3. Ապահովել զուգորդվող վարչական ակտի հասցեատիրոջ կողմից այդ ակտի միջամտող դրույթները վիճարկելու հնարավորությունը</p>	<p>3.3.1. Փոփոխություններ կատարել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքում և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում</p>	<p>2012թ. դեկտեմբեր</p>	<p>ՀՀ արդարադատության նախարարություն</p>	<p>Օրենքների նախագծերը ՀՀ կառավարության կողմից ներկայացված են ԱԺ-ի քննարկմանը</p>
<p>3.4. Գործնականում ապահովել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի ուժով ընդունված վարչական ակտերով տրամադրվող իրավունքների իրացումը</p>	<p>3.4.1. Կատարել ուսումնասիրություն՝ կարգավորելու համար նշված ինստիտուտն այնպես, որ, մի կողմից չխաթարվի 48-րդ հոդվածում ամրագրված այս կարևոր ինստիտուտի բուն էությունը, մյուս կողմից՝ պաշտպանվի հասարակական շահը</p>	<p>2013թ. սեպտեմբեր</p>	<p>ՀՀ արդարադատության նախարարություն</p>	<p>Իրականացված ուսումնասիրության արդյունքում մշակվել են համապատասխան առաջարկներ և, ըստ անհրաժեշտության, օրենքի նախագիծը ՀՀ կառավարության կողմից ներկայացված է ԱԺ-ի քննարկմանը</p>
<p>3.5. Նախատեսել վարչական դատավարությունում դատարանի կողմից ոչ պատշաճ երրորդ անձի կարգավիճակի դադարեցման հնարավորություն</p>	<p>3.5.1. Փոփոխություններ կատարել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում</p>	<p>2012թ. դեկտեմբեր</p>	<p>ՀՀ արդարադատության նախարարություն</p>	<p>Օրենքի նախագիծը ՀՀ կառավարության կողմից ներկայացված է ԱԺ-ի քննարկմանը</p>
<p>3.6. Մշակել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ նոր օրենսգրքը</p>	<p>3.6.1. Ընդունել «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ նոր օրենսգրքի հայեցակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում</p>	<p>2012թ. հոկտեմբեր</p>	<p>ՀՀ արդարադատության նախարարություն</p>	<p>Հայեցակարգը հաստատված է ՀՀ կառավարության որոշմամբ</p>
	<p>3.6.2. Մշակել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ նոր օրենսգրքի նախագիծ</p>	<p>2014թ. մայիս</p>	<p>ՀՀ արդարադատության նախարարություն</p>	<p>Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ նոր օրենսգրքը ներկայացված է ԱԺ-ի քննարկմանը</p>

4. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱՐՁԱՆՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂԴՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Նպատակ-խնդիր	Գործողություն	Գործողության կատարման վերջնաժամկետ	Պատասխանատու մարմին	Օբյեկտիվ վերստուգելի չափանիշ
4.1. ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը համապատասխանեցնել մասնավոր իրավահարաբերությունների կարգավորման ժամանակակից մոտեցումներին	4.1.1. Փոփոխություններ և լրացումներ կատարել ՀՀ քաղաքացիական օրենսգրքում	2015թ. դեկտեմբեր	ՀՀ արդարադատության նախարարություն	Օրենքի նախագիծը ՀՀ կառավարության կողմից ներկայացված է ԱԺ-ի քննարկմանը
4.2. Հստակեցնել քաղաքացիական դատավարությունում ապացուցման գործընթացը կարգավորող կանոնները՝ սահմանելով նաև ապացույցների վերաբերելիության կամ թույլատրելիության հարցերի լուծումը, այդ թվում՝ ապացույցների կազմից ապացույցը հանելու գործն ըստ էության լուծող դատական ակտում հիմնավորելու պահանջ	4.2.1. Փոփոխություններ և լրացումներ կատարել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում	2013թ. սեպտեմբեր	ՀՀ արդարադատության նախարարություն	Օրենքի նախագիծը ՀՀ կառավարության կողմից ներկայացված է ԱԺ-ի քննարկմանը
4.3. Սահմանել քաղաքացիական դատավարությունում վերադաս դատարանի կողմից դատական ակտը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու դեպքում ստորադաս դատարանում գործերի քննության կարգի առանձնահատկությունները	4.3.1. Փոփոխություններ և լրացումներ կատարել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում	2013թ. սեպտեմբեր	ՀՀ արդարադատության նախարարություն	Օրենքի նախագիծը ՀՀ կառավարության կողմից ներկայացված է ԱԺ-ի քննարկմանը
4.4. Մշակել նախնական դատական նիստի առավել ամբողջական կանոններ	4.4.1. Փոփոխություններ և լրացումներ կատարել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում	2013թ. սեպտեմբեր	ՀՀ արդարադատության նախարարություն	Օրենքի նախագիծը ՀՀ կառավարության կողմից ներկայացված է ԱԺ-ի քննարկմանը
4.5. Ուսումնասիրել քրեական գործով ձեռք բերված ապացույցների՝ քաղաքացիական դատավարության ընթացքում օգտագործման թույլատրելիության հարցը	4.5.1. Փոփոխություններ և լրացումներ կատարել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում (ըստ անհրաժեշտության)	2013թ. սեպտեմբեր	ՀՀ արդարադատության նախարարություն	Օրենքի նախագիծը ՀՀ կառավարության կողմից ներկայացված է ԱԺ-ի քննարկմանը (ըստ անհրաժեշտության)

5. ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Նպատակ-խնդիր	Գործողություն	Գործողության կատարման վերջնաժամկետ	Պատասխանատու մարմին	Օբյեկտիվ վերստուգելի չափանիշ
<p>5.1. Իրականացնել վճարել դատարանի կողմից օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու գործառնությունն արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումներ</p>	<p>5.1.1. Ուսումնասիրել վճարել դատարանի կողմից վճարել բողոքի ընդունելիության օրենսդրական չափանիշների, բողոքի ընդունումը մերժելու վերաբերյալ որոշման բովանդակությանը ներկայացվող պահանջների հարցում միջազգային լավագույն փորձը և ըստ անհրաժեշտության նախապատրաստել վճարել դատարանի սահմանադրական կարգավիճակին համահունչ վճարել բողոքարկման իրավունքի իրականացման ընթացակարգերի կատարելագործմանն ուղղված օրենսդրական փոփոխություններ</p>	<p>2013թ. մայիս</p>	<p>ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ դատական դեպարտամենտ</p>	<p>Ուսումնասիրության արդյունքներով ներկայացվել են համապատասխան առաջարկներ, օրենքների նախագծերը ՀՀ կառավարության կողմից ներկայացվել են ԱԾ-ի քննարկմանը (ըստ անհրաժեշտության)</p>
	<p>5.1.2. Տարանջատել և հստակեցնել վճարել բողոքին ներկայացվող ձևական (ֆորմալ) ու բովանդակային պահանջները, ինչպես նաև դրանք չպահպանելու հետևանքները</p>	<p>2013թ. մայիս</p>	<p>ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ դատական դեպարտամենտ</p>	<p>Վճարել բողոքին ներկայացվող ձևական (ֆորմալ) ու բովանդակային պահանջները, ինչպես նաև դրանք չպահպանելու հետևանքները հստակեցված են</p>
	<p>5.1.3. Մշակել դատական ակտերի կառուցվածքին ներկայացվող այնպիսի պահանջներ, որոնք հնարավորություն կտան այլ դատական ակտերին հղում կատարելիս ապահովել տարբեր գործերի փաստական հանգամանքների համադրելիությունը</p>	<p>2013թ. մայիս</p>	<p>ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ դատական դեպարտամենտ</p>	<p>Դատական ակտերի կառուցվածքին ներկայացվող պահանջները մշակված են և ներդրված</p>
<p>5.2. Մշակել դատական նիստերի չարդարացված հետաձգումների</p>	<p>5.2.1. Իրականացնել դատական նիստերի նշանակման առաջնահերթությունների</p>	<p>2013թ.</p>	<p>ՀՀ արդարադատության</p>	<p>Ուսումնասիրության արդյունքում բացահայտված են դա-</p>

կանխարգելման ընթացակարգեր	սահմանման բնագավառում միջազգային փորձի ուսումնասիրություն	սեպտեմբեր	նախարարություն	տական նիստերի նշանակման առաջնահերթությունների սահմանման առավել արդյունավետ եղանակները
	5.2.2. Դատավարական օրենսգրքերով հնարավորինս սպառիչ սահմանել նիստի հետաձգման հիմքերը՝ բացառելով նիստի հետաձգումը դրա համար չնախատեսված որևէ հիմքով	2013թ. դեկտեմբեր	ՀՀ արդարադատության նախարարություն	Օրենքի (օրենքների) նախագիծը (նախագծերը) ՀՀ կառավարության կողմից ներկայացված է (են) ԱԺ-ի քննարկմանը
	5.2.3. Գործի քննության ողջամիտ ժամկետների խախտումների դեպքում նախատեսել արդյունավետ իրավական պաշտպանության միջոցներ	2013թ. դեկտեմբեր	ՀՀ արդարադատության նախարարություն	Օրենքի նախագիծը ՀՀ կառավարության կողմից ներկայացված է ԱԺ քննարկմանը
	5.2.4. Նախատեսել գործերի քննության տևողության մոնիտորինգի արդյունավետ մեխանիզմներ	2013թ. դեկտեմբեր	ՀՀ դատական դեպարտամենտ	Գործերի քննության տևողության մոնիտորինգի արդյունավետ մեխանիզմները մշակված են և իրականացվում են
5.3. Ուսումնասիրել սահմանադրական դատարանի որոշումների հիման վրա դատական ակտերի վերանայման ընթացակարգերի բարելավման, ինչպես նաև սահմանադրական դատարանների կողմից դատական հանձնարարականներ տալու վերաբերյալ միջազգային փորձը	5.3.1. Կատարել համապատասխան ուսումնասիրություն	2013թ. դեկտեմբեր	ՀՀ արդարադատության նախարարություն	Իրականացված ուսումնասիրության արդյունքում մշակվել են համապատասխան առաջարկներ և ըստ անհրաժեշտության օրենքի նախագիծը ՀՀ կառավարության կողմից ներկայացված է ԱԺ-ի քննարկմանը
5.4. Կատարելագործել դատական փորձաքննության նշանակման և անցկացման գործընթացը	5.4.1. Տարածել մասնավոր փորձագետների կողմից դատական փորձաքննությունների իրականացմանը մասնակցելու իրավունքի վերաբերյալ տեղեկատվություն	2013թ. սեպտեմբեր	ՀՀ արդարադատության նախարարություն, Դատավորների ինքնակառավարման մարմիններ (համաձայնությամբ)	Դատական փորձաքննություններին մասնավոր փորձագետների մասնակցության հնարավորությունները լուսաբանող առնվազն մեկ հրապարակում է կատարվել

	5.4.2. Դատավարական օրենսգրքերում հստակեցնել փորձագետին հարցաքննելու և փորձագետի մասնագիտական որակների ու եզրակացության անհրաժեշտությունը պարզելու դատավարական կանոնները	2013թ. դեկտեմբեր	ՀՀ արդարադատության նախարարություն	Օրենքի (օրենքների) նախագիծը (նախագծերը) ՀՀ կառավարության կողմից ներկայացված է (են) ԱԺ-ի քննարկմանը
5.5. Սահմանել արտագնա դատական նիստերի անցկացման սահմանափակ և հստակ հիմքեր ու դրանց անցկացման դեպքում արդար դատաքննության իրավունքի երաշխավորման մեխանիզմներ	5.5.1. Օրենքով սահմանել արտագնա դատական նիստերի անցկացման բացառիկ դեպքերը և կանոնակարգել դրանց ընթացակարգը	2012թ. դեկտեմբեր	ՀՀ արդարադատության նախարարություն	Օրենքի նախագիծը ՀՀ կառավարության կողմից ներկայացված է ԱԺ-ի քննարկմանը
	5.5.2. Սահմանափակել փակ և կիսափակ տիպի քրեակատարողական հիմնարկներում արտագնա դատական նիստերի անցկացման հնարավորությունը՝ նախատեսելով արդար դատաքննության իրավունքի ապահովմանն ուղղված լրացուցիչ երաշխիքներ	2012թ. դեկտեմբեր	ՀՀ արդարադատության նախարարություն	Օրենքի նախագիծը ՀՀ կառավարության կողմից ներկայացված է ԱԺ-ի քննարկմանը
5.6. Ներդնել դատական ծախսերի բաշխման արդար, թափանցիկ և հստակ համակարգ	5.6.1. Փոփոխություններ կատարել դատավարական օրենսգրքերում	2013թ. դեկտեմբեր	ՀՀ արդարադատության նախարարություն	Օրենքի (օրենքների) նախագիծը (նախագծերը) ՀՀ կառավարության կողմից ներկայացված է (են)ԱԺ-ի քննարկմանը
5.7. Ներդնել դատական վարույթների մասին ծանուցման առավել արդյունավետ մեթոդներ	5.7.1. Անցկացնել ուսումնասիրություն՝ պարզելու դատարանների կողմից ծանուցումներ տալու առավել արդյունավետ մեթոդները	2013թ. մայիս	ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ դատական դեպարտամենտ	Ուսումնասիրության արդյունքում բացահայտված են դատարանների կողմից ծանուցումներ տալու առավել արդյունավետ մեթոդները
	5.7.2. Հիմնվելով ուսումնասիրության արդյունքների վրա՝ կատարել անհրաժեշտ օրենսդրական փոփոխություններ դատական ծանուցումների առավել արդյունավետ մեթոդներ ներդնելու նպատակով	2013թ. դեկտեմբեր	ՀՀ արդարադատության նախարարություն	Օրենքի նախագիծը ՀՀ կառավարության կողմից ներկայացված է ԱԺ-ի քննարկմանը
5.8. Կատարելագործել դատական քննության պարզեցված ընթացակարգերը	5.8.1. Փոփոխություններ կատարել դատավարական օրենսգրքերում	2013թ. դեկտեմբեր	ՀՀ արդարադատության նախարարություն	Օրենքի (օրենքների) նախագիծը (նախագծերը) ՀՀ կառավարության կողմից

				ներկայացված է (են) ԱԺ-ի քննարկմանը
5.9. Վերանայել հայցն առանց քննության թողնելու և գործի վարույթի կարճման հիմքերը	5.9.1. Փոփոխություններ կատարել դատավարական օրենսգրքերում	2013թ. դեկտեմբեր	ՀՀ արդարադատության նախարարություն	Դատավարական օրենսգրքերում փոփոխությունների նախագծերը ՀՀ կառավարության կողմից ներկայացվել են ԱԺ-ի քննարկմանը
5.10. Հստակեցնել միմյանց հետ կապված պահանջների ընդդատության կանոնները	5.10.1. Փոփոխություններ կատարել քաղաքացիական և վարչական դատավարության օրենսգրքերում	2013թ. դեկտեմբեր	ՀՀ արդարադատության նախարարություն	Դատավարական օրենսգրքերում փոփոխությունների նախագծերը ՀՀ կառավարության կողմից ներկայացվել են ԱԺ-ի քննարկմանը
5.11. Ուսումնասիրել քրեակատարողական հիմնարկի պետի որոշումների դեմ դատարան բերվող բողոքների ընդդատության հարցը	5.11.1. Միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքներով որոշակիացնել քրեակատարողական հիմնարկի պետի որոշումների բողոքարկման ինստիտուտը, պարզելով այն հարցը, թե այդ բողոքները պետք է ընդդատյա լինեն վարչական, թե ընդհանուր իրավասության դատարանին	2014թ. մայիս	ՀՀ արդարադատության նախարարություն	Իրականացված ուսումնասիրության արդյունքում մշակվել են համապատասխան առաջարկներ և ըստ անհրաժեշտության օրենքի նախագիծը ՀՀ կառավարության կողմից ներկայացված է ԱԺ-ի քննարկմանը
5.12. Կատարելագործել դատական ակտերի որոնման համակարգը	5.12.1. Դատական ակտերի որոնման համակարգը հարստացնել հանգուցային բառերով և ինդեքսներով դատական որոշումները որոնելու հնարավորությամբ	2013թ. դեկտեմբեր (շարունակական)	ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ դատական դեպարտամենտ	Էականորեն ընդլայնվել են դատական ակտերի որոնման համակարգի որոնողական հնարավորությունները, որոնք հնարավորություն են տալիս առավել արագ և դյուրին գտնել անհրաժեշտ որոշումները
	5.12.2. Միջոցառումներ ձեռնարկել դատական ակտերի որոնման համակարգում դատավարության մասնակիցների անձնական տվյալների պաշտպանության ուղղությամբ	2013թ. դեկտեմբեր (շարունակական)	ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ դատական դեպարտամենտ	Դատական ակտերի որոնման համակարգում դատավարության մասնակիցների անձնական տվյալները պաշտպանված են

5.13. Դատարանների վարչական շենքերի բաց գոտիներում դատախազների և փաստաբանների համար նախատեսել առանձին սենյակ		2013թ. սեպտեմբեր	ՀՀ դատական դեպարտամենտ	Դատարանների վարչական շենքերի բաց գոտիներում դատախազների և փաստաբանների համար հատկացված է առանձին սենյակ
---	--	------------------	------------------------	---

6. ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵՓՈՒՈՒՄՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Նպատակ-խնդիր	Գործողություն	Գործողության կատարման վերջնաժամկետ	Պատասխանատու մարմին	Օրյակտիվ վերստուգելի չափանիշ
6.1. Հստակեցնել անվճար իրավաբանական օգնության շրջանակը և բարելավել դրա որակը	6.1.1. Անվճար իրավաբանական օգնության տրամադրման համար մշակել չափանիշներ, որոնց հիման վրա հնարավոր կլինի գնահատել անձի գույքային դրությունը	2014թ. մայիս	ՀՀ արդարադատության նախարարություն, Փաստաբանների պալատ (համաձայնությամբ)	Ուսումնասիրությունը կատարված է, առաջարկությունները ներկայացված են
	6.1.2. Իրականացնել կարիքների գնահատում՝ պարզելու անվճար իրավաբանական օգնության ծավալները և հանրային պաշտպանների անհրաժեշտ թվաքանակը	2014թ. նոյեմբեր	ՀՀ արդարադատության նախարարություն, Փաստաբանների պալատ (համաձայնությամբ)	Օրենքի նախագիծը ՀՀ կառավարության կողմից ներկայացված է ԱԾ-ի քննարկմանը
	6.1.3. Ուսումնասիրել հանրային պաշտպանի գրասենյակի ֆիզիկական մատչելիության ապահովման խնդիրները, մասնավորապես՝ Երևանում և մարզերում հանրային պաշտպանի գրասենյակներին ծառայեցնելու նպատակով համապատասխան պետական շինություններ հատկացնելու հնարավորությունը	2014թ. հուլիս	ՀՀ արդարադատության նախարարություն, Փաստաբանների պալատ (համաձայնությամբ)	Կարիքների գնահատումը կատարված է
	6.1.4. Ապահովել հանրային պաշտպանի գրասենյակի ինստիտուցիոնալ	2014թ. հոկտեմբեր	ՀՀ արդարադատության	Օրենքի (օրենքների) նախագիծը (նախագծերը) ՀՀ

	բարեփոխումը, հանրային պաշտպանների թվակազմի օպտիմալացումը, հանրային պաշտպան դառնալու ընթացակարգի թափանցիկությունն ու մրցակցությունը, հանրային պաշտպանների մասնագիտացումը		նախարարություն, Փաստաբանների պալատ (համաձայնությամբ)	կառավարության կողմից ներկայացված է (են) ԱԺ-ի քննարկմանը
	6.1.5. Մշակել անվճար իրավաբանական օգնության տրամադրման այլընտրանքային մեխանիզմներ	2014թ. դեկտեմբեր	ՀՀ արդարադատության նախարարություն, Փաստաբանների պալատ (համաձայնությամբ)	Օրենքի (օրենքների) նախագիծը (նախագծերը) ՀՀ կառավարության կողմից ներկայացված է (են) ԱԺ-ի քննարկմանը
6.2. Ապահովել փաստաբանների լիարժեք պատրաստումը և վերապատրաստումը	6.2.1. Մշակել փաստաբանների առաջնային ուսուցման ուսումնական ծրագիր՝ առանձնակի ուշադրություն դարձնելով դատական նիստերի դահլիճում կիրառվող պրակտիկ հմտություններին	2013թ. նոյեմբեր	ՀՀ արդարադատության նախարարություն, Փաստաբանների պալատ (համաձայնությամբ)	Ուսումնական ծրագրերը մշակված են և կիրառվում են
	6.2.2 Մշակել փաստաբանների վարքագծի կանոնների, փաստաբանական հմտությունների, դատական պրակտիկայի և գործերի նախապատրաստման թեմաներով փաստաբանների մասնագիտական շարունակական վերապատրաստման ուսումնական ծրագրեր	2013թ. նոյեմբեր	ՀՀ արդարադատության նախարարություն, Փաստաբանների պալատ (համաձայնությամբ)	Ուսումնական ծրագրերը մշակված են և կիրառվում են

7. ԴԱՏԱԽԱՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ				
Նպատակ-խնդիր	Գործողություն	Գործողության կատարման վերջնաժամկետ	Պատասխանատու մարմին	Օբյեկտիվ վերստուգելի չափանիշ

7.1. Ապահովել դատախազության լիարժեք անկախությունն ու հաշվետվողականությունը, դատախազության գործունեությանը չմիջամտելու սկզբունքի իրացումը	7.1.1. Որպես դատախազների անկախության ապահովման երաշխիք վերանայել դատախազների նշանակման կարգը՝ նախատեսելով դատախազների թեկնածուների ցուցակից թեկնածուներին հանելու հստակ չափանիշներ, ինչպես նաև վերանայել դատախազների ծառայողական առաջխաղացման կարգն ու պայմանները՝ նախատեսելով առաջխաղացման հստակ չափանիշներ	2014թ. սեպտեմբեր	ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ գլխավոր դատախազություն	Համապատասխան օրենքի նախագիծը ՀՀ կառավարության կողմից ներկայացված է ԱԺ-ի քննարկմանը
	7.1.2. Հստակեցնել դատախազների վերադասության հարաբերությունները կարգավորող նորմերը՝ համապատասխան փոփոխություններ կատարելով «Դատախազության մասին» ՀՀ օրենքում	2013թ. սեպտեմբեր	ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ գլխավոր դատախազություն	Համապատասխան օրենքի նախագիծը ՀՀ կառավարության կողմից ներկայացված է ԱԺ-ի քննարկմանը
	7.1.3. Սահմանել միևնույն դատախազության կամ կառուցվածքային ստորաբաժանման դատախազի վարույթից նույն դատախազության կամ կառուցվածքային ստորաբաժանման մեկ այլ դատախազի վարույթ գործերը տեղափոխելու հստակ և կանխատեսելի հիմքեր	2013թ. սեպտեմբեր	ՀՀ գլխավոր դատախազություն, ՀՀ արդարադատության նախարարություն	Դատախազի վարույթից մեկ այլ դատախազի վարույթ գործերը տեղափոխելու պրակտիկան չի օգտագործվում առանց օբյեկտիվ հիմքերի
7.2. Ուսումնասիրել քրեաիրավական ոլորտից դուրս պետական շահերի պաշտպանության բնագավառում դատախազության գործառույթները	7.2.1. Փոփոխություններ կատարել «Դատախազության մասին» ՀՀ օրենքում (ըստ ուսումնասիրության արդյունքներով հաստատված անհրաժեշտության)	2015թ. սեպտեմբեր	ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ գլխավոր դատախազություն	Օրենքի նախագիծը ՀՀ կառավարության կողմից ներկայացված է ԱԺ-ի քննարկմանը (ըստ ուսումնասիրության արդյունքներով հաստատված անհրաժեշտության)
7.3. Բարեփոխել դատախազներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու համակարգը՝ հստակեցնելով կարգապահական	7.3.1. Փոփոխություններ կատարել «Դատախազության մասին» ՀՀ օրենքում	2014թ. սեպտեմբեր	ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ գլխավոր դատախազություն	Օրենքի նախագիծը ՀՀ կառավարության կողմից ներկայացված է ԱԺ-ի քննարկմանը

պատասխանատվության ենթարկելու հիմքերը				
7.4. Պարզել դատախազի օգնականի ինստիտուտը ներդնելու նպատակահարմարությունը	7.4.1. Կատարել ուսումնասիրություն՝ պարզելու համար դատախազի օգնականի ինստիտուտը ներդնելու անհրաժեշտության ու դատախազի օգնականի հնարավոր գործառնությունները	2013թ. մայիս	ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ գլխավոր դատախազություն	Կատարված ուսումնասիրության արդյունքներով ներկայացվել են համապատասխան առաջարկներ՝ դատախազի օգնականի ինստիտուտը ներդնելու նպատակահարմարության վերաբերյալ
	7.4.2. Ուսումնասիրության արդյունքների հիման վրա կատարել օրենսդրական փոփոխություններ (ըստ անհրաժեշտության)	2013թ. սեպտեմբեր	ՀՀ գլխավոր դատախազություն, ՀՀ արդարադատության նախարարություն	Օրենքի նախագիծը ՀՀ կառավարության կողմից ներկայացված է ԱԺ-ի քննարկմանը (ըստ անհրաժեշտության)
7.5. Բարելավել տեղեկատվական և հաղորդակցային տեխնոլոգիաների ոլորտում դատախազության կարողությունները	7.5.1. Ներդնել դատախազական գործունեության արդյունքների մատչելի հաշվառումն ու վերլուծությունն ապահովող «Դատախազի աշխատանքի մասին» վիճակագրության վարման էլեկտրոնային կառավարման համակարգչային համակարգ	2013-2016թթ. (շարունակական)	ՀՀ գլխավոր դատախազություն	Վիճակագրության վարման էլեկտրոնային կառավարման համակարգչային համակարգն անցել է փորձարկումը և ներդրված է
	7.5.2. Ներդնել դատախազությունում արխիվից օգտվելու մատչելիությունն ապահովող արխիվի վարման էլեկտրոնային կառավարման համակարգչային համակարգ	2013-2016թթ. (շարունակական)	ՀՀ գլխավոր դատախազություն	Դատախազության արխիվի վարման էլեկտրոնային կառավարման համակարգչային համակարգն անցել է փորձարկումը և ներդրված է
	7.5.3. Իրականացնել տեղեկատվական և հաղորդակցային տեխնոլոգիաների ոլորտում դատախազների կարողությունների բարելավմանն ուղղված շարունակական	2013-2016 թթ. (շարունակական)	Դատախազների վերապատրաստում իրականացնող հաստատություն	Դատախազները տիրապետում են հաղորդակցային տեխնոլոգիաների ոլորտում անհրաժեշտ գիտելիքների

	վերապատրաստումներ			
7.6. Ուսումնասիրել պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության դատախազական գործառույթի բնագավառում միջազգային փորձը՝ ըստ անհրաժեշտության նախատեսելով դրա արդյունավետության բարձրացմանն ուղղված միջացառումներ	7.6.1. Ուսումնասիրության արդյունքների հիման վրա կատարել օրենսդրական փոփոխություններ (ըստ անհրաժեշտության)	2013թ. սեպտեմբեր	ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ գլխավոր դատախազություն	Օրենքի նախագիծը ՀՀ կառավարության կողմից ներկայացված է ԱԺ-ի քննարկմանը
7.7. Առանձին իրավական կարգավորման ենթարկել դատախազության աշխատակազմում պետական ծառայությունը	7.7.1. Մշակել «Դատախազական ծառայության մասին» ՀՀ օրենքի նախագիծ	2012թ. նոյեմբեր	ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ գլխավոր դատախազություն	Օրենքի նախագիծը ՀՀ կառավարության կողմից ներկայացված է ԱԺ-ի քննարկմանը
7.8. Ապահովել դատախազի կողմից իր լիազորությունների շրջանակում տրված օրինական պահանջների պարտադիր կատարումը	7.8.1 . Փոփոխություններ կատարել «Դատախազության մասին» ՀՀ օրենքում	2013թ. սեպտեմբեր	ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ գլխավոր դատախազություն	Օրենքի նախագիծը ՀՀ կառավարության կողմից ներկայացված է ԱԺ-ի քննարկմանը
7.9. Ուսումնասիրել հանցավորության դեմ պայքարում իրավապահ մարմինների գործողությունների համակարգման կազմակերպչ-իրավական կառուցակարգերը՝ ըստ անհրաժեշտության համապատասխան փոփոխություններ կատարելով «Դատախազության մասին» ՀՀ օրենքում	7.9.1. Ուսումնասիրության արդյունքների հիման վրա կատարել օրենսդրական փոփոխություններ (ըստ անհրաժեշտության)	2013թ. սեպտեմբեր	ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ գլխավոր դատախազություն	Օրենքի նախագիծը ՀՀ կառավարության կողմից ներկայացված է ԱԺ-ի քննարկմանը

8. ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ, ԼՈՏԱՐԱԿԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՌԵԳԻՍՏՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՉՐԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍԻՋՈՅԱՌՈՒՄՆԵՐ				
Նպատակ-խնդիր	Գործողություն	Գործողության	Պատասխանատու	Օբյեկտիվ վերստուգելի

		կատարման վերջնաժամկետ	մարմին	չափանիշ
8.1. Կատարելագործել և խթանել արբիտրաժի միջոցով վեճերի լուծման այլընտրանքային մեխանիզմները	8.1.1. Իրականացնել արբիտրների ուսուցմանը, նրանց մասնագիտական որակների զարգացմանն ուղղված միջոցառումներ	2013-2016թթ. (շարունակական)	ՀՀ արդարադատության նախարարություն	Արբիտրների ուսուցմանը, նրանց մասնագիտական որակների զարգացմանն ուղղված տարեկան առնվազն մեկ միջոցառում է իրականացվել
	8.1.2. Դատավորների վերապատրաստման ծրագրերում ներառել արբիտրաժի հետ հարաբերություններին վերաբերող թեմատիկ դասընթացներ	2013-2016թթ. (շարունակական)	ՀՀ դատական դեպարտամենտ, ՀՀ արդարադատության նախարարություն	Արբիտրաժի ոլորտում գործեր քննող բոլոր դատավորներն անցել են վերապատրաստում
	8.1.3. Ուսումնասիրել արբիտրների որակավորման կամավոր հավաստման, արբիտրների կողմից էթիկայի կանոնների պահպանման նկատմամբ վերահսկողության ուժեղացմանն ուղղված կառուցակարգերի ներդրման հնարավորությունները՝ միջազգային փորձին համահունչ	2014թ. դեկտեմբերի	ՀՀ արդարադատության նախարարություն	Համապատասխան կառուցակարգերը ներդրված են
	8.1.4. Մշակել արբիտրների էթիկայի կանոններ և արբիտրաժում վարույթի տիպային կանոններ	2014թ. մայիս	ՀՀ արդարադատության նախարարություն	Արբիտրների էթիկայի և արբիտրաժում վարույթի տիպային կանոնները մշակված են
8.2. Ուսումնասիրել առաջին ատյանի դատարանների կողմից քաղաքացիական գործերը միջնորդ-հաշտարարներին հասցեագրելու ինստիտուտի ներդրման միջազգային փորձը և հեռանկարները	8.2.1. Կատարել ուսումնասիրություն՝ պարզելու համար առաջին ատյանի դատարանների կողմից քաղաքացիական գործերը միջնորդ-հաշտարարներին հասցեագրելու ինստիտուտի ներդրման նպատակահարմարությունը և մեխանիզմները	2014թ. դեկտեմբեր	ՀՀ արդարադատության նախարարություն	Միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքում կատարվել են միջնորդ-հաշտարարության ինստիտուտի ներդրման առաջարկներ և օրենքի նախագիծը ՀՀ կառավարության կողմից ներկայացվել է ԱԺ-ի քննարկմանը (ըստ անհրաժեշտության)

	8.2.2. Մշակել միջնորդ-հաշտարարության իրականացման օրենսդրական հիմքերը (ըստ անհրաժեշտության)	2015թ. դեկտեմբեր	ՀՀ արդարադատության նախարարություն	Օրենքի նախագիծը ՀՀ կառավարության կողմից ներկայացված է ԱԺ-ի քննարկմանը (ըստ անհրաժեշտության)
	8.2.3. Խթանել միջնորդ-հաշտարարների էթիկայի և հաշտարարության իրականացման ընթացակարգային տիպային կանոնների մշակումը	2016թ. մայիս	ՀՀ արդարադատության նախարարություն	Միջնորդ-հաշտարարների էթիկայի և հաշտարարության իրականացման ընթացակարգային (տիպային) կանոնները մշակված են
	8.2.4. Խթանել միջնորդ-հաշտարարների մասնագիտական պատրաստման ծրագրերի ներդրումը	2016թ. (շարունակական)	ՀՀ արդարադատության նախարարություն	Առնվազն մեկ հաստատության կողմից իրականացվում է միջնորդ-հաշտարարների մասնագիտական պատրաստման ծրագիր
8.3. Նոտարիատում ներդնել էլեկտրոնային նոտարի համակարգը և մեկ պատուհանի սկզբունքը	8.3.1. Իրականացնել էլեկտրոնային կառավարման համակարգչային համակարգի ծրագրային և տեխնիկական ապահովումը	2013թ. դեկտեմբեր	ՀՀ արդարադատության նախարարություն	Էլեկտրոնային կառավարման համակարգչային համակարգի ծրագրային և տեխնիկական ապահովումն իրականացված է
	8.3.2. Առանձին նոտարական գրասենյակներում փորձարկել էլեկտրոնային կառավարման համակարգչային համակարգն ու վերացնել ծրագրային թերությունները	2014թ. ապրիլ	ՀՀ արդարադատության նախարարություն	Էլեկտրոնային կառավարման համակարգչային համակարգի փորձարկման արդյունքում ի հայտ եկած ծրագրային թերությունները վերացված են
	8.3.3. Էլեկտրոնային կառավարման համակարգչային համակարգը կիրառել բոլոր նոտարական գրասենյակներում	2014թ. դեկտեմբեր	ՀՀ արդարադատության նախարարություն	Էլեկտրոնային կառավարման համակարգչային համակարգը կիրառվում է բոլոր նոտարական գրասենյակներում
8.4. Զարգացնել քաղաքացիական կացության ակտերի գրանցման էլեկտրոնային համակարգը	8.4.1. Ապահովել քաղաքացիական կացության ակտերի գրանցման էլեկտրոնային բազայի թվայնացումը	2014-2016թթ. (շարունակական)	ՀՀ արդարադատության նախարարություն	Քաղաքացիական կացության ակտերի գրանցման ամբողջ բազան թվայնացված է
	8.4.2. Ապահովել քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններում գրառվող անհատական	2014թ. սեպտեմբեր	ՀՀ արդարադատության նախարարություն	Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններում գրառվող

	տվյալների գաղտնիության պահպանությունը			անհատական տվյալների գաղտնիությունն ապահովված է
	8.4.3. Գործարկել քաղաքացիական կացության ակտերի գրանցման էլեկտրոնային համակարգը	2014թ. սեպտեմբեր	ՀՀ արդարադատության նախարարություն	Քաղաքացիական կացության ակտերի գրանցման էլեկտրոնային համակարգը գործում է
8.5. Ֆիզիկական և իրավաբանական անձանց մեկ պատուհանի սկզբունքով կենտրոնացված ծառայությունների մատուցում՝ հիմնելով հանրային ռեգիստրների վարման (գրանցման) միասնական սպասարկման կենտրոններ	8.5.1. Ընդունել «Հանրային ռեգիստրների վարման (գրանցման) միասնական սպասարկման կենտրոնների ներդրման հայեցակարգի մասին» ՀՀ կառավարության որոշում	2013թ. մարտ	ՀՀ արդարադատության նախարարություն	Հայեցակարգը հաստատված է ՀՀ կառավարության որոշմամբ
	8.5.2. Իրականացնել համապատասխան ծրագրային ապահովում, որը հնարավորություն կտա միասնական միջերեսի միջոցով միանալ և տեղեկատվություն փոխանակել գործող տվյալների բազաների հետ	2014թ. մայիս	ՀՀ արդարադատության նախարարություն	Համապատասխան ծրագրային ապահովումը պատրաստվել և փորձարկվել է
	8.5.3. Մարզերում աստիճանաբար շահագործման հանձնել վերանորոգված միասնական սպասարկման կենտրոններ	2015 թ. սեպտեմբեր	ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ տարածքային կառավարման նախարարություն, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե, ՀՀ ոստիկանություն	Առնվազն 3 մարզերում շահագործման է հանձնվել վերանորոգված միասնական սպասարկման կենտրոն

9. ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱՌՍՈՒՑՄԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ				
Նպատակ-խնդիր	Գործողություն	Գործողության կատարման վերջնաժամկետ	Պատասխանատու մարմին	Օբյեկտիվ վերստուգելի չափանիշ
9.1. Ապահովել իրավական համաուսուցման և համադաստիարակու-	9.1.1. Ստեղծել միջգերատեսչական հանձնաժողով՝ բոլոր կրթական չափո-	2013թ. սեպտեմբեր	ՀՀ արդարադատության	Միջգերատեսչական հանձնաժողովը ստեղծված է

թյան պետականորեն ընդունված և նպատակայնորեն գործող համակարգի առկայությունը	րոշիչները, հանրակրթական և հիմնական մասնագիտական կրթական ծրագրերը՝ նախնական, միջին, բարձրագույն և հետբուհական մակարդակներում վերանայելու համար		նախարարություն, ՀՀ կրթության և գիտության նախարարություն	
9.2. Բարձրացնել միջին և բարձրագույն մասնագիտական իրավաբանական կրթության որակը և իրավաբանական կրթությանը ներկայացվող պահանջները	9.2.1. Նախատեսել արդարադատության ոլորտի միջնակարգ մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկ և դրան համապատասխան մշակել կրթական ծրագրեր և չափորոշիչներ	2014թ. մարտ	ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ կրթության և գիտության նախարարություն	Արդարադատության ոլորտի միջնակարգ մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկը և դրան համապատասխան կրթական ծրագրերը և չափորոշիչները սահմանված են
	9.2.2. Մշակել իրավաբանական կրթության բարեփոխման կառավարական ծրագիր	2014թ. փետրվար	ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ կրթության և գիտության նախարարություն	Ծրագիրը մշակված և ընդունված է
	9.2.3. Մշակել իրավական համաուսուցման և կրթության հարցերին վերաբերող համապատասխան նորմատիվ իրավական ակտեր	2014թ. սեպտեմբեր	ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ կրթության և գիտության նախարարություն	Համապատասխան նորմատիվ իրավական ակտերը մշակվել են և ներկայացվել դրանք ընդունող մարմիններ

10. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ և ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Նպատակ-խնդիր	Գործողություն	Գործողության կատարման վերջնաժամկետ	Պատասխանատու մարմին	Օբյեկտիվ վերստուգելի չափանիշ
10.1. Ապահովել իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագրի իրականացման թափանցիկությունը	10.1.1. Հանրության շրջանում տարածել տեղեկատվություն իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագրի վերաբերյալ	2012թ. հուլիս-2016թ. (շարունակական)	Աշխատանքային խումբ	Իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագրի վերաբերյալ տեղեկատվությունը տարածվել է զանգվածային լրատվության տարբեր միջոցներով

	10.1.2. Հրապարակել կիսամյակային հաշվետվություն՝ ծրագրի իրականացման ընթացքի վերաբերյալ	Յուրաքանչյուր տարվա հունիս և դեկտեմբեր	Աշխատանքային խումբ	Հաշվետվությունը հրապարակված է
	10.1.3. Պատասխանատու մարմնի կողմից, ըստ անհրաժեշտության, ստեղծել աշխատանքային խմբեր	2012թ. հուլիս-2016թ. (շարունակական)	Պատասխանատու մարմին	Աշխատանքային խմբերն ըստ անհրաժեշտության ստեղծված են:

ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
Ղ Ե Կ Ա Վ Ա Ր

Վ. ՍԱՐԳՍՅԱՆ

Կ Ա Ջ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ
ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ 2012-2016 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ

Հրայր ԹՈՎՄԱՍՅԱՆ	Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար (աշխատանքային խմբի ղեկավար)
Արման ՄԿՐՏՈՒՄՅԱՆ	Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի նախագահ (համաձայնությամբ)
Աղվան ՀՈՎՍԵՓՅԱՆ	Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազ
Վաչե ԳԱԲՐԻԵԼՅԱՆ	Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարար
Գեորգի ԿՈՒՏՈՅԱՆ	Հայաստանի Հանրապետության Նախագահի օգնական
Գրիգոր ՄՈՒՐԱԴՅԱՆ	Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի առաջին տեղակալ
Ռուբեն ՍԱՀԱԿՅԱՆ	Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահ (համաձայնությամբ):

ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
Ղ Ե Կ Ա Վ Ա Ր

Վ. ՍԱՐԳՍՅԱՆ